ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ԱԶԴԱԳԻՐ

Թողարկողի ֆիրմային անվանումը՝	**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ վարկային կազմակերպություն**
Կազմակերպա-իրավական ձևը՝	**Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերություն**
Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ՝	**0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122 հեռ. (+374 10) 51 81 81, էլ. փոստ՝ info@firstmortgage.am ինտերնետային կայք՝ www.firstmortgage.am**

	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Արժեթղթերի դասը՝	**Անվանական,արժեկտրոնային պարտատոմս**	**Անվանական,արժեկտրոնային պարտատոմս**
Արժեթղթերի ձևը՝	**ոչ փաստաթղթային**	**ոչ փաստաթղթային**
Թողարկման արժույթը	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**
Արժեթղթերի քանակը՝	**10,000**	**20,000**
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	**10,000 (տասը հազար) ՀՀ դրամ**	**25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար**
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	**100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ**	**500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար**
Արժեկտրոնային եկամտաբերություն՝	**10.5% տարեկան**	**6.5% տարեկան**
Շրջանառության ժամկետը՝	**24 ամիս**	**24 ամիս**
Տեղաբաշխման ձևը՝	**Երաշխավորված**	**Երաշխավորված**
Ապահովվածությունը	**Ապահովված**	**Ապահովված**

Տեղաբաշխողի ֆիրմային անվանումը՝	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ**
Կազմակերպա-իրավական ձևը՝	**Բաց բաժնետիրական ընկերություն**
Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ՝	**0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Պուշկինի 19 հեռ. (+374 10) 59 23 23, էլ. փոստ՝ araratbank@araratbank.am ինտերնետային կայք՝ www.araratbank.am**

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ»:

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
օրը 30 ամիսը 11 տարին 2017

ՀՀ ԿԲ նախագահի
29/11/2017 1/9432Ա

Թողարկող	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	Տեղաբաշխող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6
1.1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ 6
1.2. Թողարկողի և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր 10
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 15
1.4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ 16
1.5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 17
1.6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները 18
1.7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 20
ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22
2.1. Ռիսկային գործոններ 22
2.2. Հիմնական տեղեկատվություն 24
2.3. Տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ 24
2.4. Պարտատոմսերի թողարկման, ապահովման միջոցների ռեգիստրի վարման, գրանցման և հսկողության նկարագրություն 34
2.5. Պարտատոմսերի ապահովման միջոցների հսկող 36
2.6. Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի նկարագրություն 37
2.7. Առաջարկի ժամկետները և պայմանները 38
2.8. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 42
2.9. Լրացուցիչ տեղեկատվություն 43
ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 44
3.1. Անկախ աուդիտորները 44
3.2. Ռիսկային գործոններ 44
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին 53
3.4. Բիզնեսի նկարագիրը 54
3.5. Թողարկողի կառուցվածքը 58
3.6. Հիմնական միջոցները 59
3.7. Բաժնետիրական կապիտալ 59
3.8. Զարգացման վերջին միտումները 59
3.9. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 60
3.10. Թողարկողի կառավարման մարմինները 62
3.11. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը 64
3.12. Հսկող անձինք 67
3.13. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 67
3.14. Էական պայմանագրերը 67
3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 68
3.16. Այլ տեղեկատվություն 68

Առաջին Հիփոթեքային Բանկ	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների ցուցանիշներ
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Թողարկողի 2017թ. երրորդ եռամսյակի հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Թողարկողի Ֆինանսական հաշվետվություններ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Թողարկողի Ֆինանսական հաշվետվություններ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Թողարկողի կանոնադրություն
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Թողարկողի գրանցման վկայական
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Թողարկողի Ընդհանուր Ժողովի որոշում ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման վերաբերյալ
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Պարտատոմսերի տեղաբաշխման պայմանագիր
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Կարգավորվող շուկայում Պարտատոմսերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր
ՀԱՎԵԼՎԱԾ 10. Պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողության պայմանագիր
ՀԱՎԵԼՎԱԾ 11. Պարտատոմսերի ռեեստրի վարման պայմանագրեր
ՀԱՎԵԼՎԱԾ 12. Հսկողի հավաստագրեր
ՀԱՎԵԼՎԱԾ 13. Լիազորագիր
ՀԱՎԵԼՎԱԾ 14. Վճարման անդորրագիր

ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ	ԱՋԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք[1] ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

ստորագրող անձինք՝

Նիշան Աթինիզյան[1]	**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ Տնօրենների Խորհրդի նախագահ**		23.11.2017թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Աթանեսյան	**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ, գլխավոր տնօրեն**		23.11.2017
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գայանե Կորեկյան	**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ,**		23.11.2017
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աշոտ Օսիպյան	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		23/11/2017
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

[1] Լիազորագիրը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 13-ում

Առաջին Հիփոթեքային	ԱՋԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Դավիթ Աթանեսյան	«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ, գլխավոր տնօրեն		23.11.2017
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Թողարկող կամ Կազմակերպություն) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.firstmortgage.am, www.araratbank.am:

2014, 2015, 2016 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուր է հանդիսանում տարեկան աուդիտորական եզրակացությունը, իսկ մնացած տվյալների ներկայացման աղբյուր են հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող հաշվետվությունները:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

ռուսերեն՝ Обшество с Ограниченной Ответственностью Универсальная Кредитная Организация “Первая Ипотечная Компания”

անգլերեն՝ “First Mortgage Company” Universal Credit Organization Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՀԸ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ

ռուսերեն՝ ООО Универсальная Кредитная Организация «ПИК»

անգլերեն՝ “FMC” Universal Credit Organization LLC.

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 51 81 81, (+374 10) 51 89 89,

ֆաքս՝ (+374 10) 56 12 02,

էլ. փոստ՝ info@firstmortgage.am

ինտերնետային կայք՝ www.firstmortgage.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապվել Կազմակերպության մասնագետների հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 51 81 81:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004 թվականի ապրիլի 13-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2004 թվականի ապրիլի 13-ի թիվ 79Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 7 գրանցման վկայական (ՀԱՎԵԼՎԱԾ 6): Կազմակերպությունը սկսել է փաստացի գործունեություն ծավալել 2004 թվականի ապրիլի 20-ից:

Առաջին Հիփոթեքային Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում առաջին մասնագիտացված հիփոթեքային ընկերությունն է: Այն նպատակ ունի վարկավորել բնակարանների ձեռք բերումը և վերանորոգումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կազմակերպության առաքելությունն է բարձրորակ ծառայություններ մատուցելու միջոցով նպաստել հաճախորդների բնակարանային պայմանների բարելավմանը, օգնել հաճախորդներին ձեռք բերել իրենց նախասիրություններին համապատասխան անշարժ գույք:

Կազմակերպության նպատակն է բարձրորակ ծառայությունների և մասնագիտական խորհուրդների մատուցման միջոցով վարկավորման գործընթացը դարձնել դյուրին և հասանելի: Հնարավորություն տալ հաճախորդներին ստեղծել կյանքի նոր որակ՝ ձեռք բերելով նոր բնակարան:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1,000,000,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 20,000 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության սեփականատերերն են՝ Նիշան Աթինիզյան (35%), Մարգրիտ Աթինիզյան (35%) և Դավիթ Աթանեսյան (30%) (տվյալները ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 21.03.2017 թվականի դրությամբ):

Բիզնեսի համառոտ նկարագիրը

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն տրամադրում է հիփոթեքային վարկեր անհատներին Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վարկավորման գործընթացը Կազմակերպությունն իրականացնում է ինչպես սեփական կապիտալի, այնպես էլ ներգրավված միջոցների հաշվին: Կազմակերպությունը միջնաժամկետ և

երկարաժամկետ դրամական միջոցներ ներգրավելու նպատակով համագործակցում է Անդրծովյան Մասնավոր Ներդրումային կորպորացիայի (ԱՄՆԿ Ամերիկայի Միացյալ Նահանգների Գործակալություն, OPIC) հետ, մասնակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից վերաֆինանսավորվող հիփոթեքային ծրագրերին, ինչպես նաև փոխառություն է ներգրավում բաժնետերերից:

Կազմակերպությունն ունի 1 մասնաճյուղ և գլխամասային գրասենյակ, որտեղից իրականացնում է վարկավորում: 2017 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելը կազմել է շուրջ 7.4 մլրդ ՀՀ դրամ՝ 2016թ. տարեվերջի նկատմամբ աճելով 6%-ով:

Ստորև ներկայացվում է Կազմակերպության ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.


հազ. ՀՀ դրամ

	30.09.2017[2]	31.12.2016	31.12.2015	31.12.2014
Ակտիվներ, այդ թվում՝	***8,279,847***	***8,596,897***	***7,604,941***	***7,048,279***
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	***7,701,606***	***7,565,282***	***6,913,886***	***6,313,026***
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	7,365,291	6,979,097	6,865,784	6,309,346
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	332,635	582,505	44,422	0
Ներդրումներ ֆինանսական ակտիվներում	3,680	3,680	3,680	3,680
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	**93%**	**88%**	**91%**	**90%**

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

[2] Տվյալ սյունակում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ	**ԱՁԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող



	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

1.2. Թողարկողի և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկեր

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի և պարտատոմսերի հետ կապված ռիսկերի հետ:

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Կազմակերպությունը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գործընկերոջ, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը:

Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով Կազմակերպությունը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար կարող եք օգտվել Թողարկողի ինտերնետային www.firstmortgage.am կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից:

Վարկային ռիսկը Կազմակերպության նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց (վարկառուներ, փոխառուներ) կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել Կազմակերպության կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Թողարկողի կարևորագույն խնդիրներից է:

Կազմակերպության վարկային պորտֆելը գրեթե ամբողջությամբ ապահովված է անշարժ գույքի գրավներով, և Կազմակերպության վարկավորման կարգի համաձայն, հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 75% վարկ/գրավ հարաբերակցության պահպանմամբ:

Իրացվելիության ռիսկ, երբ Կազմակերպության ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման, ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության, օրենսդրական

փոփոխությունների, նորմատիվային դաշտի փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով դժվարություններ կարող են առաջանալ Կազմակերպության ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու ժամանակ, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու հետ կապված:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացված և կայուն կառուցվածքը, որակյալ և արագ իրացվելի ակտիվների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

2017թ. սեպտեմբերի վերջի դրությամբ Կազմակերպությունը զուտ դրամական արտահոսք ունի 3-12 ամիս ժամկետային զամբյուղում, սակայն կուտակային իրացվելիությամբ մինչև 3 ամիսների դրամական զուտ ներհոսքը բավարարում է իրացվելության պահանջվող մակարդակը:

Տոկոսադրույքի ռիսկը, երբ շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, տոկոսային եկամուտների և ի վերջո նաև կապիտալի վրա:

Կազմակերպության դրամական հոսքերի վերլուծությունն ուղղված է բացահայտելու այն ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում առկա տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որի հետևանքով էլ ֆինանսական ակտիվի ապագա դրամական հոսքերը կարող են տատանվել, մասնավորապես, տոկոսադրույքներում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում կարող են փոփոխվել դրամական միջոցների հոսքերի իրական արժեքը:

Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը (վերագնորոշման ռիսկ), որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2017թ. սեպտեմբերի 30-ի, 2016թ. ու 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

հազար ՀՀ դրամ

	30.09.2017[3]	31.12.2016	31.12.2015
100 բկ զուգահեռ նվազում	6,121	4,625	2,373
100 բկ զուգահեռ աճ	(6,121)	(4,625)	(2,373)

Արտարժութային ռիսկը սահմանվում է որպես փոխարժեքի փոփոխության հետևանքով Կազմակերպության ֆինանսական արդյունքների և կապիտալի վրա ունեցած բացասական ազդեցության ռիսկ: Քանի որ Կազմակերպության ակտիվները և պարտավորություններն

[3] Տվյալ սյունակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում:

արտահայտված են մեկից ավելի արժույթներով, Կազմակերպության վրա փոխարժեքի փոփոխությունն ունենում է հետևյալ ազդեցությունները՝

- Արտարժութային ռիսկ, որը չափվում է բաց արտարժութային դիրքով և արտարժութային ժամկետային ճեղքվածքով (FX Maturity GAP),
- Կապիտալի համարժեքության գործակցի նվազում՝ ՀՀ դրամի արժեզրկման դեպքում, քանի որ Կազմակերպության կապիտալն արտահայտված է ՀՀ դրամով, իսկ ակտիվները հաճախ արտահայտված են այլ արժույթներով,

ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով վարկերի որակի վատացման հետ կապված հնարավոր վնասները փոխհատուցելու նպատակով Կազմակերպությունը պահպանում է ԱՄՆ դոլարի դրական դիրք վերջին մի քանի տարիների ընթացքում: 2016թ. վերջի դրությամբ ԱՄՆ դոլարի դրական դիրքը կազմել է 468 մլն դրամ կամ կապիտալի 34%:

Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով:
- Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը:
- Սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա, մասնավորապես կարող է ուղեկցվել Կազմակերպության կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր

ազդեցությունն է ունենում Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Գործառնական ռիսկը այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Կազմակերպությունը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ, Թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանն՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Կազմակերպությունը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս

նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ շուկա ստեղծողի (market maker) միջոցով ապահովել պարտատոմսերի իրացվելիությունը: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողները իր կողմից թողարկված պարտատոմսերը դրանց շրջանառության ժամկետի ընթացքում ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար ֆինանսապես շահավետ գնով:

Այս թողարկումը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի առաջին թողարկումն է Հայաստանում, ինչը կարող է էլ ավելի մեծացնել պարտատոմսերի իրացվելիության ռիսկը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և արտարժույթի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Տոկոսադրույքի փոփոխությունը նաև կարող է հանգեցնել պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի վաղաժամկետ մարումների ռիսկ, ինչը նույնպես կազդի ապահովման միջոցների համարժեքության վրա:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Միաժամանակ, ներդրողները կրում են նաև պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի և Թողարկողի պարտավորությունների միաժամանակ չկատարման հետևանքով կորուստներ կրելու վտանգ: Ապահովված հիփոթեքային պարտատոմսերը 01.11.2017թ. դրությամբ առնվազն 150%-ով ապահովված են հիփոթեքային վարկերով: Այնուամենայնիվ, եթե վարկերի մեծ մասը դառնան ժամկետանց, գրավներն արժեզրկվեն, իսկ Թողարկողը միաժամանակ դառնա անվճարունակ, նշված վարկերը հնարավոր է չփոխարինվեն այլ ակտիվներով և ներդրողն այդքան չափով վնասներ կրի:

Անշարժ գույքի գների փոփոխության ռիսկը, անշարժ գույքի գների փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների վնաս կրելու հավանականությունն է: Ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի գրավների արժեքների անկումը կարող է հանգեցնել որոշ վարկերի գծով մարումների ժամկետանցման կամ դեֆոլտի: Դա, իր հերթին, կնվազեցնի ռեգիստրում գրանցված ապահովման միջոցների համարժեքության ցուցանիշը, իսկ եթե Թողարկողը միաժամանակ դառնա անվճարունակ, ապա կհանգեցնի նաև կորուստների: Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի շուկայական արժեքի աճը, մյուս կողմից, կնվազեցնի վարկ/գրավ հարաբերակցության գործակիցները, հետևաբար Վարկեր ստացած փոխառուների համար կարող են մատչելի դառնալ ավելի ցածր տոկոսադրույքներով ֆինանսական միջոցների ձեռքբերման այլընտրանքային աղբյուրներ, ինչը կարող է հանգեցնել անշարժ գույքի գրավով ապահովված

Վարկերի վաղաժամկետ մարման մակարդակի բարձրացմանը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է որդեգրած ռազմավարությանը համաձայն: Կազմակերպության գործունեությունը մշտապես գտնվում է Կազմակերպության Տնօրենների խորհրդի և գործադիր տնօրենի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Կազմակերպության կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2016 թվականի ընթացքում Կազմակերպության ակտիվներն աճել են 15%-ով և կազմել 8.6 մլրդ ՀՀ դրամ, ինչը հիմնականում ուղղվել է բանկերում տեղաբաշխված միջոցների ավելացմանը և հաճախորդների վարկավորմանը: Կազմակերպության ընդհանուր կապիտալը 2016 թվականի ընթացքում աճել է 22%-ով և կազմել 1.4 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորություններն աճել են 14%-ով և կազմել՝ 7.2 մլրդ ՀՀ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է դրամային շուկայից ստացված փոխառությունների աճով: 2016 թվականի ընթացքում Կազմակերպության վարկային պորտֆելն աճել է 247 մլն ՀՀ դրամով կամ 4%-ով:

2017 թվականի առաջին ինը ամիսների ընթացքում Կազմակերպության ակտիվները նվազել են 4%-ով՝ սեպտեմբերի վերջի դրությամբ կազմելով 8.3 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները նվազել են 6%-ով՝ կազմելով 6.8 մլրդ ՀՀ դրամ, կապիտալն աճել է 8%-ով՝ կազմելով 1.5 մլրդ ՀՀ դրամ: 2017 թվականի առաջին ինը ամիսների կուտակված զուտ շահույթը կազմել է 110 մլն ՀՀ դրամ[4]:

2016 թվականի ընթացքում Կազմակերպությունը ստացել է 132 մլն ՀՀ դրամի զուտ շահույթ: Կապիտալի շահութաբերության ցուցանիշը վերջին երկու տարիներին կայունացել է 11% շուրջ: Կազմակերպությունը ոչ միայն նպատակ է հետապնդում ամրապնդել շուկայի մասնաբաժինը, այլ նաև գործող, ինչպես նաև նոր ներդրվող պրոդուկտների մրցունակության բարձրացմամբ նվաճել նաև շուկայի նոր մասնաբաժին:

Կազմակերպության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը 2017 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1.0 մլրդ ՀՀ դրամ, որը բաղկացած է 20,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2017թ. սեպտեմբերի 30-

[4] Տվյալ պարբերությունում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Առաջին Հիփոթեքային Բանկ	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ի դրությամբ Կազմակերպության բաժնետիրական կապիտալը գրավադրված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց:

2017 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը, Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Ազդագրի գրանցման ներկայացման օրվա դրությամբ Թողարկողի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Կազմակերպության դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են նյութական, բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության ֆինանսական վիճակի կամ Կազմակերպության զարգացման հեռանկարների վրա:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Կազմակերպության ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Կազմակերպության կազմակերպական կառուցվածքը արդիական և ժամանակակից բիզնեսի վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որի հետևանքով հնարավոր են Թողարկողի կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, որոնք միտված կլինեն Կազմակերպության գործունեության բարելավմանը և արդյունավետության ու շահութաբերության բարձրացմանը:

1.4. Թողարկողի աուդիտ իրականացնող անձ

Կազմակերպության 2012, 2013 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից, իսկ 2014, 2015 և 2016 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.grantthornton.am:

Կազմակերպության գործադիր տնօրեն-բաժնետեր է Գագիկ Գյուլբուդաղյանը:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1, հեռ.՝ +374 10 56-67-62, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.kpmg.am:

Կազմակերպության գործադիր տնօրենն է Տիգրան Գասպարյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները ներկայացված են կից ՀԱՎԵԼՎԱԾ 3-4-

Առաջին Հիփոթեքային Բանկ	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ում: Վերջին 5 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5. Թողարկողի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունով սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ Ընդհանուր ժողով,
- ✓ Տնօրենների խորհուրդ,
- ✓ Գլխավոր տնօրեն:

Կազմակերպության Ընդհանուր ժողովը կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Կազմակերպության Տնօրենների խորհուրդն ընտրվում է Բաժնետերերի որոշմամբ՝ Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան: Գլխավոր տնօրենը կառավարում են Վարկային կազմակերպության առօրյա ընթացիկ գործունեությունը:

Կազմակերպության Տնօրենների Խորհուրդը բաղկացած է երեք անդամներից.

Հ/հ	**Անուն Ազգանուն**	**Պաշտոն**	**Փորձառությունը**
1	Նիշան Աթինիզյան	Տնօրենների խորհրդի նախագահ	13 տարի
2	Դավիթ Աթանեսյան	Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ, գլխավոր տնօրեն	13 տարի
3	Գայանե Կորեկյան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ	24 տարի

Կազմակերպության արդյունավետության ստուգումը յուրաքանչյուր տարի իրականացվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից: Կազմակերպության Ընդհանուր ժողովը՝ ելնելով անհրաժեշտությունից կարող է ստեղծել նաև վերստուգիչ հանձնաժողով/ վերստուգող:

Կազմակերպությունը 2017 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ունի 19 աշխատակից:

Կազմակերպության սեփականատերերն են՝ Նիշան Աթինիզյան (35%), Մարգրիտ Աթինիզյան (35%) և Դավիթ Աթանեսյան (30%) (տվյալները ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 21.03.2017 թվականի դրությամբ):

	ԱՋԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

1.6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

	Առաջին տրանշ	**Երկրորդ տրանշ**
Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	եռամսյակային	եռամսյակային
Արժեկտրոնի տոկոսադրույք՝	Ֆիքսված՝ տարեկան 10.5% (տասն ամբողջ հինգ տասնորդական)	Ֆիքսված՝ տարեկան 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական)
Պարտատոմսերի թողարկման արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Արժեկտրոնի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, որը ենթակա է վճարման ՀՀ դրամով՝ արժեկտրոնի վճարումը կատարելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում հրապարակված փոխարժեքով:
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի	ոչ փոխարկելի
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ	500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը՝	10,000 (տասը հազար) հատ	20,000 (քսան հազար) հատ
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝	ՀՀ ԿԲ կողմից սույն ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում, թողարկման և տեղաբաշխման օրը համընկնում է	ՀՀ ԿԲ կողմից սույն ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում, թողարկման և տեղաբաշխման օրը համընկնում է
Պարտատոմսերի շրջանառության	24 (քսանչորս) ամիս	24 (քսանչորս) ամիս

Առաջին Հիփոթեքային Բանկ	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

ժամկետը՝

Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	Ապահովված	Ապահովված

Ազդագիրը տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակվելու է Կազմակերպությանև Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.firstmortgage.am, www.araratbank.am:

Կազմակերպության անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են նոր հիփոթեքային վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (Այսուհետ՝ Բորսա) տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.nasdaqomx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրեն Բորսայի տարբեր անդամների կողմից առաջարկվող պայմանները՝ իրենց համար օպտիմալ տարբերակ գտնելու և իրենց կողմից աճուրդին մասնակցելու գործընթացների վերաբերյալ առավել սպառիչ և մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

Թողարկող	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	Տեղաբաշխող

1.7. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2017 թվական 3-րդ եռամսյակ[5]	2016 թվական	2015 թվական
Զուտ շահույթ	109,544	132,155	123,936
Սեփական կապիտալի միջին մեծություն[6]	1,442,117	1,224,807	1,088,634
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	10.1%	10.8%	11.4%
Զուտ շահույթ	109,544	132,155	123,936
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	8,398,889	7,712,466	7,120,183
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	1.7%	1.7%	1.7%
Զուտ շահույթ	109,544	132,155	123,936
Գործառնական եկամուտ	319,585	381,933	391,056
Զուտ շահույթի մարժա (NPM), %	34.3%	34.6%	31.7%
Գործառնական եկամուտ	319,585	381,933	391,056
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	8,398,889	7,712,466	7,120,183
Ակտիվների օգտագործման գործակից (AU)	5.1%	5.0%	5.5%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	8,398,889	7,712,466	7,120,183
Սեփական կապիտալի միջին մեծություն	1,442,117	1,224,807	1,088,634
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.8	6.3	6.5
Զուտ տոկոսային եկամուտ	269,524	358,164	350,234
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	7,693,625	7,056,650	6,607,109
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	4.7%	5.1%	5.3%
Տոկոսային եկամուտ	641,283	845,973	803,497
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	7,693,625	7,056,650	6,607,109

[5] Տվյալ սյունակում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

[6] Աղյուսակում բոլոր միջին մեծությունները հաշվարկվել են տվյալ ժամանակահատվածում եռամսյակային տվյալների միջինացման միջոցով:

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	11.1%	12.0%	12.2%
Տոկոսային ծախսեր	371,759	487,809	453,263
Ծախսատար պարտավորություններ	6,916,152	6,441,605	6,010,747
Ծախսատարություն %	7.2%	7.6%	7.5%
Զուտ շահույթ	109,544	132,155	123,936
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	20,000	20,000	20,000
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	7.3	6.6	6.2
Սպրեդ	3.9%	4.4%	4.7%

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Արժեթղթերում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Կազմակերպության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնվում է, որ **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ**:

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը: Այս թողարկումը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի առաջին թողարկումն է Հայաստանում, ինչը կարող է էլ ավելի մեծացնել պարտատոմսերի իրացվելիության ռիսկը:

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Թողարկողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Քանի որ Կազմակերպությունը նախատեսում է թողարկել նաև ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսեր, որոնց ձեռք բերման վճարումները և մարումներն իրականացվելու են ԱՄՆ դոլարով, ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր իրենց դրամական միջոցները նշված պարտատոմսերում ներդրումներ կատարելու նպատակով ստիպված

կլինեն փոխարկել այլ արժույթներից ԱՄՆ դոլարի: Արտարժութային ռիսկ է առաջանում նաև արժեկտրոնների վճարման ժամանակ, քանի որ Երկրորդ տրանշի դեպքում արժեկտրոնը հաշվարկվում է արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ՀՀ ԿԲ հրապարակած փոխարժեքի հիման վրա, իսկ վճարումը տեղի է ունենում հաջորդ օրը, և մեկ օրվա մեջ հնարավոր է տեղի ունենա փոխարժեքի տատանում:

Վարկային ռիսկը պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի և թողարկողի պարտավորությունների միաժամանակ չկատարման հետևանքով ներդրողների կորուստներ կրելու վտանգն է: Ապահովված հիփոթեքային պարտատոմսերը 01.11.2017թ. դրությամբ առնվազն 150%-ով ապահովված են հիփոթեքային վարկերով: Այնուամենայնիվ, եթե վարկերի մեծ մասը դառնան ժամկետանց, գրավներն արժեզրկվեն, իսկ թողարկողը միաժամանակ դառնա անվճարունակ, նշված վարկերը հնարավոր է չփոխարինվեն այլ ակտիվներով և ներդրողն այդքան չափով վնասներ կրի:

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության. այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Տոկոսադրույքի փոփոխությունը կարող է հանգեցնել նաև պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի վաղաժամկետ մարումների ռիսկի, ինչը նույնպես կազդի ապահովման միջոցների համարժեքության վրա:

Անշարժ գույքի գների փոփոխության ռիսկը անշարժ գույքի գների փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների վնաս կրելու հավանականությունն է: Ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի գրավների արժեքների անկումը կարող է հանգեցնել որոշ վարկերի գծով մարումների ժամկետանցման կամ դեֆոլտի: Դա, իր հերթին, կնվազեցնի ռեգիստրում գրանցված ապահովման միջոցների համարժեքության ցուցանիշը, իսկ եթե Թողարկողը միաժամանակ դառնա անվճարունակ, ապա կհանգեցնի նաև կորուստների: Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի շուկայական արժեքի աճը, մյուս կողմից, կնվազեցնի վարկ/գրավ հարաբերակցության գործակիցները, հետևաբար վարկեր ստացած փոխառուների համար կարող են մատչելի դառնալ ավելի ցածր տոկոսադրույքներով ֆինանսական միջոցների ձեռքբերման այլընտրանքային աղբյուրներ, ինչը կարող է հանգեցնել անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի վաղաժամկետ մարման մակարդակի բարձրացմանը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Կազմակերպության ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման նպատակը լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումն է, և դրան հետևող տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են հիփոթեքային վարկավորմանը:

2.3. Տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

Առաջարկվող պարտատոմսերի թողարկումն իրականացվում է «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի» և «արժեթղթերի շուկայի» մասին ՀՀ օրենքների համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.1. Առաջարկվող պարտատոմսեր

	Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի ձևը՝	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը՝	10,000 (տասը հազար) հատ	20,000 (քսան հազար) հատ
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ	500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար
Պարտատոմսի գնի հաշվարկման բանաձև	Մեկ Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $P = \frac{A \cdot C}{4} \sum_{i=1}^{N} \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{400}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{A}{\left(1 + \frac{y}{400}\right)^{N-1+\tau}} \right]$ $\tau = \frac{DSN}{DCC}$ որտեղ՝ **P** - պարտատոմսի գինն է: **A** - պարտատոմսի անվանական արժեքը:	

	C - Տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է՝ Առաջին տրանշի համար՝ 0.105, իսկ Երկրորդ տրանշի համար՝ 0.065: **Y** - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է: **DSN** - գործարքի կատարման պահից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվն է: **DCC** - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի թիվն է: **N** - տվյալ պահին մնացած արժեկտրոնի վճարումների քանակն է, **i** – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից:	
Արժեկտրոնի տոկոսադրույք՝	Ֆիքսված՝ տարեկան 10.5% (տասն ամբողջ հինգ տասնորդական)	Ֆիքսված՝ տարեկան 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական)
Հերթական արժեկտրոնի հաշվարկման բանաձև	$Արժեկտրոն = \frac{A \cdot 10.5\%}{4}$ որտեղ՝ **A** - պարտատոմսի անվանական արժեքը:	$Արժեկտրոն = \frac{A \cdot 6.5\%}{4}$ որտեղ՝ **A** - պարտատոմսի անվանական արժեքը:
	Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների:	
Պարտատոմսերի տարեկան արդյունավետ եկամտաբերություն	$ՊՏԱԵ = (1 + C/4)^4 - 1 =$ **10.9%** որտեղ՝ **C** - Տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է 10.5%,	$ՊՏԱԵ = (1 + C/4)^4 - 1 =$ **6.7%** որտեղ՝ **C** - Տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է 6.5%,
Արժեկտրոնների կուտակման մեթոդը	Փաստացի/Փաստացի	
Արժեկտրոնի արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար, որը ենթակա է

		վճարման ՀՀ դրամով՝ արժեկտրոնի վճարումը կատարելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում հրապարակված փոխարժեքով:
Արժեկտրոնի վճարման ամսաթիվը	Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օր է հանդիսանում պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ և 24-րդ ամիսների համապատասխան օրերը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պարտատոմսերի արժեկտրոնների մարման և վճարման ամսաթվերը կլինեն նույնը: Կազմակերպության և/կամ Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում՝ www.firstmortgage.am, www.araratbank.am տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կհրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:	
Արժեկտրոն ստացողները	Անձինք, որոնք համապատասխան արժեկտրոնների վճարման ամսաթվին անմիջապես նախորդող՝ Պահառուի աշխատանքային օրվա վերջի դրությամբ գրանցված են Պահառուի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում: Պահառուից ստացված սեփականատերերի ռեեստրի քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների գծով վճարման ենթակա գումարի փոխանցման անհնարինության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է հաճախորդի կողմից:	

Առաջին Հիփոթեքային Ընկերություն	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ամսաթիվը	Թողարկողը առաջին և երկրորդ տրանշների տեղաբաշխումն իրականացնելու է նույն օրը: Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը տեղի կունենա ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի Ազդագրի գրանցումից մեկ ամսվա ընթացքում՝ Թողարկողի գլխավոր տնօրենի որոշմամբ: Այդ մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.firstmortgage.am և www.araratbank.am: Թողարկման և տեղաբաշխման օրերը համընկնում են:	
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝	24 (քսանչորս) ամիս	24 (քսանչորս) ամիս
Պարտատոմսերի մարման ամսաթիվ	Պարտատոմսերի տեղաբաշխման օրվան հաջորդող 24-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա մարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:	
Պարտատոմսերի մարում ստացողները	Անձինք, որոնք համապատասխան Պարտատոմսերի մարման ամսաթվին անմիջապես նախորդող՝ Պահառուի աշխատանքային օրվա վերջի դրությամբ գրանցված են Պահառուի կողմից վարվող Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում: Պահառուից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում Թողարկողը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցելու է նոտարի դեպոզիտ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը, ընդ որում, նոտարի դեպոզիտի ծառայության գումարը վճարվում/հատուցվում է հաճախորդի կողմից:	
Պարտատոմսերի մարման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի մարման արժեքը	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	Պարտատոմսերի ցուցակումից հետո՝ բացառապես	Պարտատոմսերի ցուցակումից հետո՝ բացառապես

	կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով	կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովման միջոցներ	Հիփոթեքային վարկեր, որոնց մայր գումարի մնացորդը 01.11.2017թ. դրությամբ կազմում է 152,631,944 ՀՀ դրամ: Մանրամասն տեղեկատվությունը ներառված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում	Հիփոթեքային վարկեր, որոնց մայր գումարի մնացորդը 01.11.2017թ. դրությամբ կազմում է 364,920,128 ՀՀ դրամ: Մանրամասն տեղեկատվությունը ներառված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում
Պարտատոմսերի ապահովման միջոցների հսկող	Էդգար Էվոյան, համաձայն Թողարկողի և Էդգար Էվոյանի միջև 30.10.2017թ. կնքված պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողության վերաբերյալ պայմանագրի (ՀԱՎԵԼՎԱԾ 10)	
Պարտատոմսերի Պահառու	Պարտատոմսերի պահառությունն իրականացնելու է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, համաձայն Թողարկողի ու ՀԿԴ-ի միջև «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջնորդությամբ (հաշվի օպերատոր) 2017 թվականի նոյեմբերի 13-ին կնքված թիվ 1 և թիվ 2 պայմանագրերի (ՀԱՎԵԼՎԱԾ 11):	
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 30.10.2017թ. կնքված պարտատոմսերի երաշխավորված եղանակով տեղաբաշխման վերաբերյալ պայմանագրի (ՀԱՎԵԼՎԱԾ 8):	
Տեղաբաշխման ձևը	Երաշխավորված	
Տեղաբաշխման գործընթացը	8,500 (ութ հազար հինգ հարյուր) հատ պարտատոմսերի դեպքում՝ Փակ (եվրոպական) աճուրդ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ միջոցով՝ համաձայն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:	18,000 (տասնութ հազար) հատ պարտատոմսերի դեպքում՝ Փակ (եվրոպական) աճուրդ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ միջոցով՝ համաձայն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:
	1,500 (հազար հինգ հարյուր) հատ պարտատոմսերն անվանական արժեքով ձեռք է	2,000 (երկու հազար) հատ պարտատոմսերն անվանական արժեքով ձեռք է բերելու Շուկա

	բերելու Շուկա Ստողծողը՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով	Ստողծողը՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով
Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	AMFMGCB22ER1	AMFMGCB21ER3
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Թողարկողը դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխված Պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար: Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Պարտատոմսերի ցուցակումից հետո Պարտատոմսերով գործարքները կարող են իրականացվել միայն «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բարսայում (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի):	
Շուկա Ստեղծող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ, համաձայն Թողարկողի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ միջև 30.10.2017թ. կնքված պարտատոմսերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի (ՀԱՎԵԼՎԱԾ 9):	
	Այս նպատակով Շուկա ստողծողը ձեռք է բերելու 1,500 հատ պարտատոմսեր անվանական արժեքով՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով:	Այս նպատակով Շուկա ստողծողը ձեռք է բերելու 2,000 հատ պարտատոմսեր անվանական արժեքով՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով:
Պարտատոմսերի առաջարկի և ազատ շրջանառելիության սահմանափակումներ	Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ պարտատոմսերի ձեռքբերման քանակի, ազատ շրջանառելիության հետ կապված որևէ սահմանափակումներ չեն սահմանվել՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Մասնավորապես, կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո տվյալ շուկայից դուրս առևտուրը արգելվում է, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 129-ի 4-րդ կետին առնչվող դեպքերի:	
Տեղաբաշխման սահմանափակումներ	Չկան	

	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

2.3.2. Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ Թողարկողի իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.5 և 7.6 կետերի պահանջները՝ Թողարկողը 2017 թվականի հոկտեմբերի 2-ին դիմում է ներկայացրել ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչություն՝ ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու համար բավարարում ստանալու նպատակով: Համաձայն «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի 7.7 կետի պահանջների և հաշվի առնելով, որ ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչությունից 30-օրյա ժամկետում մերժման վերաբերյալ գրություն չի ստացվել, ապա պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու վերաբերյալ Թողարկողի դիմումը համարվում է բավարարված:

Պարտատոմսերը թողարկվում են համաձայն Թողարկողի Ընդհանուր Ժողովի թիվ 5 որոշման, որն ընդունվել է 2017թ. հոկտեմբերի 11-ին (ՀԱՎԵԼՎԱԾ 7):

2.3.3. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերն ապահովված են Թողարկողի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերով: Թողարկողի՝ վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկողի անվճարունակության մասին որոշման կամ դատարանի կողմից սնանկության մասին որոշման կայացման պահից Պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստրում գրանցված ակտիվների կառավարման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը նշանակում է հիփոթեքային կառավարիչ (այսուհետ՝ Կառավարիչ), որը կառավարում է ապահովման միջոց հանդիսացող ակտիվները՝ ելնելով ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ներդրողների շահերից:

Եթե Պարտատոմսերի գծով պարտավորության արժեքը, այնուամենայնիվ, գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է Թողարկողի՝ այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականության, որի համաձայն՝ ապահովության միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերի իրացումից հետո սեփականատերերի պահանջները կբավարարվեն 4-րդ հերթին:

Առաջին Հիփոթեքային	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից՝ պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3.4. Պարտատոմսերից բխող իրավունքները և պարտականությունները

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն կատարված ներդրումներին համամասնորեն ստանալ արժեկտրոնային եկամուտ և պարտատոմսերի մայր գումարը:

Պարտատոմսերից բխող իրավունքներն են՝

- ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը,
- Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,
- սույն ազդագրով սահմանված կարգով և պարբերականությամբ ստանալ արժեկտրոններ,
- սույն ազդագրով սահմանված կարգով Պարտատոմսերի մարման օրը ստանալ Պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը),
- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից,
- Հաշվի օպերատորների միջոցով Պահառուից ստանալ արժեթղթերի հաշվից քաղվածք,
- Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը,
- Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի սեփականատերը պարտավոր է.

- մինչև Պարտատոմսերի ձեռք բերումը Պահառուի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Պահառուի ենթապահառու հանդիսացող այլ անձանց մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ,
- իր հաշվին կատարել Պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման և/կամ գործարքների ձևակերպման հետ,
- կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործառնություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

Առաջին Հիփոթեքային Բանկ	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Բանկություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

2.3.5. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկումը

ԾԱՆՈՒՑՈՒՄ: Տեղաբաշխողն օգտագործել է իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները սույն բաժնում պարտպատոմսերից ստացվող եկամուտների՝ Հայաստանում հարկման մոտեցումները ներկայացնելիս: Այնուամենայնիվ, Տեղաբաշխողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կկիրառվի հարկային մարմինների կողմից և խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից:

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- ✓ շահութահարկ
- ✓ եկամտային հարկ:

Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը: Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Համախառն եկամտի թվին են դասվում փոխառության դիմաց ստացվող տոկոսները և այլ հատուցում, պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման, ֆակտորինգային այլ գործառնությունների իրականացումից ստացվող եկամուտները: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **20 տոկոս դրույքաչափով**:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղյուրի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են **10 տոկոս դրույքաչափով:**

Եկամտային հարկ

ՀՀ-ում եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ հարկ վճարողներ): Ընդ

որում, ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում, ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը: Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելաճից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսների համար եկամտային հարկը հաշվարկվում է **10 տոկոս դրույքաչափով**: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը իրականացվում է արժեկտրոնների յուրաքանչյուր վճարման դեպքում:


Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկումը: Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ստացվող հարկվող եկամուտը:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն՝ իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող **դրույքաչափերը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար**:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4. Պարտատոմսերի թողարկման, ապահովման միջոցների ռեգիստրի վարման, գրանցման և հսկողության նկարագրություն



1. Հսկողի կողմից նախքան հիփոթեքային պարտատոմսերի թողարկումը տրվում է հավաստագիր (ՀԱՎԵԼՎԱԾ 12) առ այն, որ ապահովության միջոց հանդիսացող ակտիվները համարժեք են պարտատոմսերի գծով ստանձնելիք պարտավորություններին և համապատասխանում են օրենքի պահանջներին: Հետագայում հսկողի կողմից վերահսկվում է Թողարկողի մոտ համապատասխան ակտիվների մշտական առկայությունը:

   Ապահովման միջոցների հաշվառումն իրականացնելու է Թողարկողը՝ էլեկտրոնային եղանակով ռեգիստրի վարման միջոցով՝ ներառելով առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

   - հիփոթեքային վարկերի դեպքում՝ վարկային պայմանագրերի կնքման ամսաթիվը, համարը, վարկի գումարը, տոկոսադրույքը և դրանց արժույթը, ժամկետը, վարկի գումարի և տոկոսների մարման գրաֆիկը, վարկի մնացորդային արժեքը, վարկի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցությունը, վարկերի ապահովություն հանդիսացող գրավի առարկան, վերջինիս նկարագրությունը, այդ թվում՝ գտնվելու վայրը (հասցեն), շինության տեսակը, հարկը (հարկայնությունը), իսկ հողամասի կառուցապատման իրավունքի դեպքում՝ իրականացման վայրը, շուկայական արժեքը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ արժեքները գնահատված լինելու դեպքում նաև գնահատված այլ արժեքները, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են գրավի առարկայի նույնականացման համար.

- փոխարինող եւ լրացուցիչ ակտիվների տեսակը, շուկայական արժեքը, անվանական արժեքը.
- ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

2. Ապահովության միջոց հանդիսացող ակտիվների ցանկը գրանցվում է ՀՀ կենտրոնական բանկում: Ակտիվների գրավադրումը ներառում է ակտիվների նկատմամբ պահանջներից բխող իրավունքների, ակտիվների գծով ստացվելիք եկամուտների, վճարումների, առկա կամ ապագայում ստացվելիք այլ միջոցների գրավադրում: Նշված ակտիվները շարունակում են մնալ թողարկողի հաշվեկշռում, սակայն համարվում են գրավադրված որպես թողարկվող պարտատոմսերի ապահովության միջոց:
3. Թողարկողման արդյունքում պարտավորությունների կատարման համար պատասխանատու է Թողարկողը:
4. *-Ակտիվների մարման, 90 օր և ավել ժամկետանց դառնալու, օրենքին չհամապատասխանելու, ինչպես նաև օրենքով սահմանված արժեքից ավել լինելու դեպքերում ակտիվները կարող են դուրս գրվել ռեգիստրից, ինչի համար անհրաժեշտ է հսկողի գրավոր համաձայնությունը և ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը:
   Ակտիվների մարման, 90 օր և ավել ժամկետանց դառնալու, օրենքին չհամապատասխանելու հիմքերով ակտիվների դուրսգրման դեպքերում, եթե դուրսգրման արդյունքում՝
   1. ապահովման միջոց հանդիսացող ակտիվների անվանական արժեքների գումարային մեծությունը փոքր է Պարտատոմսերի համապատասխան տրանշի անվանական արժեքների գումարային մեծությունից, կամ՝
   2. ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների դիմաց ստացվելիք գումարները փոքր են Պարտատոմսերի համապատասխան տրանշի դիմաց վճարվելիք գումարներից, կամ՝
   3. ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների զուտ ներկա արժեքը գերազանցում է Պարտատոմսերի համապատասխան տրանշի գծով պարտավորությունների զուտ ներկա արժեքի գումարը 5 տոկոսից պակաս մեծությամբ,

   ապա Պարտատոմսերի Թողարկողը նույն աշխատանքային օրվա ընթացքում պարտավորվում է այն փոխարինել Ազդագրի 2.6 կետի և «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի չափանիշներին բավարարող ակտիվներով:
   «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պարբերականությամբ Թողարկողը կկազմի և իր ինտերնետային էջում կհրապարակի Պարտատոմսերի թողարկման առնչությամբ կազմված հաշվետվություններ:
5. *- Թողարկողի լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկողի անվճարունակության մասին որոշման կայացման պահից ապահովման միջոցների ռեգիստրում գրանցված ակտիվների կառավարման

նպատակով ՀՀ կենտրոնական բանկը նշանակում է հիփոթեքային կառավարիչ: Կառավարիչը կառավարում է ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվները՝ ելնելով ապահովված հիփոթեքային պարտատոմսերում ներդրողների շահերից:

2.5. Պարտատոմսերի ապահովման միջոցների հսկող

Թողարկողը պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողության նպատակով 30.10.2017թ. պայմանագիր է կնքել «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ աշխատակից Էդգար Էվոյանի (այսուհետ՝ Հսկող) հետ (ՀԱՎԵԼՎԱԾ 10):

2.5.1. Հսկողը պարտավորվում է ապահովել, որպեսզի

- թողարկված հիփոթեքային պարտատոմսերը մշտապես ապահովված լինեն ապահովման միջոցներով,
- մշտապես հնարավոր լինի նույնականացնել ապահովման միջոց հանդիսացող ակտիվները, և, թողարկողի սնանկության դեպքում, այդ ակտիվներն առանձնացնել թողարկողի այլ ակտիվներից:

2.5.2. Ապահովման միջոցների հսկողն իր պարտականությունները կատարելիս պարտավոր է գործել բարեխղճորեն՝ ելնելով հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի շահերից:

2.5.3. Ապահովման միջոցների Հսկողը իրավասու է ցանկացած ժամանակ ստուգել թողարկողի կողմից վարվող փաստաթղթերը, ինչպես նաև ցանկացած ժամանակ պահանջել տեղեկություններ, որոնք վերաբերում են հիփոթեքային պարտատոմսերին և ապահովման միջոց հանդիսացող ակտիվներին:

2.5.4. Ապահովման միջոցների հսկողը պարտավոր է՝

- նախքան ապահովման միջոցներն ապահովման զամբյուղում ներառելը ստուգել ապահովման միջոցների համապատասխանությունը և հիփոթեքային պարտատոմսերի գծով ստանձնելիք պարտավորություններին համարժեքությունը.
- վերահսկել թողարկողի մոտ հիփոթեքային պարտատոմսերի գծով պահանջներին համապատասխան և համարժեք չափով ապահովման միջոցների մշտական առկայությունը: Ապահովման միջոցների հսկողը, մասնավորապես, պետք է ուսումնասիրի Պարտատոմսերի ապահովման միջոցներ հանդիսացող հիփոթեքային վարկերի գրավադրված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունները, և կարող է պահանջել, որպեսզի ապահովման միջոցների ցանկում ներառվի տվյալ անշարժ գույքի գնահատված արժեքի միայն որոշակի տոկոսը.

2.5.5. Ապահովման միջոցների Հսկողի պատասխանատվությունը սահմանափակված է հսկողի կողմից վերը նշված գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերով: Մասնավորապես՝ Հսկողը պատասխանատվություն չի կրում

թողարկողի կողմից հիփոթեքային վարկի ապահովման միջոց հանդիսացող անշարժ գույքի գնահատման ճշգրտության համար:

2.5.6. Թողարկողը պարտավոր է Հսկողի պահանջով 2 բանկային օրվա ընթացքում նրան տեղեկություններ տրամադրել ռեգիստրում գրանցված ակտիվների դիմաց ստացված գումարների, ինչպես նաև այդ ակտիվների հետ կապված ցանկացած փոփոխությունների վերաբերյալ, որոնք կարող են նշանակություն ունենալ հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի համար:

Բացի այդ, Թողարկողը պարտավոր է յուրաքանչյուր շաբաթ Հսկողին տրամադրել փաստացի ընդհանուր դրամական հոսքերի ժամանակացույցը, ինչպես նաև վաղաժամկետ մարումների և չվճարումների մասին տեղեկատվությունը: Սույն կետով սահմանված ժամանակացույցում նշված դրամական հոսքերի մասին տեղեկությունները պետք է հնարավորություն ընձեռեն նույնականացնել այն ակտիվները, ներառյալ՝ հիփոթեքային վարկերը, փոխարինող ակտիվները, որոնցից ստացվել են այդ դրամական հոսքերը:

2.6. Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի նկարագրություն

Պարտատոմսերի թողարկման նպատակով Թողարկողի կողմից ընտրվել և Հսկողի համաձայնությամբ ՀՀ կենտրոնական բանկ գրանցման են ներկայացվել հիփոթեքային վարկերի պորտֆել (այսուհետ՝ Վարկեր), որը հետագայում կհանդիսանա ապահովության միջոց թողարկվող պարտատոմսերի համար: Ընդ որում, ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային պորտֆելի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցությունը 01.11.2017թ. դրությամբ Առաջին տրանշի դեպքում կազմել է 153%, իսկ երկրորդ տրանշի դեպքում՝ 151%: Նշված ցուցանիշները պարտատոմսերի շրջանառության ժամկետում կարող են տատանվել, սակայն չեն կարող նվազել օրենքով սահմանված նվազագույն շեմից: Ապահովման միջոց հանդիսացող վարկերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում:

Հաշվի առնելով բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության առկայությունը՝ Թողարկման երկու տրանշերի ապահոման միջոցների ամբողջական ցանկերը չեն լրացվել և չեն կցվել Ազդագրին և ներկայացվել են միայն Կենտրոնական բանկ՝ «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմումի հետ միասին:

Վարկերի ընտրությունը

Վարկային պորտֆելների համար սահմանվել են հետևյալ սկզբնական համապատասխանության չափանիշները.

- **Վարկի արժույթը**. ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար.
- **Վարկի տեսակը/դասը**. Հիփոթեքային վարկեր.

- **Վարկային գործիքի տեսակը**. վարկերի բոլոր տեսակները (մայր գումարի հավասարաչափ վճարումներ, ընդհանուր գումարի հավասարաչափ վճարումներ, վճարման արտոնյալ ժամանակահատվածով վարկեր).
- **Վարկ/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ.** Երևան քաղաքում գտնվող գրավների դեպքում՝ 70%, ՀՀ այլ տարածքներում՝ 60%
- **Գրավի գտնվելու վայրը.** Հայաստանի Հանրապետություն
- **Վարկի մարման ժամկետը**. մարման ամենավաղ ժամկետը՝ 31 դեկտեմբեր 2018թ.
- **Վարկերի նվազագույն և առավելագույն չմարված գումարները.** 01.11.2017թ. դրությամբ. նվազագույնը – 1,000 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերի համար և 500,000 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար. առավելագույնը - 200,000 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերի համար և 100,000,000 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով արտահայտված վարկերի համար.
- **Վարկի որակը**. 01.11.2017թ. դրությամբ պետք է լինեն ստանդարտ դասի վարկեր,
- **Վարկի մարման պատմությունը**. վարկի գծով պետք է կատարված լինի առնվազն մեկ մարում (տոկոսագումար և մայր գումար).

2.7. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.7.1. Առաջարկի պայմանները, ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

2.7.1.1. Պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է՝

Առաջին տրանշ՝ 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ, քանակը՝ 10,000 (տասը հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 24 ամիս մարման ժամկետով,

Երկրորդ տրանշ՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար, քանակը՝ 20,000 (քսան հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 24 ամիս մարման ժամկետով,

2.7.1.2. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը կսահմանվի ՀՀ ԿԲ-ի կողմից պարտատոմսերի Ազդագրի գրանցումից հետո մեկ ամսվա ընթացքում՝ Թողարկողի գլխավոր տնօրենի առանձին որոշմամբ: Առաջին և երկրորդ տրանշերի տեղաբաշխումն իրականացվելու է միևնույն օրը: Թողարկման և տեղաբաշխման օրերը համընկնում են:

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ժամկետները կհրապարակվի տեղաբաշխումից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ Թողարկողի և Տեղաբաշխողի պաշտոնական ինտերնետային կայքերում՝ www.firstmortgage.am, www.araratbank.am:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով՝ ընդ որում աճուրդին **ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտեր չեն կարող ներկայացվել:**

Կազմակերպության պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդն իրականացվելու է դրամական միջոցների և պարտատոմսերի նախնական դեպոնացմամբ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում, իսկ տեղաբաշխողը՝ նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում: Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում գնորդները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ՝ Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով» և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» սահմանված ընթացակարգերի համաձայն:

2.7.1.3. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին անմիջապես կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը հասանելի է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.nasdaqomx.am: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները կարող են աճուրդին մասնակցել (օգտվել առաջարկից) Բորսայի անդամների միջոցով՝ վերջիններիս կողմից սահմանված կարգով և պայմաններով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրեն Բորսայի տարբեր անդամների կողմից առաջարկվող պայմանները իրենց համար օպտիմալ տարբերակ գտնելու և իրենց կողմից աճուրդին մասնակցելու գործընթացների վերաբերյալ առավել սպառիչ և մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

2.7.1.4. Գնորդները պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային հայտեր են ներկայացնում տեղաբաշխման համակարգ՝ տեղաբաշխման օրվա ժամը 11^{00}-ից մինչև 13^{30}-ը: Գնորդներն իրավունք ունեն հետ կանչել կամ փոփոխել իրենց կողմից ներկայացված հայտերը և նոր հայտեր մուտքագրել մինչև 13^{30}-ը: Տեղաբաշխողի կողմից աճուրդի անցկացումը, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առքուվաճառքի գործարքների կնքման գործընթացը, տևում է մինչև տեղաբաշխման օրվա ժամը 15^{00}-ն: Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման

հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

2.7.1.5. Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահմանափակում չկա: Գնորդը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը: Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է չեղյալ համարվել Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով և «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերով և դեպքերում:

2.7.1.6. Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:

Տեղաբաշխման ավարտից հետո Բորսան «Տեղեկատվության բացահայտման կանոններին» համապատասխան կազմակերպում է տեղաբաշխման արդյունքների հրապարակումն իր պաշտոնական կայքում:

Թողարկողն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.firstmortgage.am, տեղաբաշխման ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է աճուրդի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացնելով առաջարկությունների ընդհանուր ծավալը, բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը, տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված գինը (եկամտաբերությունը) և այլն:

2.7.1.7. Թողարկողի պարտատոմսերի դիմաց սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:

2.7.2. Պարտատոմսերի տեղաբաշխման ծրագիրը

2.7.2.1. Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին և Թողարկողի մասնակիցներին: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են Բորսայի տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով, Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

2.7.2.2. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 1 (մեկ) ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի՝ «Առևտրի ընդհանուր կանոններ»-

ին համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականները և ուղարկում Բորսայի համապատասխան անդամին: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին տեղեկանում են Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

2.7.3. Առաջարկի գինը

Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից տեղաբաշխման համակարգ են մուտքագրում պարտատոմսերի գնման հայտերը: Հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը առաջին տրանշի դեպքում սահմանվել է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ երկրորդ տրանշի դեպքում՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար մեկ պարտատոմսի դիմաց, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվի (ՀԱՎԵԼՎԱԾ 8): Կտրման գնի վերաբերյալ տեղեկատվությունը կներառվի նաև պարտատոմսերի տեղաբաշխման վերաբերյալ հրապարակվող հայտարարության մեջ:

Բորսայի անդամ հանդիսացող ներդրողներից տեղաբաշխման աճուրդի ընթացքում ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվում են միջնորդավճարներ Բորսայի՝ «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված կարգով: Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողներն իրենց կողմից ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գանձվող միջնորդավճարների մասին կարող են տեղեկանալ Բորսայի այն անդամից, որի միջոցով մասնակցել են պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին:

2.7.4. Տեղաբաշխում

2.7.4.1. Թողարկվող պարտատոմսերը նախատեսվում է տեղաբաշխել երաշխավորված եղանակով: Երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու նպատակով Թողարկողը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ հետ 2017թ. հոկտեմբերի 30-ին կնքել է համապատասխան պայմանագիր (ՀԱՎԵԼՎԱԾ 8): «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ պարտավորվում է պայմանագրի դրույթներին համապատասխան իրականացնել Թողարկողի 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ և 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային ապահովված հիփոթեքային պարրտատոմսերի երաշխավորված տեղաբաշխում: Երաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման աճուրդի ժամանակ չտեղաբաշխված պարտատոմսերը ձեռք է բերում Տեղաբաշխողը սահմանված կտրման նվազագույն գնով:

Վերը նշված պայմանագրով մատուցվող ծառայությունների դիմաց Թողարկողը պարտավորվում է Տեղաբաշխողին վճարել 994,000 (ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ հաստատուն վճար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, գրանցման համարը՝ 4, հեռ.՝ +(374 10) 59 23 23, ֆաքս՝ +(374 10) 54 78 94,
Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am,
Պաշտոնական ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

2.7.4.2. Տեղաբաշխման աճուրդի ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու համար պոտենցիալ ներդրողները կարող են դիմել Բորսայի անդամ հանդիսացող կազմակերպություններին և մասնակցել աճուրդին՝ վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Բորսայի անդամների ցանկը հասանելի է Բորսայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.nasdaqomx.am: Տեղաբաշխումից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի առքուվաճառքի գործարք կնքելու համար ներդրողները պետք է դիմեն կա՛մ ներդրումային ընկերություններին, կա՛մ բրոքերային ծառայություն մատուցող բանկերին:
Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկը հասանելի է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.nasdaqomx.am:
Պարտատոմսեր ձեռք բերող անձը, նախքան ներդրում իրականացնելը, պարտավոր է նաև ցանկացած բանկում իր անվամբ բացել (հաշիվներ չունենալու դեպքում) դոլարային և դրամային բանկային հաշիվներ՝ Երկրորդ տրանշում ներդրումներ կատարելիս և միայն դրամային հաշիվ Առաջին տրանշում ներդրումներ կատարելիս՝ կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների ստացման համար:

2.8. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ: Հարկ է նշել, որ հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո 60 օրվա ժամկետում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության Ընդհանուր Ժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրն արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով Թողարկվող պարտատոմսերի առևտուրը

թույլատրված չէ ոչ մի շուկայում:

Թողարկողը պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունը ապահովելու նպատակով կօգտվի շուկա ստեղծողի (Market Maker) ծառայություններից, որոնք կմատուցվեն «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից՝ համաձայն վերջինիս հետ 2017թ. հոկտեմբերի 30-ին կնքված Բորսայում պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշումներ կազմակերպելու վերաբերյալ պայմանագրի (ՀԱՎԵԼՎԱԾ 9): Այս նպատակով Շուկա ստողծողը ձեռք է բերելու Առաջին տրանշով 1,500, իսկ Երկրորդ տրանշով 2,000 հատ պարտատոմսեր անվանական արժեքով՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով:

2.9. Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման, մշակման, ինչպես նաև Պարտատոմսերի պայմանների որոշման համար որպես խորհրդատու հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Ծառայությունների շրջանակը մանրամասն ներկայացված է Թողարկողի և Տեղաբաշխողի միջև հետ 2017թ. հոկտեմբերի 30-ին կնքված պայմանագրում (ՀԱՎԵԼՎԱԾ 8): Ներկայացված տեղեկատվությունն անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել, ինչպես նաև ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

Կազմակերպությանը վարկանշող կազմակերպությունների կողմից որևէ վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Կազմակերպության 2012, 2013 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից, իսկ 2014, 2015 և 2016 թվականների անկախ աուդիտորական ստուգումն իրականացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությունը:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1, հեռ.՝ +374 10 26-09-64, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.grantthornton.am:

Կազմակերպության գործադիր տնօրեն-բաժնետեր է Գագիկ Գյուլբուդաղյանը:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1, հեռ.՝ +374 10 56-67-62, ինտերնետային կայքի հասցեն է՝ http://www.kpmg.am:

Կազմակերպության գործադիր տնօրենն է Տիգրան Գասպարյանը:

Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ ֆինանսական հաշվետվությունների էական անճշտություններից զերծ լինելու և միջազգային ստանդարտներին համապատասխանելու մասին: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ եզրակացությունները ներկայացված են կից Հավելված 3-4-ում: Վերջին 5 տարիների ընթացքում Կազմակերպության աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Թողարկողը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն

ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը.

Ընդհանուր տնտեսության ռիսկեր, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել Կազմակերպության գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Կազմակերպության վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Կազմակերպության հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Կազմակերպության գործունեության վրա: Դա կարտահայտվի Կազմակերպության կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Կազմակերպությունում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ: Նման վերլուծությունները և սցենարները քննարկվում են խորհրդի նիստերի ընթացքում, որն իրականացվում է ամիսը մեկ անգամ: Նման հաճախականությունը հնարավորություն է տալիս արագ արձագանքել շուկայում սպասվող կամ տեղի ունեցող փոփոխություններին և մշակել փոփոխված իրավիճակին համապատասխանող գործունեության պլան:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Վարկային կազմակերպության գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Կազմակերպության գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա: Կազմակերպությունը գործում է ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկում:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ ֆինանսական, մասնավորապես վարկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում վարկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի վարկային կազմակերպությունների դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Կազմակերպությունը, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման

սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է վարկավորման ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Կազմակերպության վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Կազմակերպության աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Կազմակերպության ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ:

Վարկային ռիսկ: Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Կազմակերպությանը կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Թողարկողը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի շնորհիվ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը պորտֆելում բավականին փոքր է.

Կազմակերպության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- ✓ վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- ✓ վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակությունը,
- ✓ գնահատման մեթոդաբանությունը,
- ✓ գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- ✓ վարկային փաստաթղթերի պահանջները,
- ✓ վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիթորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են իրավաբանական հարցերով խորհրդատուին: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության վրա՝ վարկունակության գնահատման շեշտադրմամբ: Տնօրենների խորհուրդն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Կազմակերպությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

հազ. ՀՀ դրամ

	30.09.2017[7]	31.12.2016	31.12.2015
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	150,938	622,253	325,701
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	332,635	582,505	44,422
Հաճախորդներին տրամադրված վարկեր	7,365,291	6,979,097	6,865,784
Վարկային ռիսկի ենթարկվածության առավելագույն չափ	**7,848,864**	**8,183,855**	**7,235,907**
Հաճախորդներին տրամադրված վարկեր	**30.09.2017[8]**	**31.12.2016**	**31.12.2015**
Իրավաբանական անձ հաճախորդներին տրված վարկեր			
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող	94,199	-	57,405
Ընդամենը իրավաբանական անձանց տրամադրված վարկեր	**94,199**	**-**	**57,405**
Ֆիզիկական անձ հաճախորդներին տրված վարկեր			
Հիփոթեքային վարկեր			
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող	6,834,012	6,828,961	6,480,218
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր՝	375,931	143,669	265,808
ոչ ժամկետանց	143,296	14,875	82,176
1-ից 30 օր ժամկետանց	95,800	18,618	16,458
31-ից 90 օր ժամկետանց	6,334	31,088	48,165
91-ից 180 օր ժամկետանց	47,463	14,023	16,554
181-ից 360 օր ժամկետանց	49,444	0	85,536
361 օր և ավել ժամկետանց	33,594	65,065	16,919
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**7,209,943**	**6,972,630**	**6,746,026**
Սպառողական վարկեր			
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող	184,090	101,604	164,214
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր՝	8,820	1,460	4,555
1-ից 30 օր ժամկետանց	105	-	241
31-ից 90 օր ժամկետանց	5,085	-	2,028
91-ից 180 օր ժամկետանց	960	1,460	589
181-ից 360 օր ժամկետանց	2,670	-	1,697
Ընդամենը սպառողական վարկեր	**192,910**	**103,064**	**168,769**
Ընդամները ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	**384,751**	**145,129**	**270,363**

[7] Տվյալ սյունակում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

[8] Տվյալ սյունակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

Առաջին Հիփոթեքային	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Ընդամենը վարկեր	**7,497,052**	**7,075,694**	**6,972,200**
Հնարավոր կորուստների պահուստ	**131,761**	**96,597**	**106,416**
Խնդրահարույց վարկեր/Վարկային պորտֆել	**5,1%**	**2.1%**	**3.9%**

Կազմակերպության հիմնական գործունեությունը հիփոթեքային վարկերի տրամադրումն է: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Կազմակերպությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Կազմակերպության վարկային քաղաքականությունը սահմանված է Կազմակերպության կողմից ընդունված տարբեր ներքին իրավական կանոնակարգերով, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող ընթացակարգերը և պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիթորինգը, ժամկետանց վարկերի հետ աշխատելու գործընթացը և այլն:

Կազմակերպությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Տնօրենների խորհուրդը: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Կազմակերպության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Կազմակերպությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Վարկերի զգալի մասը հիթոփեքային են, որոնք ապահովված են անշարժ գույքի գրավով: Այսպիսի ռիսկերի մոնիթորինգն իրականացվում է վարկի տրամադրումից 6 ամսվա ընթացքում և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար պայմանավորված իրականացվող տարաբնույթ գործարքներով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնասներ կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված

պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Ստորև բերված աղյուսակում[9] ներկայացված է Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքը 2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

հազ. ՀՀ դրամ

	Մարման ժամանակահատվածը							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*6 տարի և ավելի*	*Անժամ-կետ*	*Ժամկե-տանց*	*Ընդամենը*
Ակտիվներ	497,359	424,878	484,982	4,144,324	2,386,916	22,792	6,634	**7,967,885**
Պարտավորություններ	92,158	153,473	516,317	4,050,252	1,981,703	0	0	**6,793,903**
Ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն (GAP)	**405,201**	**271,405**	**(31,335)**	**94,072**	**405,213**	**22,792**	**6,634**	**1,173,982**

Կազմակերպությունը հնարավորինս ձգտում է համադրել իրացվելիության ռիսկի նվազեցման և իրացվելիության արդյունավետ կառավարման սկզբունքները՝ ՀՀ բանկերից ներգրավելով վարկային գծեր: 01.11.2017թ. դրությամբ Կազմակերպությունը երկու ՀՀ առևտրային բանկերից ունի չօգտագործված վերականգնվող վարկային գծեր՝ ընդհանուր 600 հազար ԱՄՆ դոլարի և 5 մլն ՀՀ դրամի չափով:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում, որն էլ իր հերթին կարող է ազդել Կազմակերպության զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Կազմակերպության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև այն նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Կազմակերպությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույքի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Կազմակերպության ղեկավարությունն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիթորինգ, գնահատում է

[9] Տվյալ աղյուսակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

Առաջին Հիփոթեքային Բանկ	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպության իրական արժեքով տոկոսադրույքի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունը Կազմակերպության շահութաբերության վրա:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է 2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծությունը Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների համար[10]:

հազ. ՀՀ դրամ

	Մարման ժամանակահատվածը						
	Մինչև 3 ամիս	***3-6 ամիս***	***6-12 ամիս***	***1-5 տարի***	***6 տարի և ավելի***	***Ոչ տոկոսակիր***	***Ընդամենը***
Ակտիվներ	475,257	173,352	357,904	3,618,251	2,869,708	155,850	**7,650,322**
Պարտավորություններ	158,412	166,461	347,686	4,462,104	1,581.703	0	**6,716,366**
Տարբերություն	**316,845**	**6891**	**10,218**	**(843,853)**	**1,288,005**	**155,850**	**933,956**

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիթորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը (վերագնորոշման ռիսկ), որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2017թ. սեպտեմբերի 30-ի, 2016թ. ու 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

հազ. ՀՀ դրամ

	30.09.2017[11]	**31.12.2016**	**31.12.2015**
100 բկ զուգահեռ նվազում	6,121	4,625	2,373
100 բկ զուգահեռ աճ	(6,121)	(4,625)	(2,373)

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Կազմակերպությունը կիրառում է արտարժութային ռիսկի կառավարման հետևյալ սկզբունքները.

[10] Տվյալ աղյուսակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

[11] Տվյալ սյունակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

- Կազմակերպությունը ձգտում է միանգամից փակել արտարժութային դիրքերը և զերծ մնալ սպեկուլյատիվ գործառնություններից:
- Կազմակերպությունն արտարժութային շուկաներում չի բացում սպեկուլյատիվ դիրքեր: Ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել միայն հեջավորման նպատակով դիրքը փակելու համար:
- Կազմակերպությունը ձգտում է համապատասխանեցնել ակտիվների և պարտավորությունների արժույթներն ինչպես գումարներով, այնպես էլ ժամկետներով փոխարժեքային տատանումներից պաշտպանված լինելու համար:
- Կազմակերպությունը վերահսկում է արտարժութային դիրքն օրական կտրվածքով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների:

հազ. ՀՀ դրամ

	30.09.2017[12]	31.12.2016	31.12.2015
ԱՄՆ դոլար			
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	73,235	401,546	184,759
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	335,995	582,505	44,422
Հաճախորդներին տրամադրված վարկեր	3,316,773	2,970,873	3,117,386
Ընդամենը ակտիվներ	**3,726,006**	**3,954,924**	**3,346,567**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	3,140,156	-3,486,808	-2,956,815
Ընդամենը պարտավորություններ	**-3,140,156**	**-3,486,808**	**-2,956,815**
Զուտ դիրք	**585,850**	**468,116**	**389,752**

Գործընկերոջ ռիսկ: Գործընկերոջ ռիսկի սահմանաչափն իրենից ներկայացնում է մեկ ֆինանսական հաստատության գծով ռիսկի առավելագույն չափը, որը Կազմակերպությունը կարող է ունենալ: Կազմակերպությունը ձգտում է նվազեցնել գործընկերոջ ռիսկը՝

- Սահմանափակելով գործընկերների ցանկը կառավարելի քանակով:
- Կիրառելով գործընկերների հաստատման հիմնավոր գործընթաց մինչև ցանկացած նոր գործընկերոջ հետ որևէ գործառնության կնքումը:
- Սահմանափակելով Կազմակերպության ռիսկը մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի նկատմամբ:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին

[12] Տվյալ սյունակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում:

միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառույթները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Կազմակերպության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգող հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Կազմակերպությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիթորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Կազմակերպությունը պատրաստ է իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը:

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Կազմակերպությունը հիմնականում ենթարկվում է շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար: Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթի համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Տնօրենների խորհրդի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

ռուսերեն՝ Обшество с Ограниченной Ответственностью Универсальная Кредитная Организация “Первая Ипотечная Компания”

անգլերեն՝ “First Mortgage Company” Universal Credit Organization Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՀԸ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ

ռուսերեն՝ ООО Универсальная Кредитная Организация «ПИК»

անգլերեն՝ “FMC” Universal Credit Organization LLC.

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122:

Թողարկողի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 51 81 81, (+374 10) 51 89 89,

ֆաքս՝ (+374 10) 56 12 02,

էլ. փոստ՝ info@firstmortgage.am,

ինտերնետային կայք՝ www.firstmortgage.am:

Թողարկողի հիմնադրման երկիրը՝

Հայաստանի Հանրապետություն:

Կազմակերպությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004 թվականի ապրիլի 13-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2004 թվականի ապրիլի 13-ի թիվ 79Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 7 գրանցման վկայական (ՀԱՎԵԼՎԱԾ 6): Կազմակերպությունը սկսել է փաստացի գործունեություն ծավալել 2004 թվականի ապրիլի 20-ից:

	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

Առաջին Հիփոթեքային Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում առաջին մասնագիտացված հիփոթեքային ընկերությունն է: Այն նպատակ ունի վարկավորել բնակարանների ձեռք բերումը և վերանորոգումը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կազմակերպության առաքելությունն է բարձրորակ ծառայություններ մատուցելու միջոցով նպաստել հաճախորդների բնակարանային պայմանների բարելավմանը, օգնել հաճախորդներին ձեռք բերել իրենց նախասիրություններին համապատասխան անշարժ գույք:

Կազմակերպության նպատակն է բարձրորակ ծառայությունների եւ մասնագիտական խորհուրդների մատուցման միջոցով վարկավորման գործընթացը դարձնել դյուրին եւ հասանելի: Հնարավորություն տալ հաճախորդներին ստեղծել կյանքի նոր որակ՝ ձեռք բերելով նոր բնակարան:

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

30.09.2017թ. դրությամբ Կազմակերպությունը ՀՀ տարածքում ունի գրանցված 1 մասնաճյուղ, որը հիմնադրվել է 2016թ. հոկտեմբերի 13-ին, գործունեության վայրը՝ ք. Երևան, Ամիրյան 1 :

3.4. Բիզնեսի նկարագիրը


Հիմնական գործունեությունը

Թողարկողն իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ: Կազմակերպությունը կարող է իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղվածությունը վարկերի տրամադրումն է, որոնք էլ ձգտում է հասանելի դարձնել տնտեսության տարբեր հատվածների, ինչպես նաև հասարակության լայն շրջանակների համար: Կազմակերպությունը, որպես հիմնական գործունեություն վարկավորում է բնակարանների ձեռք բերումը և վերանորոգումը Հայաստանի Հանրապետության տարածքում :

Ֆինանսական գործառնությունները Կազմակերպության կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով կանխիկ և անկանխիկ եղանակներով:


Կազմակերպության լևերիջի գործակիցը նվազել է վերջին 3 տարիների ընթացքում՝ պայմանավորված ակտիվների նկատմամբ կապիտալի առաջանցիկ աճով: Կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի դինամիկան ներկայացվում է ստորև.



[13]

Կազմակերպության ակտիվները վերջին 7 տարիների ընթացքում ապահովել են միջինում տարեկան 17% աճ, ինչն ուղղվել է վարկավորման:

Կազմակերպության ակտիվների կառուցվածքի և վարկավորման դինամիկան ներկայացվում են ստորև՝




[14]

[13] [14] 30.09.2017թ. դրությամբ տվյալների համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

Թողարկող	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	Տեղաբաշխող

Հաճախորդներին տրամադրված վարկերի դինամիկա



[15]

Կազմակերպության վարկային պորտֆելն արձանագրել է կայուն դինամիկ աճ, մասնավորապես վերջին 7 տարիների ընթացքում վարկային պորտֆելը տարեկան աճել է միջինում 15%-ով:

Հիմնական շուկաներ

Կազմակերպության կողմից հաճախորդներին տրված ամբողջ վարկային պորտֆելը բաղկացած է հիփոթեքային վարկերից (99%): Կազմակերպությունն ունի նաև փոքր ծավալով սպառողական վարկային պորտֆել:

Առաջիկա տարիներին Կազմակերպությունը նախատեսում է ակտիվ միջոցառումներ իրականացնել վարկային պորտֆելի մեծացման և բարձր որակի ապահովման ուղղությամբ: Միաժամանակ Կազմակերպությունը քայլեր է ձեռնարկելու վարկային պրոդուկտները և տրամադրվող ֆինանսական ծառայությունները բարելավելու ուղղությամբ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր վարկային ներդրումներում Թողարկողի վարկային պորտֆելի մասնաբաժինը վերջին 3 տարիներին հետևյալն է.

մլն. ՀՀ դրամ

	30/09/2017[16]	31/12/2016	31/12/2015	31/12/2014
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներ	177,549	166,411	177,707	165,821
Թողարկողի վարկային ներդրումներ	7,365	6,979	6,732	6,209
Թողարկողի մասնաբաժինը (%)	**4.1%**	**4.2%**	**3.8%**	**3.7%**

[15] [16] 30.09.2017թ. դրությամբ տվյալների համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները


Թողարկող	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	Տեղաբաշխող

Կազմակերպության պարտավորությունների կառուցվածքը ներկայացված է ստորև՝

հազ. ՀՀ դրամ

	30.09.2017[17]	31.12.2016	31.12.2015
Վարկեր պետական ֆինանսական կազմակերպություններից	3,395,709	3,440,225	3,142,859
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	2,945,931	3,251,952	2,324,234
Վարկեր ոչ առևտրային կազմակերպություններից	90,807	176,051	270,675
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	89,935	135,443	209,350
Փոխառություններ բաժնետիրոջից	121,115	113,583	60,956
Վարկեր այլ կապակցված կողմերից	0	4,920	405,316
Այլ	72,869,0	37,170	0

Պարտավորությունների կառուցվածքի դինամիկան



[18]


[17] Տվյալ սյունակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

[18] 30.09.2017թ. դրությամբ տվյալների համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

Առաջին Հիփոթեքային	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

3.5. Թողարկողի կառուցվածքը

Կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



Առաջին Հիփոթեքային	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

3.6. Հիմնական միջոցները

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ապահովման նպատակով իր տրամադրության տակ ունի հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որոնց արժեքի հանրագումարը կազմում է Կազմակերպության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 4.6%-ը: 30/09/2017թ. դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 378 մլն ՀՀ դրամ:

Կազմակերպության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը սահմանափակող հանգամանքներ չկան:

2017 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցներն ունեցել են հետևյալ կազմը և կառուցվածքը[19].

հազ. ՀՀ դրամ

	Շենքեր	Համակարգչային սարք.	Տնտես. գույք	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութ. ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք	430,531	16,668	57,129	24,076	4,666	**533,070**
Կուտակված մաշվածություն	87,836	14,029	40,045	8,478	4,644	**155,032**
Հաշվեկշռային արժեք	**342,695**	**2,639**	**17,084**	**15,598**	**22**	**378,038**

3.7. Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 20,000 հատ սովորական բաժնետոմսից (2015թ-ին՝ 20,000 հատ): 2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ (2015թ-ին՝ 36,500 դրամ): 2016թ. ընթացքում Կազմակերպությունը մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 36,500 դրամից ավելացրել է 50,000 դրամի, որի արդյունքում բաժնետիրական կապիտալը համալրվել է 270,000 հազար դրամով և փոփոխվել է բաժնեմասերի կառուցվածքը:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության մասնակիցների կազմը հետևյալն է՝ Նիշան Աթինիզյան (35%), Մարգրիտ Աթինիզյան (35%) և Դավիթ Աթանեսյան (30%):

2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության բաժնետիրական կապիտալը գրավադրված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց:

3.8. Զարգացման վերջին միտումները

[19] Տվյալ աղյուսակում ներկայացված թվերը արտաքին աուդիտի չեն ենթարկվել, ինչպես նաև ներառված չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում

Առաջին Հիփոթեքային	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Թողարկող		Տեղաբաշխող

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող զարգացումներով պայմանավորված՝ Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Թողարկողի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն, որը ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

հազ. ՀՀ դրամ

	30/09/2017[20]	***Փոփ 30/09/2017-31/12/2016***	**31/12/2016**	***Փոփ 31/12/2016-31/12/2015***	**31/12/2015**
Ակտիներ, այդ թվում՝	**8,279,847**	**-4%**	**8,596,897**	**15%**	**7,475,439**
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	150,938	-76%	628,012	245%	182,242
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	332,635	-43%	582,505	209%	188,334
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	7,365,291	6%	6,979,097	4%	6,732,170
Պարտավորություններ, այդ թվում՝	**6,780,278**	**-6%**	**7,206,872**	**14%**	**6,339,101**
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	89,961	-34%	135,443	-35%	209,351
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	6,415,278	-5%	6,730,557	15%	5,851,979
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	211,923	-28%	294,554	20%	246,485
Ընդհանուր Կապիտալ	**1,499,569**	**8%**	**1,390,025**	**22%**	**1,136,338**

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Կազմակերպության տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.firstmortgage.am «Ֆինանսական հաշվետվություններ» բաժնում:

3.9. Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Կազմակերպությունը

[20] Տվյալ սյունակում ներկայացված թվերի համար հիմք են հանդիսացել արտաքին աուդիտ չանցած հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- Կազմակերպության գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- Կազմակերպության ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Կազմակերպության ռիսկերը, պահպանելով վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ապահովել Կազմակերպության զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր:

Կազմակերպությունը կանխատեսել է 2017 թվականի գործունեության արդյունքում ստանալ 130 մլն ՀՀ դրամ զուտ շահույթ, իսկ մինչև 2020 թվականը զուտ շահույթի տարեկան ցուցանիշը հասցնել 200 մլն ՀՀ դրամ:

Կազմակերպության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- Կազմակերպության ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
- Կազմակերպության ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
- Կազմակերպության տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
- Կազմակերպության անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,
- Կազմակերպության գործունեության ապահովման ծախսեր,
- Նոր ծառայությունների ներդրման ծախսեր:

Կազմակերպության կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Կազմակերպության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ներգրավվող միջոցների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,
- անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կազմակերպության բնականոն գործունեությունը):


	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

3.10. Թողարկողի կառավարման մարմինները

Կազմակերպության կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված են Կազմակերպության կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ Ընդհանուր ժողով,
- ✓ Տնօրենների խորհուրդ,
- ✓ Գլխավոր տնօրեն:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Կազմակերպության Կանոնադրությամբ Կազմակերպության կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

Ընդհանուր ժողովը (Ժողով)

Ժողովը Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

1. Կազմակերպության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը,
2. Կազմակերպության տնօրենների խորհուրդի նախագահի և նրա տեղակալի նշանակումը և ազատումը,
3. Կազմակերպության գործադիր մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը /կառավարչին/ տալու հարցերը,
4. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/ ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը,
5. Կազմակերպության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռի հաստատումը,
6. Կազմակերպության շահույթը մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,
7. Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը,

8. Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի /նեքին փաստաթղթեր/ ընդունումը /հաստատումը/,
9. Կազմակերպության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,
10. Կազմակերպության աուդիտի իրականացման մասին որոշում ընդունելը,
11. Կազմակերպությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշումն ընդունելը, լուծարային հանձնաժողովի նշանակումը և լուծարային հաշվեկշռի ընդունումը,
12. Օրենսդրությամբ և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը

Տնօրենների խորհուրդը (Խորհուրդ)

Կազմակերպության տնօրենների խորհուրդը /հետագայում Խորհուրդ/ իրականացնում է Կազմակերպության գործունեության ընդհանուր ղեկավարումը և կարող է լուծել ցանկացած հարց, բացառությամբ Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Կազմակերպության Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1. Վարկավորման և այլ ֆինանսական գործառնությունների մասին որոշումների ընդունումը,
2. Տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
3. Կազմակերպության պահուստային և այլ ֆոնդերի ստեղծումը և օգտագործումը,
4. Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,
5. Կազմակերպության հաստիքացուցակի հաստատումը,
6. Ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
7. Կազմակերպության կողմից գույքի օտարման կամ ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների /որի արժեքը կատարման պահին կազմում է կանոնադրական կապիտալի 25-50%-ը / կնքման մասին որոշում ընդունելը,
8. Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վճարման չափի սահմանումը,
9. Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Կազմակերպության Գլխավոր տնօրենը

Կազմակերպության գործադիր մարմինն է Կազմակերպության գործադիր /գլխավոր/ տնօրենը, որը իրականացնում է Կազմակերպության գործունեության ընթացիկ ղեկավարումը: Կազմակերպության գործադիր /գլխավոր/ տնօրեն կարող է ընտրվել ինչպես Կազմակերպության մասնակիցը, այնպես էլ՝ ցանկացած այլ անձ: Կազմակերպության գործադիր /գլխավոր/ տնօրենը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից:

	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

Գործադիր /գլխավոր/ տնօրենը հաշվետու է Կազմակերպության Ընդհանուր ժողովին և Խորհրդին:

Կազմակերպության գործադիր /գլխավոր/ տնօրենը.

1. Առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, այդ թվում ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
2. Տալիս է լիազորագրեր՝ Կազմակերպության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,
3. Տալիս է հրամաններ՝ Կազմակերպության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,
4. Բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
5. Կազմակերպության անունից կնքում է քաղաքացիաիրավական պայմանագրեր,
6. Իրականացնում է օրենսդրությամբ և կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3.11. Թողարկողի կառավարման մարմինների անդամները և գործունեությունը

1. Մասնակից, Խորհրդի նախագահ՝ Նիշան Աթինիզյան

Բնակության վայրը	545 Կոնկորդ ավենյու, սվիթ 400, Քեմբրիջ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ
Իրավասությունները Պարտականությունները	Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը, նախագահում է ժողովներում:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Մասնակից՝ Մարգրիտ Աթինիզյան

Բնակության վայրը	545 Կոնկորդ ավենյու, սվիթ 400, Քեմբրիջ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ
Իրավասություններ/ Պարտականություններ	Մասնակցում է Խորհրդի աշխատանքներին:

	**ԱԶԴԱԳԻՐ** Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. **Մասնակից, Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ, Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Աթանեսյան**

Բնակության վայրը	ք. Երևան, Բաբայան 36, բն. 23
Իրավասություններ/ Պարտականություններ	Իրականացնում է Կազմակերպության ընթացիկ կառավարումը: Պատասխանատու է հաճախորդներին բարձրորակ ֆինանսական ծառայություններով ապահովման, կորպորատիվ, ֆինանսական, ռիսկերի կառավարման լավագույն փորձի կիրառման, անձնակազմի զարգացման, Կազմակերպության Կանոնադրության, ընթացակարգերի և ծրագրերի ներդրման և իրականացման համար:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

4. Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ՝ Գայանե Կորեկյան

Բնակության վայր	ք.Երևան, Բաղրամյան 1 նրբ. 4 շ. 35 բն.
Իրավասություններ/ Պարտականությունները	Իրականացնում է Կազմակերպության ֆինանսական կառավարումը: Պատասխանատու է Կազմակերպության արդյունավետ ֆինանսական գործունեության, հաշվապահական հաշվառման, ֆինանսական վերլուծությունների և պլանավորման, համապատասխան ընթացակարգերի և կանոնակարգերի ստեղծման և այլ գործառույթների իրականացման համար: Ապահովում է ֆինանսական և հաշվապահական բնականոն գործընթացները: Պատասխանատու է հաշվապահական և ֆինանսական ընթացակարգերի և ընդհանուր հաշվապահական համակարգերի ներդրման և կոորդինացման, հաշվապահական հաշվառման բոլոր գործառույթների վերահսկման համար: Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:
Կազմակերպությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Կազմակերպության գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Կազմակերպությունում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության Կանոնադրությամբ սահմանված կորպորատիվ կառավարման չափանիշներին և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

	ԱԶԴԱԳԻՐ Առաջին Հիփոթեքային Ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման	
Թողարկող		Տեղաբաշխող

3.12. Հսկող անձինք

2017թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության մասնակիցների կազմը հետևյալն է՝ Նիշան Աթինիզյան (35%), Մարգրիտ Աթինիզյան (35%) և Դավիթ Աթանեսյան (30%):

Այնքանով, որքանով հայտնի է Թողարկողին և Տեղաբաշխողին, բացի վերը նշված անձանցից, Թողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի գտնվում այլ անձանց հսկողության տակ:

3.13. Տեղեկատվություն Թողարկողի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2015-2016 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2017 թվականի երրորդ եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են Ազդագրում (Հավելված 2-4):

Ցանկության դեպքում ներդրողները Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Կազմակերպության գլխավոր գրասենյակից և մասնաճյուղից, ինչպես նաև ծանոթանալ Թողարկողի պաշտոնական ինտերնետային տնային էջում:

Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2017 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Կազմակերպությունը ներգրավված չէ ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներում:

3.14. Էական պայմանագրերը

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը, չկան:

3.15. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում Պարտատոմսերի թողարկման կազմակերպման, ինչպես նաև թողարկվող Պարտատոմսերի պայմանների որոշման նպատակով որպես խորհրդատու հանդես է գալիս՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն: Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

3.16. Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.firstmortgage.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների ցուցանիշներ

1.1. Առաջին տրանշի պարտատոմսերի ապահովման միջոցների ցուցանիշներ 01.11.2017թ. դրությամբ

ՀՀ դրամ

Տոկոսադրույքի միջակայք	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
6%-7%	138,290,385	91%	5	83%
16%-17%	14,341,558	9%	1	17%
Ընդամենը	**152,631,944**	**100%**	**6**	**100%**

Վարկերի մնացորդների միջակայք	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
10,000,000-20,000,000	72,562,457	48%	5	83%
80,000,000-90,000,000	80,069,486	52%	1	17%
Ընդամենը	**152,631,944**	**100%**	**6**	**100%**

Վարկերի փաստացի մնացորդ /գրավ հարաբերակցություն	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
30%-50%	121,110,887	79%	4	67%
50%-70%	31,521,056	21%	2	33%
Ընդամենը	**152,631,944**	**100%**	**6**	**100%**

Անշարժ գույքի տեսակ	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
Բնակարան	72,562,457	48%	5	83%
Բնակելի տուն	80,069,486	52%	1	17%
Ընդամենը	**152,631,944**	**100%**	**6**	**100%**

Վարկի օգտագործման նպատակ	Մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
Ձեռքբերում	26,320,387	17%	2	33%
Վերանորոգում	111,969,998	73%	3	50%
Կառուցապատում	14,341,558	9%	1	17%
Ընդամենը	**152,631,944**	**100%**	**6**	**100%**

1.2. Առաջին տրանշի պարտատոմսերի ապահովման միջոցների զամբյուղի ցուցանիշներ 01.11.2017թ. դրությամբ

ՀՀ դրամ

Վարկերի մնացորդը	152,631,944
Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն	153%
Վարկերի միջին մնացորդ	25,438,657
Վարկերի մնացորդի մեդիան	14,301,335
Վարկերի առավելագույն մնացորդ	80,069,486
Վարկերի նվազագույն մնացորդ	12,059,276
Վարկերի քանակ	6
Վարկերի տրամադրումից մինչև այսօր միջին ժամկետ (տարի)	3
Վարկերի մինչև մարում միջին ժամկետ (տարի)	12
Վարկերի միջին կշռված տոկոսադրույք	7%
Վարկերի միջին կշռված փաստացի մնացորդ /գրավ հարաբերակցություն	44%

1.3. Երկրորդ տրանշի պարտատոմսերի ապահովման միջոցների ցուցանիշներ 01.11.2017թ. դրությամբ

ՀՀ դրամ

Տոկոսադրույքի միջակայք	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
7%-8%	62,573,742	17%	5	14%
9%-11%	184,759,500	51%	7	19%
12%-14%	94,038,683	26%	17	46%
15%-16%	23,548,203	6%	8	22%
Ընդամենը	**364,920,128**	**100%**	**37**	**100%**

Վարկերի մնացորդների միջակայք	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
500,000-2,000,000	4,193,655	1%	4	11%
2,000,000-3,000,000	22,375,698	6%	9	24%
3,000,000-5,000,000	30,971,440	8%	8	22%
5,000,000-10,000,000	54,382,032	15%	8	22%
10,000,000-20,000,000	62,496,908	17%	4	11%
20,000,000-50,000,000	113,796,891	31%	3	8%
50,000,000-80,000,000	76,703,504	21%	1	3%
Ընդամենը	**364,920,128**	**100%**	**37**	**100%**

Փաստացի մնացորդ /գրավ հարաբերակցություն	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
0%-20%	43,205,330	12%	16	43%
20%-40%	76,697,873	21%	12	32%
40%-50%	54,516,530	15%	5	14%
50%-70%	190,500,395	52%	4	11%
Ընդամենը	**364,920,128**	**100%**	**37**	**100%**

Անշարժ գույքի տեսակ	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
Բնակարան	156,312,791	43%	25	68%
Բնակելի տուն	173,435,236	48%	10	27%
Հասարակական տարածք	19,411,374	5%	1	3%
Հողամաս	15,760,727	4%	1	3%
Ընդամենը	**364,920,128**	**100%**	**37**	**100%**

Վարկի օգտագործման նպատակ	Վարկերի մնացորդ	% զամբյուղի մեջ	Վարկերի քանակ	% զամբյուղի մեջ
Ձեռքբերում	176,367,254	48%	16	43%
Վերանորոգում	162,313,718	44%	20	54%
Կառուցապատում	26,239,156	7%	1	3%
Ընդամենը	**364,920,128**	**100%**	**37**	**100%**

1.4. Երկրորդ տրանշի պարտատոմսերի ապահովման միջոցների զամբյուղի ցուցանիշներ 01.11.2017թ. դրությամբ

ՀՀ դրամ

Վարկերի մնացորդը	364,920,128
Վարկերի մնացորդի և թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքների հարաբերակցություն	151%
Վարկերի միջին մնացորդ	9,862,706
Վարկերի մնացորդի մեդիան	4,201,273
Վարկերի առավելագույն մնացորդ	76,703,504
Վարկերի նվազագույն մնացորդ	691,892
Վարկերի քանակ	37
Վարկերի տրամադրումից մինչև այսօր միջին ժամկետ (տարի)	3
Վարկերի մինչև մարում միջին ժամկետ (տարի)	7
Վարկերի միջին կշռված տոկոսադրույք	11%
Վարկերի միջին կշռված փաստացի մնացորդ /գրավ հարաբերակցություն	44%

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ենթահավելված 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 2)

«30» սեպտեմբերի 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ, ՀՀ, Երևան, Վ.Սարգսյան 10

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա վերջ
1	**Ակտիվներ**		
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	150,938	628,012
1.2	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	332,635	582,505
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	7,365,291	6,979,097
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ		
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ		
1.8	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ		
1.9	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
1.10	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	3,680	3,680
1.11	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում	10,166	
1.11.1	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	7,117	4,000
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	367,872	387,637
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ	2,516	2,516
1.14	Ստացվելիք տոկոսներ		
1.15	Այլ ակտիվներ	39,632	9,450
	Ընդամենը՝ ակտիվներ	**8,279,847**	**8,596,897**
2	**Պարտավորություններ**		
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	89,961	135,443
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	6,415,278	6,730,557
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	211,923	294,554
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	34,170	
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		
2.6	Վարկային կազմակերպության կողմից բողարկված արժեթղթեր		
2.7	Պահուստներ		
2.8	Վճարվելիք գումարներ		
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ	13,941	13,941
2.10	Վճարվելիք տոկոսներ		
2.11	Այլ պարտավորություններ	15,005	32,377
	Ընդամենը՝ պարտավորություններ	**6,780,278**	**7,206,872**
3	**Կապիտալ**		
3.1	Կանոնադրական կապիտալ	1,000,000	1,000,000
3.2	Պահուստներ		
3.2.1	Գլխավոր պահուստ		
3.2.2	Վերագնահատման պահուստներ		
3.3	Կուտակված շահույթ	**499,569**	**390,025**
	Ընդամենը՝ կապիտալ	**1,499,569**	**1,390,025**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ	**8,279,847**	**8,596,897**

Վարկային կազմակերպության վարչության նախագահ (գլխավոր տնօրեն) Դ.Աթաեսյան

Գլխավոր հաշվապահ Գ. Կորեկյան

Ենթահավելված 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 1)

«30» սեպտեմբերի 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ, ՀՀ, Երևան,Վ.Սարգսյան 10

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա հաշվետու ամսաթիվը
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	216,445	207,240	641,283	613,857
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(122,154)	(122,748)	(371,759)	(361,182)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**94,291**	**84,492**	**269,524**	**252,675**
Եկամուտ չահաբաժիններից				
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5,950	5,692	20,447	17,677
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(544)	(603)	(1,424)	(1,763)
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/վնաս				
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ(վնաս)				
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)				
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	5,337	476	11,438	717
Այլտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	(2,250)	(2,619)	(3,459)	(8,455)
Այլ գործառնական եկամուտներ	10,711	4,292	23,059	14,707
Գործառնական եկամուտներ	**113,495**	**91,730**	**319,585**	**275,558**
Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ	(14,841)	7,440	(35,164)	(8,187)
Ընդհանուր վարչական ծախսեր	(42,566)	(39,957)	(138,406)	(130,265)
Այլ գործառնական ծախսեր	(2,267)	(2,494)	(9,731)	(6,897)
Շահույթ/ (վնասը) մինչև հարկումը	**53,821**	**56,719**	**136,284**	**130,209**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(12,350)	(15,800)	(26,740)	(34,774)
Ժամանակաշրջանի շահույթ	**41,471**	**40,919**	**109,544**	**95,435**
Այդ թվում՝				
Մայր կազմակերպության բաժնեմաս				
Չվերահսկվող բաժնեմաս				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**0**	**0**	**0**	**0**
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ				
Դրամական հոսքերի հեջավորում				
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ				
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**0**	**0**	**0**	**0**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**41,471**	**40,919**	**109,544**	**95,435**
Այդ թվում՝				
Մայր կազմակերպության բաժնեմաս	41,471	40,919	109,544	95,435
Չվերահսկվող բաժնեմաս				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _____

Կ Տ

(գործադիր տնօրեն) Դ.Աթանեսյան

Գլխավոր հաշվապահ Գ.Կորեկյան

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ

Ամսաթիվը 01/07/17 -ից
30/09/17

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,000,000	150,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	1,388,560	1,000,000	խախտում առկա չէ
Ն1[1] ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	18.0%	10.0%	խախտում առկա չէ
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	13.0%	25.0%	խախտում առկա չէ
Արտարժութային համախառն դիրքի առավելագույն չափը			

Վարկային կազմկակերպության վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

Ենթահավելված 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 4)

«30» սեպտեմբերի 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ, ՀՀ, Երևան, Վ.Սարգսյան 10

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(369,453)**	**48,994**
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**153,249**	**187,928**
Ստացված տոկոսներ	623,644	618,586
Վճարված տոկոսներ	(366,737)	(340,146)
Կորուստների վերականգնում		
Ստացված շահաբաժիններ		
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	19,023	15,914
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(64,155)	(56,495)
Վճարված հարկեր	(58,526)	(49,931)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(522,702)**	**(138,934)**
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(445,934)	(93,643)
Ներգրավված վարկերի ավելացում (նվազում)	(30,001)	27,313
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		
Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(46,767)	(72,604)
2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(57,478)**	**14,479**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(57,478)	(6,693)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		21,172
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(44,990)**	**(62,981)**
Վճարված շահաբաժիններ		
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	(44,990)	(62,981)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		
Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում		
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,922)	515
Դրամական միջոցների զուտ հոսք	**(471,921)**	**492**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**628,013**	**326,155**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**152,170**	**327,162**

Վարկային կազմակերպության վարչության նախագահ (գլխավոր տնօրեն) Դ. Աթանեսյան

Գլխավոր հաշվապահ Գ. Կորեկյան

Ենթահավելված 3

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 3)
«30»սեպտեմբերի 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ, ՀՀ, Երևան, Վ.Սարգսյան 10
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ գործառնությունների վերահաշվարկից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Ընդամենը սեփական կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված սեփական կապիտալ	Զուտ գումարը									
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)												
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2016թ. (ստուգված)	730,000		730,000							425,647	1,155,647	1,155,647
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												
2. Վերահաշվարկված մնացորդը	730,000		730,000							425,647	1,155,647	1,155,647
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ												
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին												
4. Համապարփակ եկամուտ										95,435	95,435	95,435
5. Շահութաբաժիններ										(47,778)	(47,778)	(47,778)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝												
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում												
7. Ներքին շարժեր, այդ թվում՝												
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին												
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												
7.3. Էմիսիոն վնասի ծածկում												
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում												
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												
8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2016թ. (ստուգված)	730,000		730,000							473,304	1,203,304	1,203,304

Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)												
9. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2017թ. (ստուգված)	1,000,000		1,000,000							390,025	1,390,025	1,390,025
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												
10.Վերահաշվարկված մնացորդը	1,000,000		1,000,000							390,025	1,390,025	1,390,025
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ												
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին												
12. Համապարփակ եկամուտ										109,544	109,544	109,544
13. Շահութաբաժիններ												
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝												
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում												
15. Ներքին շարժեր, այդ թվում՝												
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին												
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												
15.3. Էմիսիոն վնասի ծածկում												
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում												
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ սեպտեմբերի 2017-ր.	1,000,000		1,000,000							499,569	1,499,569	1,499,569

Հաշվետվությունը կազմողի անձնագրային տվյալները _____

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ (գործադիր տնօրեն) _____ Դ.Աթանեսյան

Գլխավոր հաշվապահ _____ Գ.Կորեկյան

ՀԱՎԵԼՎԱԾ 3

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն»
Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի
Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի («Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճանն է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, այլ ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ

բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
30 մարտի 2017թ.

	Ծնթգ.	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	845,973	803,497
Տոկոսային ծախս	4	(487,809)	(453,263)
Զուտ տոկոսային եկամուտ		**358,164**	**350,234**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		4,433	4,684
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(2,115)	(1,675)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**2,318**	**3,009**
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		3,173	7,882
Այլ գործառնական եկամուտ		18,278	29,931
Գործառնական եկամուտ		**381,933**	**391,056**
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ	9	(2,049)	(31,894)
Աշխատակազմի գծով ծախսեր		(129,608)	(125,703)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	5	(81,396)	(75,700)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**168,880**	**157,759**
Շահութահարկի գծով ծախս	6	(36,725)	(33,823)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**132,155**	**123,936**

6-ից 48-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2017թ. մարտի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Դավիթ Աբաջեսյան
Գլխավոր տնօրեն

Գայանե Կոլեկյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	628,012	326,155
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	8	582,505	44,422
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	9	6,979,097	6,865,784
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	387,637	335,636
Ընթացիկ հարկային ակտիվներ		2,516	8,650
Այլ ակտիվներ		13,450	20,614
Ընդամենը ակտիվներ		**8,596,897**	**7,604,941**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	11	7,159,344	6,413,390
Հետաձգված հարկային պարտավորություններ	6	13,941	10,398
Այլ պարտավորություններ		33,587	25,506
Ընդամենը պարտավորություններ		**7,206,872**	**6,449,294**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	12	1,000,000	730,000
Չբաշխված շահույթ		390,025	425,647
Ընդամենը սեփական կապիտալ		**1,390,025**	**1,155,647**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**8,596,897**	**7,604,941**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		849,403	790,449
Վճարված տոկոսներ		(488,142)	(443,004)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ		4,433	4,684
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ		(2,115)	(1,675)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		2,278	223
Այլ ստացված եկամուտ		18,278	30,381
Աշխատավարձ և աշխատակիցներին կատարվող այլ վճարումներ		(127,799)	(122,847)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(61,891)	(52,793)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		(528,664)	(40,160)
Հաճախորդներին տրված վարկեր		(200,844)	(517,633)
Այլ ակտիվներ		6,352	41,150
Գործառնական պարտավորությունների աճ			
Այլ պարտավորություններ		6,334	6,600
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**(522,377)**	**(304,625)**
Վճարված շահութահարկ		(27,048)	(47,013)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(549,425)**	**(351,638)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(23,835)	(4,305)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(23,835)**	**(4,305)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված վարկեր և փոխառություններ		1,341,836	1,217,836
Վարկերի և փոխառությունների մարում		(469,936)	(858,149)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		**871,900**	**359,687**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**298,640**	**3,744**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		3,217	3,546
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		326,155	318,865
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	7	**628,012**	**326,155**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	730,000	301,711	1,031,711
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Շահույթ տարվա համար	-	123,936	123,936
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	**123,936**	**123,936**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**730,000**	**425,647**	**1,155,647**
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	730,000	425,647	1,155,647
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Շահույթ տարվա համար	-	132,155	132,155
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	**132,155**	**132,155**
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործառնություններ սեփականատերերի հետ			
Հատկացումներ և բաշխումներ			
Թողարկված բաժնետոմսեր	270,000	(43,000)	227,000
Հայտարարված շահաբաժիններ	-	(124,777)	(124,777)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	**270,000**	**(167,777)**	**102,223**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**1,000,000**	**390,025**	**1,390,025**

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ն (Կազմակերպություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2004թ. ապրիլի 13-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը հիփոթեքային վարկերի տրամադրումն է անհատներին Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Կազմակերպությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Կազմակերպության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վազգենի Սարգսյանի փ. 10, #122:

Կազմակերպության սեփականատերերի կազմը հետևյալն է՝ Նիշան Աբիհիզյան (35%), Մարգրիտ Աբիհիզյան (35%) և Դավիթ Աբաևեսյան (30%): Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 17-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և հիմնական դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 9-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր» և ծանոթագրություն 18-ում՝ «Ֆինանսական գործիքների իրական արժեք»:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ

սահմանված փոխարժեքով: Ոչ դրամային հողվածները, որոնք չափվում են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող ընթացիկ հաշիվները և մինչև երեք ամիս սկզբնական ժամկետայնությամբ բարձր իրացվելի ֆինանսական ակտիվները, որոնք ենթարկվում են իրական արժեքի ոչ էական փոփոխության ռիսկի ու օգտագործվում են Կազմակերպության կողմից կարճաժամկետ պարտավորվածությունների կառավարման համար: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկը բավարարելու դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Ձուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռքբերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Ձուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնահատված չեն ակտիվ շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնք Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի/վճարման ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք ակտիվ շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Կազմակերպությունը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Կազմակերպությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնաճշվող գնի բացակայության դեպքում, Կազմակերպությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնաճշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Կազմակերպությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Շուկայական և պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները, որոնք Կազմակերպությունը կառավարում է շուկայական կամ պարտքային ռիսկին իր զուտ ենթարկվածության սկզբունքով, չափվում են հիմք ընդունելով այն գինը, որը կստացվեր համապատասխան ռիսկի գծով զուտ երկար դիրքը վաճառելուց (կամ կվճարվեր համապատասխան ռիսկի գծով զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվներին և պարտավորություններին՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի գծով համապատասխան ռիսկի ճշգրտման հիմունքով:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Կազմակերպությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ եկամուտ (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է վերջինիս նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

-	շենքեր	30 տարի
-	համակարգչային սարքավորումներ	3 տարի
-	տնտեսական գույք	1-ից 5 տարի
-	փոխադրամիջոցներ	10 տարի

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսումները կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսումներ:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(զ) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Կազմակերպությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի սահմանափակումների կամ պայմանների խախտումը վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարները և վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված գրավը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնաճշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով միևչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող

դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(է) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորության բնորոշ ռիսկերը:

(ը) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածություններ:

Վարկային պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկային պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Կազմակերպությունն ունի իր վարկային պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(թ) Բաժնետիրական կապիտալ և շահաբաժիններ

Հայաստանի հանրապետության օրենսդրության համաձայն Կազմակերպության բաժնեմասերը ենթակա են մարման բաժնետիրոջ հայեցողությամբ: Կազմակերպությունը պարտավոր է վճարել բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջը տվյալ տարվա զուտ ակտիվների իր բաժնեմասը դրամական միջոցներով, կամ բաժնետիրոջ և Կազմակերպության համաձայնությամբ՝ ակտիվների բնաիրային փոխանցման միջոցով:

ՀՀՄՍ 32 «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացում*» ստանդարտի համաձայն՝ բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, քանի որ ղեկավարությունը եզրակացրել է, որ Ընկերության վերադարձելի ֆինանսական գործիքները բավարարում են ՀՀՄՍ 32 ստանդարտի սեփական կապիտալի ներկայացման բոլոր պահանջները:

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, որի ընթացքում հայտարարվում են:

(ժ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Կազմակերպությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

(h) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսումների հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(i) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները, հնարավոր է, որ ազդեցություն կունենան ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- 2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»* ստանդարտի գործող ուղեցույցները և ներառում է պահանջներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման, ֆինանսական ակտիվների արժեզրկման և հեջի հաշվառման հետ կապված:

  Դասակարգում և չափում

  ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դասեր. ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով առաջադրվող ֆինանսական ակտիվների դասակարգումը հիմնված է այն բիզնես մոդելի, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և այդ ֆինանսական ակտիվի պայմանագրային

դրամական միջոցների հոսքերի բնութագրի վրա: Ստանդարտում չեն կիրառվում ՀՀՍՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող, փոխառություններ և դերիվատիվ պարտքեր և վաճառքի համար մատչելի ակտիվների դասերը: ՖՀՍՍ 9-ի համաձայն՝ այն պայմանագրերում, որոնց հիմնական պայմանագրերը հանդիսանում են ակտիվ այս ստանդարտի շրջանակներում, պարունակվող ածանցյալ գործիքները չեն առանձնացվում: Փոխարենը, ստանդարտի դասակարգման պահանջները կիրառվում են ամբողջությամբ վերցված հիբրիդային գործիքի նկատմամբ: Բաժնային ներդրումները չափվում են իրական արժեքով:

ՖՀՍՍ 9-ում հիմնականում պահպանված են ՀՀՍՍ 39-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների դասակարգման պահանջները:

Արժեզրկում

ՖՀՍՍ 9-ը փոխարինում է ՀՀՍՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով ստացվելիք գումարների, որոշ վարկերի գծով պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի նկատմամբ: Ընդհանուր առմամբ նոր արժեզրկման մոդելով պահանջվում է ճանաչել սպասվող պարտքային վնասը շահույթում կամ վնասում բոլոր ակտիվների, նույնիսկ նոր ստեղծված կամ ձեռքբերված ակտիվների համար: ՖՀՍՍ 9-ի համաձայն՝ արժեզրկումը չափվում է կամ որպես սպասվող պարտքային վնաս, որն առաջանում է ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաջորդ 12 ամիսների ընթացքում (12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս), կամ որպես սպասվող պարտքային վնաս, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում, որոնք կարող են տեղի ունենալ ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ողջ ժամկետի ընթացքում (ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս): Ֆինանսական ակտիվի գծով ճանաչվող սպասվող պարտքային վնասի սկզբնական գումարը հավասար է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին (բացառությամբ որոշ առևտրական դերիվատիվ պարտքերի և վարձակալության գծով ստացվելիք գումարների և պայմանագրային ակտիվների կամ ձեռքբերված կամ ստեղծած բարձր պարտքային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվների): Եթե ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչման պահից, վնասի գծով պահուստը չափվում է գործիքի ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար չափով:

Ֆինանսական ակտիվները, որոնց գծով ճանաչվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 1-ին փուլի ակտիվներ, ֆինանսական ակտիվները, որոնց գծով պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչման պահից, սակայն չի գրանցվել պարտավորությունների չկատարման դեպք, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ակտիվներ և ֆինանսական ակտիվները, որոնց գծով պարտավորությունները չեն կատարվել կամ գրանցվել է այլ հանգամանքներով պայմանավորված պարտքային ռիսկի էական աճ, դիտարկվում են որպես 3-րդ փուլի ակտիվներ:

Սպասվող պարտքային վնասի չափումը պետք է լինի անկողմնակալ և հիմնված լինի հավանականության գործոնի վրա, պետք է արտացոլի փողի ժամանակային արժեքը և ներառի ողջամիտ ու հիմնավորված տեղեկատվություն նախկինում տեղի ունեցած դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ, որը հասանելի է առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: ՖՀՍՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասը ճանաչվում է ավելի վաղ, քան դա

պահանջվում է ՀՀՍՍ 39-ով, որի արդյունքում մեծանում է շահույթի կամ վնասի փոփոխականությունը: Դա կարող է հանգեցնել նաև արժեզրկման գծով պահուստի աճին, քանի որ բոլոր ֆինանսական ակտիվները կգնահատվեն առնվազն 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասի տեսանկյունից, և ֆինանսական ակտիվների խումբը, որի համար կիրառելի կլինի գործիքի ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասը, հավանաբար ավելի մեծ կլինի այն խմբից, որի համար առկա կլինի արժեզրկման անկողմնակալ վկայություն՝ համաձայն ՀՀՍՍ 39-ի:

Սպասվող պարտքային վնասի հաշվարկի համար հավանաբար կկիրառվի պարտավորությունների չկատարման հավանականություն x պարտավորությունների չկատարման արդյունքում առաջացող վնաս x պարտքի գումարը պարտավորությունների չկատարման պահին (PD x LGD x EAD) մոտեցումը (առնվազն որոշ պորտֆելների համար)՝ կախված ռիսկի տեսակից, ռիսկին ենթարկվածության փուլից՝ ըստ ՖՀՍՍ 9-ի դասակարգման, առանձին կամ հավաքական հիմունքով արժեզրկման գնահատումից և այլ գործոններից:

Նոր ստանդարտի կիրառումը

Դասակարգման, չափման և արժեզրկման գնահատման պահանջները որպես կանոն կիրառվում են հետընթաց (որոշակի բացառություններով)՝ ճշգրտելով չբաշխված շահույթի մնացորդը տարեսկզբի դրությամբ և պահուստները ստանդարտի կիրառման ամսաթվի դրությամբ՝ առանց համադրելի տվյալները վերահաշվարկելու պահանջի:

ՖՀՍՍ 9-ը կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: Կազմակերպությունը մտադիր չէ կիրառել ստանդարտը ժամանակից շուտ:

Կազմակերպությունը դեռ չի սկսել գնահատել ՖՀՍՍ 9-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա և չի ձեռնարկել որևէ քայլ ՖՀՍՍ 9-ի կիրառմանը նախապատրաստվելու ուղղությամբ: Համապատասխանաբար, հնարավոր չէ գնահատել ՖՀՍՍ 9-ի կիրառման ազդեցությունը Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա: Ներկայումս Կազմակերպությունը մշակում է ՖՀՍՍ 9-ի կիրառման ծրագիրը:

- ՖՀՍՍ 16 *«Վարձակալություն»* ստանդարտը փոխարինում է ՀՀՍՍ 17 *«Վարձակալություն»*, ՖՀՍՄԿ մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ մեկնաբանություն 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»,* ՄՄԿ մեկնաբանություն 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»* սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները: Այս ստանդարտով այլևս չի կիրառվում կրկնակի հաշվառման մոդելը վարձակալների համար, որով տարանջատվում է հաշվեկշռային ֆինանսական վարձակալությունը և արտահաշվեկշռային գործառնական վարձակալությունը: Փոխարենը կիրառվում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել, որը նման է ֆինանսական վարձակալության ներկայիս հաշվառման մոդելին: Վարձատուների համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուները շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի: ՖՀՍՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ միաժամանակ ՖՀՍՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ»* ստանդարտը կիրառելու պայմանով: Կազմակերպությունը մտադիր չէ կիրառել ստանդարտը ժամանակից շուտ: Կազմակերպությունը գնահատում է ՖՀՍՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Զուտ տոկոսային եկամուտ

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	834,133	798,660
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	8,056	3,495
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,784	1,342
	845,973	**803,497**
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	487,809	453,263
	487,809	**453,263**
Զուտ տոկոսային եկամուտ	**358,164**	**350,234**

5 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	19,505	22,909
Մասնագիտական ծառայություններ	13,771	8,963
Վերանորոգման և պահպանման ծախսեր	9,637	9,528
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	8,122	5,228
Գործուղման ծախսեր	4,581	5,448
Գովազդի և շուկայավարման ծախսեր	3,135	5,678
Այլ	22,645	17,946
	81,396	**75,700**

6 Շահութահարկի գծով ծախս

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	33,182	25,759
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	3,543	8,064
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**36,725**	**33,823**

2016թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2015թ-ին՝ 20%):

Գործող հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2016թ. հազ. դրամ	%	2015թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	168,880		157,759	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	33,776	20.0	31,552	20.0
Չնվազեցվող ծախսեր	2,949	1.7	2,271	1.4
	36,725	**21.7**	**33,823**	**21.4**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

2016թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(740)	(1,670)	(2,410)
Հաճախորդներին տրված վարկեր	(5,072)	(1,685)	(6,757)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(1,495)	(1,524)	(3,019)
Վարկեր և փոխառություններ	(7,074)	896	(6,178)
Այլ պարտավորություններ	3,983	440	4,423
	(10,398)	**(3,543)**	**(13,941)**

2015թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(636)	(104)	(740)
Հաճախորդներին տրված վարկեր	3,392	(8,464)	(5,072)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(836)	(659)	(1,495)
Վարկեր և փոխառություններ	(7,490)	416	(7,074)
Այլ պարտավորություններ	3,236	747	3,983
	(2,334)	**(8,064)**	**(10,398)**

7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	5,759	454
Ընթացիկ հաշիվներ		
- 5 խոշոր հայկական բանկեր	107,521	169,680
- միջին չափի հայկական բանկեր	123,310	12,108
Ընդամենը ընթացիկ հաշիվներ	**230,831**	**181,788**
Դրամական միջոցների համարժեքներ		
Ժամկետային ավանդներ բանկերում		
- 5 խոշոր հայկական բանկեր	100,630	61,205
- միջին չափի հայկական բանկեր	290,792	82,708
Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում	**391,422**	**143,913**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**628,012**	**326,155**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի միջոցներ երկու բանկում, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը (2015թ-ին՝ մեկ բանկում): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 610,176 հազար դրամ (2015թ-ին՝ 158,640 հազար դրամ):

8 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		
Ժամկետային ավանդներ բանկերում		
- 5 խոշոր հայկական բանկեր	-	44,422
- միջին չափի հայկական բանկեր	582,505	-
Ընդամենը բանկերում տեղաբաշխված միջոցներ	**582,505**	**44,422**

Բանկերում տեղաբաշխված միջոցներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում (2015թ-ին նման միջոցների չկային), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը (2015թ-ին՝ մեկ բանկում): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 582,505 հազար դրամ (2015թ-ին՝ զրո):

9 Հաճախորդներին տրված վարկեր

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	-	57,405
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**-**	**57,405**
Անհատներին տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	6,972,630	6,746,026
Սպառողական վարկեր	103,064	168,769
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**7,075,694**	**6,914,795**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	7,075,694	6,972,200
Արժեզրկման գծով պահուստ	(96,597)	(106,416)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**6,979,097**	**6,865,784**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում.

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	689	105,727	106,416
Զուտ (վերականգնում)/ծախս	(689)	2,738	2,049
Զուտ դուրսգրումներ	-	(11,868)	(11,868)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	**-**	**96,597**	**96,597**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում.

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	714	89,249	89,963
Զուտ (վերականգնում)/ծախս	(25)	31,919	31,894
Զուտ դուրսգրումներ	-	(15,441)	(15,441)
Մնացորդը տարեվերջի դրությամբ	**689**	**105,727**	**106,416**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	6,828,961	68,308	6,760,653	1.0%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	14,875	2,308	12,567	15.5%
- մինչև 30 օր ժամկետանց	18,618	4,577	14,041	24.6%
- 30-89 օր ժամկետանց	31,088	9,402	21,686	30.2%
- 90-179 օր ժամկետանց	14,023	2,510	11,513	17.9%
- ավելի քան 360 օր ժամկետանց	65,065	8,058	57,007	12.4%
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	**143,669**	**26,855**	**116,814**	**18.7%**
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**6,972,630**	**95,163**	**6,877,467**	**1.4%**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	101,604	1,142	100,462	1.1%
- 90-179 օր ժամկետանց	1,460	292	1,168	20.0%
Ընդամենը սպառողական վարկեր	**103,064**	**1,434**	**101,630**	**1.4%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**7,075,694**	**96,597**	**6,979,097**	**1.4%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**7,075,694**	**96,597**	**6,979,097**	**1.4%**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	57,405	689	56,716	1.2%
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**57,405**	**689**	**56,716**	**1.2%**
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	6,480,218	64,916	6,415,302	1.0%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	82,176	6,917	75,259	8.4%
- մինչև 30 օր ժամկետանց	16,458	1,206	15,252	7.3%
- 30-89 օր ժամկետանց	48,165	7,515	40,650	15.6%
- 90-179 օր ժամկետանց	16,554	2,101	14,453	12.7%
- 180-360 օր ժամկետանց	85,536	17,271	68,265	20.2%
- ավելի քան 360 օր ժամկետանց	16,919	3,681	13,238	21.8%
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	**265,808**	**38,691**	**227,117**	**14.6%**
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**6,746,026**	**103,607**	**6,642,419**	**1.5%**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	164,214	1,751	162,463	1.1%
- մինչև 30 օր ժամկետանց	241	3	238	1.2%
- 30-89 օր ժամկետանց	2,028	20	2,008	1.0%
- 90-179 օր ժամկետանց	589	7	582	1.2%
- 180-360 օր ժամկետանց	1,697	339	1,358	20%
Ընդամենը սպառողական վարկեր	**168,769**	**2,120**	**166,649**	**1.3%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**6,914,795**	**105,727**	**6,809,068**	**1.5%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**6,972,200**	**106,416**	**6,865,784**	**1.5%**

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Կազմակերպությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- չարժեզրկված հիփոթեքային վարկերի համար պատմական վնասի տարեկան դրույքը կազմում է 1.0%,
- հիփոթեքային վարկերի համար գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 36 ամսով և դատական կարգով գրավադրված գույքի վաճառքի դեպքում կիրառվում է մինչև 40% զեղչ գրավի սկզբնապես գնահատված արժեքի գծով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե, օրինակ, դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 209,373 հազար դրամով (2015թ-ին՝ 204,272 հազար դրամով):

(գ) Անհատներին տրված վարկերի գրավի վերլուծություն

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 75% վարկի գումար/գրավի արժեք հարաբերակցությամբ: Հիփոթեքային վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է համապատասխան վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման պահին և չի վերանայվել մինչև հաշվետու ամսաթիվը՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար:

(ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի մեկ վարկառու (2015թ-ին՝ մեկ), որին տրամադրված վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 169,521 հազար դրամ (2015թ-ին՝ 151,510 հազար դրամ):

(զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 13-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

10 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Համակարգչ. սարքավորումն.	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	371,298	13,464	39,933	24,076	4,666	453,437
Ավելացումներ	59,183	2,477	9,846	-	-	71,506
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(1,678)	-	-	(1,678)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**430,481**	**15,941**	**48,101**	**24,076**	**4,666**	**523,265**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	60,822	10,584	37,605	4,237	4,553	117,801
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	14,261	1,782	987	2,423	52	19,505
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(1,678)	-	-	(1,678)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	**75,083**	**12,366**	**36,914**	**6,660**	**4,605**	**135,628**
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2016թ.	**355,398**	**3,575**	**11,187**	**17,416**	**61**	**387,637**

հազ. դրամ	Շենքեր	Համակարգչ. սարքավորումն.	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	371,298	11,634	38,451	24,076	4,666	450,125
Ավելացումներ	-	2,591	1,714	-	-	4,305
Օտարումներ/դուրսգրումներ	-	(761)	(232)	-	-	(993)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**371,298**	**13,464**	**39,933**	**24,076**	**4,666**	**453,437**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	48,411	10,078	31,089	1,807	4,500	95,885
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	12,411	1,267	6,748	2,430	53	22,909
Օտարումներ/դուրսգրումներ	-	(761)	(232)	-	-	(993)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**60,822**	**10,584**	**37,605**	**4,237**	**4,553**	**117,801**
Հաշվեկշռային արժեք						
առ 31 դեկտեմբերի 2015թ.	**310,476**	**2,880**	**2,328**	**19,839**	**113**	**335,636**

11 Վարկեր և փոխառություններ

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Վարկեր պետական ֆինանսական կազմակերպություններից	3,440,225	3,142,859
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	3,251,952	2,324,234
Վարկեր ոչ առևտրային կազմակերպություններից	176,051	270,675
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	135,443	209,350
Փոխառություններ բաժնետիրոջից	113,583	60,956
Վարկեր այլ կապակցված կողմերից	4,920	405,316
Այլ	37,170	-
	7,159,344	**6,413,390**

2016թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Կազմակերությունն ունի հինգ կազմակերպությունից ստացված վարկեր և փոխառություններ (2015թ-ին՝ վեց կազմակերպությունից), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 7,003,671 հազար դրամ (2015թ-ին՝ 6,333,214 հազար դրամ):

2016թ. դեկտեբերի 31-ի դրությամբ 6,920,468 հազար դրամ գումարով վարկերը և փոխառությունները (2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ՝ 5,775,031 հազար դրամ) ապահովված են 5,832,925 հազար դրամ գումարով հաճախորդներին տրված վարկերով (2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ՝ 5,803,756 հազար դրամ) և Կազմակերպության 1,000,000 հազար դրամ գումարով բաժնետիրական կապիտալով (2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ՝ 730,000 հազար դրամ) (ծանոթագրություն 12):

12 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 20,000 սովորական բաժնետոմսից (2015թ-ին՝ 20,000): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ (2015թ-ին՝ 36,500 դրամ): 2016թ. ընթացքում Կազմակերպությունը մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 36,500 դրամից ավելացրել է 50,000 դրամի, որի արդյունքում բաժնետիրական կապիտալը համալրվել է 270,000 հազար դրամով և փոփոխվել է բաժնեմասերի կառուցվածքը:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2016թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բաժնետիրական կապիտալը գրավադրված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 11):

(բ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2016թ. ընթացքում Կազմակերպության կողմից հայտարարվել և վճարվել են 167,777 հազար դրամ գումարով շահաբաժիններ (2015թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել):

13 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպություն, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար: Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթի համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Տնօրենների խորհրդի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծության մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2016թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	478,909	-	-	-	-	149,103	628,012
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	145,491	437,014	-	-	-	582,505
Հաճախորդներին տրված վարկեր	149,429	140,856	305,788	2,974,537	3,408,487	-	6,979,097
	628,338	**286,347**	**742,802**	**2,974,537**	**3,408,487**	**149,103**	**8,189,614**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	325,355	174,124	445,636	3,633,935	2,580,294	-	7,159,344
	325,355	**174,124**	**445,636**	**3,633,935**	**2,580,294**	**-**	**7,159,344**
	302,983	**112,223**	**297,166**	**(659,398)**	**828,193**	**149,103**	**1,030,270**
31 դեկտեմբերի 2015թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	271,732	-	-	-	-	54,423	326,155
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	44,422	-	-	-	-	44,422
Հաճախորդներին տրված վարկեր	147,433	208,005	283,855	2,800,984	3,425,507	-	6,865,784
	419,165	**252,427**	**283,855**	**2,800,984**	**3,425,507**	**54,423**	**7,236,361**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	261,780	553,810	425,421	3,027,575	2,144,804	-	6,413,390
	261,780	**553,810**	**425,421**	**3,027,575**	**2,144,804**	**-**	**6,413,390**
	157,385	**(301,383)**	**(141,566)**	**(226,591)**	**1,280,703**	**54,423**	**822,971**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2016թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2015թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6.4%	1.6%	3.2%	2.2%
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	4.7%	-	2.5%
Հաճախորդներին տրված վարկեր	11.8%	11.5%	12.6%	12.5%
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	8.4%	5.7%	8.6%	6.6%

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերաձայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը (վերագնորոշման ռիսկ), որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2016թ. ու 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	4,625	2,373
100 բկ զուգահեռ աճ	(4,625)	(2,373)

(ii) Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլար		
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	401,546	184,759
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	582,505	44,422
Հաճախորդներին տրված վարկեր	2,970,873	3,117,386
Ընդամենը ակտիվներ	**3,954,924**	**3,346,567**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	(3,486,808)	(2,956,815)
Ընդամենը պարտավորություններ	**(3,486,808)**	**(2,956,815)**
Զուտ դիրքը	**468,116**	**389,752**

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացվել է զուտ հիմունքով՝ առանց հարկերը հաշվի առնելու և հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	46,812	38,975

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար: Կազմակերպության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են իրավաբանական հարցերով խորհրդատուին: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության վրա վարկունակության գնահատման շեշտադրմամբ: Տնօրենների խորհուրդն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Կազմակերպությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Կազմակերպության պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	622,253	325,701
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	582,505	44,422
Հաճախորդներին տրված վարկեր	6,979,097	6,865,784
Պարտքային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	**8,183,855**	**7,235,907**

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 9-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ունի մեկ պարտապան (2015թ-ին՝ բացակայում էին), որի հետ կապված պարտքային ռիսկը գերազանցում է ընդհանուր պարտքային ռիսկի 10%-ը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պարտապանի գծով մնացորդը կազմում է 984,531 հազար դրամ (2015թ-ին՝ զրո):

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման հիմնական պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման հիմնական պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Կազմակերպության կամ պայմանագրային կողմերի կողմից պարտակարությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Կազմակերպությունը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման հիմնական պայմանագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական պարտավո-րության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆինանսական պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Վարկեր և փոխառություններ	(7,159,395)	-	-	5,832,925	-	(1,326,470)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(7,159,395)**	**-**	**-**	**5,832,925**	**-**	**(1,326,470)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման հիմնական պայմանագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական պարտավո-րության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆինանսական պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Վարկեր և փոխառություններ	(6,413,390)	-	(6,413,390)	5,803,756	-	(609,634)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(6,413,390)**	**-**	**(6,413,390)**	**5,803,756**	**-**	**(609,634)**

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկավորման պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ վարկավորման պարտավորվածությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	44,025	166,888	179,966	474,845	8,384,837	9,250,561	7,159,344
Այլ ֆինանսական պարտավորություններ	7,373	-	-	-	-	7,373	7,373
Ընդամենը պարտավորություններ	**51,398**	**166,888**	**179,966**	**474,845**	**8,384,837**	**9,257,934**	**7,166,717**
Վարկային պարտավորվածություններ	**67,510**	**-**	**-**	**-**	**-**	**67,510**	**67,510**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	170,154	203,043	656,028	637,004	6,589,691	8,255,920	6,413,390
Այլ ֆինանսական պարտավորություններ	6,256	-	-	-	-	6,256	6,256
Ընդամենը պարտավորություններ	**176,410**	**203,043**	**656,028**	**637,004**	**6,589,691**	**8,262,176**	**6,419,646**
Վարկային պարտավորվածություններ	**8,466**	-	-	-	-	**8,466**	**8,466**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	236,589	391,423	-	-	-	-	-	628,012
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	-	582,505	-	-	-	-	582,505
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	-	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	58,472	90,957	446,644	2,907,711	3,408,487	-	66,826	6,979,097
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	387,637	-	387,637
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	2,516	-	-	-	-	2,516
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	13,450	-	13,450
Ընդամենը ակտիվներ	**295,061**	**482,380**	**1,031,665**	**2,907,711**	**3,408,487**	**404,767**	**66,826**	**8,596,897**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	161,025	164,330	619,760	3,633,935	2,580,294	-	-	7,159,344
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	13,941	-	13,941
Այլ պարտավորություններ	19,337	-	14,250	-	-	-	-	33,587
Ընդամենը պարտավորություններ	**180,362**	**164,330**	**634,010**	**3,633,935**	**2,580,294**	**13,941**	**-**	**7,206,872**
Զուտ դիրքը	**114,699**	**318,050**	**397,655**	**(726,224)**	**828,193**	**390,826**	**66,826**	**1,390,025**

Վերը նշված աղյուսակում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ժամկետանց մասերը, մինչդեռ ծանոթագրություն 9-ի (ա) կետում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ընդհանուր մնացորդները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	182,242	143,913	-	-	-	-	-	326,155
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	-	44,422	-	-	-	-	44,422
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	-	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	57,479	89,954	491,860	2,763,807	3,425,507	-	37,177	6,865,784
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	335,636	-	335,636
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	8,650	-	-	-	-	8,650
Այլ ակտիվներ	16,270	-	-	-	-	4,344	-	20,614
Ընդամենը ակտիվներ	**255,991**	**233,867**	**544,932**	**2,763,807**	**3,425,507**	**343,660**	**37,177**	**7,604,941**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	127,607	134,173	979,231	3,027,575	2,144,804	-	-	6,413,390
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	10,398	-	10,398
Այլ պարտավորություններ	13,063	-	12,443	-	-	-	-	25,506
Ընդամենը պարտավորություններ	**140,670**	**134,173**	**991,674**	**3,027,575**	**2,144,804**	**10,398**	**-**	**6,449,294**
Զուտ դիրքը	**115,321**	**99,694**	**(446,742)**	**(263,768)**	**1,280,703**	**333,262**	**37,177**	**1,155,647**

Վերը նշված աղյուսակում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ժամկետանց մասերը, մինչդեռ ծանոթագրություն 9-ի (ա) կետում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ընդհանուր մնացորդները:

14 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են կանխիկ արտարժութային գործառնություններ՝ բացառությամբ այն գործառնությունների, որոնք կապված են վարկերի կամ նմանատիպ վարկային գործիքների մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն 1,000,000 հազար դրամ գումարի չափով նվազագույն ընդհանուր կապիտալ: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը բավարարում է նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջները:

ՀՀ ԿԲ-ի կանոնակարգող պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են կանխիկ արտարժույթի գործառնություններ՝ բացառությամբ այն գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության («կապիտալի համարժեքության ցուցանիշը») նվազագույն մեծությունը: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հարաբերկացության սահմանված նվազագույն մեծությունը կազմում է 10%:

Կազմակերպությունն ապահովել է կապիտալի համարժեքության ցուցանիշը 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված է կապիտալի համարժեքության ցուցանիշի հաշվարկը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների հիման վրա 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
	Աուդիտ չանցած	Աուդիտ չանցած
Բաժնետիրական կապիտալ	1,000,000	730,000
Չբաշխված շահույթ	390,025	425,647
ՀՀ ԿԲ-ի հաշվապահական հաշվառման սկզբունքների ճշգրտումներ	(127,847)	(119,557)
Ընդամենը կապիտալ	**1,262,178**	**1,036,090**
Ռիսկով կշռված ակտիվներ	**7,536,003**	**6,808,599**
Կապիտալի համարժեքության ցուցանիշ	**16.7%**	**15.2%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը չի փոփոխվել:

15 Պարտավորվածություններ

Կազմակերպությունն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված վարկային պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	**67,510**	**8,466**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային վարկային պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս վարկային պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս տրամադրման ժամկետը:

16 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպությունն ամբողջությամբ ապահովագրված չէ իր գրասենյակի և սարքավորումների վնասներից, գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությունը վերաբերող պատահարներից: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

(գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական վիճակի վրա, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

17 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող կողմ:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը ղեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	80,255	74,650

Ստորև ներկայացված են ղեկավարության հետ (որոնց անդամներին միասին պատկանում է բաժնետիրական կապիտալի 30%-ը) (2015թ-ին՝ բաժնետիրական կապիտալի 10%-ը)) գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները ղեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2016թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված փոխառություններ (համախառն)	170,108	6.0%	105,590	6.0%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(1,701)		(1,162)	
Ստացված փոխառություններ	113,583	10.0%	60,956	10.0%

Վարկերը տրամադրվել են ՀՀ դրամով ենթակա են մարման 2028-2029թթ. և ապահովված են անշարժ գույքով: Փոխառությունները տրամադրվել են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, ենթակա են մարման մինչև 2021թ. և գրավով ապահովված չեն:

Ստորև ներկայացված են ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ	7,723	8,827
Տոկոսային ծախս	(17,675)	(4,616)

(գ) Գործարքներ սեփականատերերի հետ

Սեփականատերեր են հանդիսանում այն բաժնետերերը, որոնց պատկանում է Կազմակերպության բաժնետիրական կապիտալի ավելի քան 20%-ը: Կազմակերպության ղեկավար անձնակազմի անդամ հանդիսացող սեփականատիրոջ հետ իրականացվող գործարքները ներկայացված են ծանոթագրություն 17-ի (բ) կետում:

Ստորև ներկայացված են 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ. և 2015թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2016թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված փոխառություններ (համախառն)	-		36,956	6.0%
Արժեզրկման գծով պահուստ	-		(443)	
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	1,652		1,956	

Բաժնետերերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

(դ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են բաժնետերերի և ղեկավարության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ. և 2015թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2016թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված փոխառություններ (համախառն)	325	7.5%	49,689	7.5%
Արժեզրկման գծով պահուստ	(3)		(497)	
Ստացված փոխառություններ	4,920	8.0%	405,316	8.0%
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	3,777		3,533	
Տոկոսային ծախս	(5,775)		(28,224)	

18 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնաճշվող պայմանական արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքին: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,680 հազար դրամ (2015թ-ին՝ 3,680 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնաճշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնային գործիքների ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
3-րդ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
Տնօրենների խորհրդին

Մենք իրականացրել ենք «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի («Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն այս ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Այդ ռիսկերը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, Հ3 օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն,
շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International")
կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
16 մարտի 2016թ.

	Ծնթգ.	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	803,497	737,189
Տոկոսային ծախս	4	(453,263)	(416,703)
Զուտ տոկոսային եկամուտ		**350,234**	**320,486**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		4,684	5,681
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(1,675)	(2,464)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**3,009**	**3,217**
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		7,882	54,147
Այլ գործառնական եկամուտ	5	29,931	27,767
Գործառնական եկամուտ		**391,056**	**405,617**
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ	10	(31,894)	(21,740)
Աշխատակազմի գծով ծախսեր		(125,703)	(101,245)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	6	(75,700)	(79,383)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**157,759**	**203,249**
Շահութահարկի գծով ծախս	7	(33,823)	(34,234)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**123,936**	**169,015**

5-ից 49-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2016թ. մարտի 16-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Դավիթ Աբաճեսյան
Գլխավոր տնօրեն

Գայանե Կորեկյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	326,155	318,865
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	9	44,422	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	10	6,865,784	6,309,346
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	11	335,636	354,240
Ընթացիկ հարկային ակտիվներ		8,650	-
Այլ ակտիվներ		20,614	62,148
Ընդամենը ակտիվներ		**7,604,941**	**7,048,279**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	12	6,413,390	5,985,636
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	12,604
Հետաձգված հարկային պարտավորություններ	7	10,398	2,334
Այլ պարտավորություններ		25,506	15,994
Ընդամենը պարտավորություններ		**6,449,294**	**6,016,568**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	13	730,000	730,000
Չբաշխված շահույթ		425,647	301,711
Ընդամենը սեփական կապիտալ		**1,155,647**	**1,031,711**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**7,604,941**	**7,048,279**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		790,449	736,386
Վճարված տոկոսներ		(443,004)	(414,977)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ		4,684	5,681
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ		(1,675)	(2,464)
Զուտ մուտքեր/(ելքեր) արտարժույթով գործառնություններից		223	(1,463)
Այլ ստացված եկամուտ		30,381	24,948
Աշխատավարձ և աշխատակիցներին կատարվող այլ վճարումներ		(122,847)	(98,408)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(52,793)	(56,119)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		(40,160)	449,273
Հաճախորդներին տրված վարկեր		(517,633)	(220,897)
Այլ ակտիվներ		41,150	(2,074)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Այլ պարտավորություններ		6,600	(2,616)
Գործառնական գործունեության միջոցով (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**(304,625)**	**417,270**
Վճարված շահութահարկ		(47,013)	(22,321)
Գործառնական գործունեության միջոցով (օգտագործված)/ստացված դրամական միջոցների հոսքեր		**(351,638)**	**394,949**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,305)	(26,633)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		-	5,063
Ներդրումային գործունեության մեջ օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(4,305)**	**(21,570)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
		-	-
Ստացված վարկեր և փոխառություններ		1,217,836	909,405
Վարկերի և փոխառությունների մարում		(858,149)	(1,120,582)
Ֆինանսավորման գործունեության միջոցով ստացված/(օգտագործված) դրամական միջոցների հոսքեր		**359,687**	**(211,177)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**3,744**	**162,202**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		3,546	39,152
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ		318,865	117,511
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	8	**326,155**	**318,865**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	730,000	132,696	862,696
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Շահույթ տարվա համար	-	169,015	169,015
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**-**	**169,015**	**169,015**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**730,000**	**301,711**	**1,031,711**
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	730,000	301,711	1,031,711
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Շահույթ տարվա համար	-	123,936	123,936
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**-**	**123,936**	**123,936**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**730,000**	**425,647**	**1,155,647**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ն (Կազմակերպություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2004թ. ապրիլի 13-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը հիփոթեքային վարկերի տրամադրումն է անհատներին Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Կազմակերպությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Կազմակերպության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վազգենի Սարգսյանի փ. 10, #122:

Կազմակերպության սեփականատերերի կազմը հետևյալն է՝ Նիշան Աբիհիզյան (45%), Մարգրիտ Աբիհիզյան (45%) և Դավիթ Աբաեսյան (10%): Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և հիմնական դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 10-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր» և ծանոթագրություն 19-ում՝ «Ֆինանսական գործիքների իրական արժեք»

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(ը) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող ընթացիկ հաշիվները և մինչև երեք ամիս սկզբնական ժամկետայնությամբ բարձր իրացվելի ֆինանսական ակտիվները, որոնք ենթարկվում են իրական արժեքի ոչ էական փոփոխության ռիսկի ու օգտագործվում են Կազմակերպության կողմից կարճաժամկետ պարտավորվածությունների կառավարման համար: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկը բավարարելու դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Ջուտ ստացվելիք դիրքում գտնվող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռքբերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Ջուտ վճարվելիք դիրքում գտնվող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների

դասից, եթե Կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնք Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք ակտիվ շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Կազմակերպությունը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Կազմակերպությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Կազմակերպությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Կազմակերպությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Շուկայական և պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները, որոնք Կազմակերպությունը կառավարում է շուկայական կամ պարտքային ռիսկին իր զուտ ենթարկվածության սկզբունքով, չափվում են հիմք ընդունելով այն գինը, որը կստացվեր համապատասխան ռիսկի գծով զուտ երկար դիրքը վաճառելուց (կամ կվճարվեր համապատասխան ռիսկի գծով զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվներին և պարտավորություններին՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի գծով համապատասխան ռիսկի ճշգրտման հիմունքով:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Կազմակերպությունը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ եկամուտ (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունն իրականացնում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է վերջինիս նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

– շենքեր	30 տարի
– համակարգչային սարքավորումներ	3 տարի
– տնտեսական գույք	1-ից 5 տարի
– փոխադրամիջոցներ	10 տարի

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսումները կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսումներ:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(զ) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Կազմակերպությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի սահմանափակումների կամ պայմանների խախտումը վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարները և վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված գրավը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնահատվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամատեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամատեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(է) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ը) Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածություններ և երաշխիքներ:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Կազմակերպությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկավորման այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկավորման այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկավորման պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Կազմակերպությունն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկավորման պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ քողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(բ) Կանոնադրական կապիտալ և շահաբաժիններ

Հայաստանի հանրապետության օրենսդրության համաձայն Կազմակերպության բաժնեմասերը ենթակա են մարման բաժնետիրոջ հայեցողությամբ: Կազմակերպությունը պարտավոր է վճարել բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջը տվյալ տարվա զուտ ակտիվների իր բաժնեմասը դրամական միջոցներով, կամ բաժնետիրոջ և Կազմակերպության համաձայնությամբ՝ ակտիվների բնաիրային փոխանցման միջոցով:

ՀՀՄՍ 32 «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացում*» ստանդարտի համաձայն՝ բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, քանի որ ղեկավարությունը եզրակացրել է, որ Ընկերության վերադարձելի ֆինանսական գործիքները բավարարում են ՀՀՄՍ 32 ստանդարտի սեփական կապիտալի ներկայացման բոլոր պահանջները:

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, որի ընթացքում հայտարարվում են:

(ժ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Կազմակերպությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

(հ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսումների հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ւ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	**Պահանջների ամփոփ նկարագիր**	**Հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա**
ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»*	2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»* ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը պարունակում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, ներառյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող նոր սպասվող վնասի մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման և ապաճանաչման ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:	Կազմակերպությունը գնահատում է ՖՀՄՍ 9-ի կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	Պահանջների ամփոփ նկարագիր	Հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
Տարբեր *«ՖՀՄՍ-ների կատարելագործումներ»*	Տարբեր *«ՖՀՄՍ-ների կատարելագործումները»* դիտարկվել են առանձին՝ ըստ յուրաքանչյուր ստանդարտի: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, կգործեն 2016թ. հունվարի 1-ից ոչ շուտ:	Կազմակերպությունը դեռևս չի գնահատել կատարելագործումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Զուտ տոկոսային եկամուտ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	798,660	722,533
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	3,495	11,802
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,342	2,854
	803,497	**737,189**
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	453,263	416,703
	453,263	**416,703**
Զուտ տոկոսային եկամուտ	**350,234**	**320,486**

5 Այլ գործառնական եկամուտ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ստացված տուժեր և տուգանքներ	28,623	24,833
Օգուտ հիմնական միջոցների օտարումից	-	5,063
Այլ եկամուտ/(ծախս)	1,308	(2,129)
	29,931	**27,767**

6 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	22,909	23,264
Վերանորոգման և պահպանման ծախսեր	9,528	6,764
Մասնագիտական ծառայություններ	8,963	7,191
Գովազդի և շուկայավարման ծախսեր	5,678	7,152
Գործուղման ծախսեր	5,448	8,870
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	5,228	5,872
Ներկայացուցչական ծախսեր	3,328	3,164
Հաղորդակցության և տեղեկատվական ծառայություններ	2,865	3,764
Գրասենյակային ծախսեր	3,075	3,277
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	2,663	2,663
Այլ	6,015	7,402
	75,700	**79,383**

7 Շահութահարկի գծով ծախս

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	25,759	35,629
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	8,064	(1,395)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	**33,823**	**34,234**

2015թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2014թ-ին՝ 20%):

Գործող հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2015թ. հազ. դրամ	%	2014թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	157,759		203,249	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	31,552	20.0	40,650	20.0
Չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտ)	2,271	1.4	(6,416)	(3.2)
	33,823	**21.4**	**34,234**	**16.8**

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2015թ. և 2014թ. ընթացքում:

2015թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(636)	(104)	(740)
Հաճախորդներին տրված վարկեր	3,392	(8,464)	(5,072)
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	(836)	(659)	(1,495)
Վարկեր և փոխառություններ	(7,490)	416	(7,074)
Այլ պարտավորություններ	3,236	747	3,983
	(2,334)	**(8,064)**	**(10,398)**

2014թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	(636)	(636)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(1,099)	1,099	-
Հաճախորդներին տրված վարկեր	(4,833)	8,225	3,392
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	(836)	(836)
Վարկեր և փոխառություններ	-	(7,490)	(7,490)
Այլ պարտավորություններ	2,203	1,033	3,236
	(3,729)	**1,395**	**(2,334)**

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	454	1,008
Ընթացիկ հաշիվներ		
- 5 խոշոր հայկական բանկեր	169,680	164,102
- միջին չափի հայկական բանկեր	12,108	10,676
Ընդամենը ընթացիկ հաշիվներ	**181,788**	**174,778**
Դրամական միջոցների համարժեքներ		
Ժամկետային ավանդներ բանկերում		
- 5 խոշոր հայկական բանկեր	61,205	143,079
- միջին չափի հայկական բանկեր	82,708	-
Ընդամենը ժամկետային ավանդներ բանկերում	**143,913**	**143,079**
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**326,155**	**318,865**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի միջոցներ մեկ բանկում, որի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը (2014թ-ին՝ մեկ բանկում): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 158,640 հազար դրամ (2014թ-ին՝ 303,926 հազար դրամ):

9 Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		
Ժամկետային ավանդներ բանկերում		
- 5 խոշոր հայկական բանկեր	44,422	-
Ընդամենը բանկերում տեղաբաշխված միջոցներ	**44,422**	**-**

Բանկերում տեղաբաշխված միջոցներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

10 Հաճախորդներին տրված վարկեր

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր		
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	57,405	60,564
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**57,405**	**60,564**
Անհատներին տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	6,746,026	6,163,899
Գրավով չապահովված սպառողական վարկեր	82,344	86,884
Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր	67,766	63,490
Ավտոմեքենայի գրավով ապահովված սպառողական վարկեր	18,659	24,472
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**6,914,795**	**6,338,745**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**6,972,200**	**6,399,309**
Արժեզրկման գծով պահուստ	(106,416)	(89,963)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	**6,865,784**	**6,309,346**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	714	89,249	89,963
Զուտ (հակադարձում)/ծախս	(25)	31,919	31,894
Զուտ դուրսգրումներ	-	(15,441)	(15,441)
Մնացորդը տարեվերջին	**689**	**105,727**	**106,416**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

	Վարկեր իրավաբանական անձանց հազ. դրամ	Վարկեր անհատներին հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	565	63,485	64,050
Զուտ ծախս	149	21,591	21,740
Զուտ վերականգնումներ	-	4,173	4,173
Մնացորդը տարեվերջին	**714**	**89,249**	**89,963**

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	57,405	689	56,716	1.2%
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**57,405**	**689**	**56,716**	**1.2%**
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	6,480,218	64,916	6,415,302	1.0%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
- ոչ ժամկետանց	82,176	6,917	75,259	8.4%
- մինչև 30 օր ժամկետանց	16,458	1,206	15,252	7.3%
- 30-89 օր ժամկետանց	48,165	7,515	40,650	15.6%
- 90-179 օր ժամկետանց	16,554	2,101	14,453	12.7%
- 180-360 օր ժամկետանց	85,536	17,271	68,265	20.2%
- ավելի քան 360 օր ժամկետանց	16,919	3,681	13,238	21.8%
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	**265,808**	**38,691**	**227,117**	**14.6%**
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**6,746,026**	**103,607**	**6,642,418**	**1.5%**
Գրավով չապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	79,817	927	78,890	1.2%
- մինչև 30 օր ժամկետանց	241	3	238	1.2%
- 90-179 օր ժամկետանց	589	7	582	1.2%
- 180-360 օր ժամկետանց	1,697	339	1,358	20%
Ընդամենը գրավով չապահովված սպառողական վարկեր	**82,344**	**1,276**	**81,068**	**1.5%**
Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	65,738	637	65,101	1.0%
- 30-89 օր ժամկետանց	2,028	20	2,008	1.0%
Ընդամենը անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր	**67,766**	**657**	**67,109**	**1.0%**
Ավտոմեքենաների գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	18,659	187	18,472	1.0%
Ընդամենը ավտոմեքենաների գրավով ապահովված սպառողական վարկեր	**18,659**	**187**	**18,472**	**1.0%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**6,914,795**	**105,727**	**6,809,068**	**1.5%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**6,972,200**	**106,416**	**6,865,784**	**1.5%**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Իրավաբանական անձանց տրված վարկեր				
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	60,564	714	59,850	1.2%
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**60,564**	**714**	**59,850**	**1.2%**
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր				
- ոչ ժամկետանց	6,034,154	63,040	5,971,114	1.0%
Ժամկետանց կամ արժեզրկված վարկեր				
- մինչև 30 օր ժամկետանց	35,147	3,529	31,618	10.0%
- 30-89 օր ժամկետանց	51,216	11,609	39,607	22.7%
- 90-179 օր ժամկետանց	24,741	4,958	19,783	20.0%
- 180-360 օր ժամկետանց	13,555	2,716	10,839	20.0%
- ավելի քան 360 օր ժամկետանց	5,086	1,424	3,662	28.0%
Ընդամենը ժամկետանց կամ արժեզրկված վարկեր	**129,745**	**24,236**	**105,509**	**18.7%**
Ընդամենը հիփոթեքային վարկեր	**6,163,899**	**87,276**	**6,076,623**	**1.4%**
Գրավով չապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	86,692	990	85,702	1.1%
- մինչև 30 օր ժամկետանց	36	4	32	11.1%
- 30-89 օր ժամկետանց	156	39	117	25.0%
Ընդամենը գրավով չապահովված սպառողական վարկեր	**86,884**	**1,033**	**85,851**	**1.2%**
Անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	63,490	660	62,830	1.0%
Ընդամենը անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր	**63,490**	**660**	**62,830**	**1.0%**
Ավտոմեքենաների գրավով ապահովված սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	24,472	280	24,192	1.1%
Ընդամենը ավտոմեքենաների գրավով ապահովված սպառողական վարկեր	**24,472**	**280**	**24,192**	**1.1%**
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**6,338,745**	**89,249**	**6,249,496**	**1.4%**
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**6,399,309**	**89,963**	**6,309,346**	**1.4%**

(ը) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Կազմակերպությունը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

(ii) Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Կազմակերպությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- չարժեզրկված հիփոթեքային վարկերի համար նախորդ տարիների տարեկան վնասի դրույքը կազմում է 1%,
- հիփոթեքային վարկերի համար գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 24 - 36 ամսով և դատական կարգով գրավադրված գույքի վաճառքի դեպքում կիրառվում է 30% զեղչ գրավի սկզբնապես գնահատված արժեքի գծով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե, օրինակ, դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 204,272 հազար դրամով (2014թ-ին՝ 187,485 հազար դրամով):

(գ) Գրավի վերլուծություն

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Կազմակերպությունը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

	31 դեկտեմբերի 2015թ.		31 դեկտեմբերի 2014թ.	
հազ. դրամ	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր				
Անշարժ գույք	49,103	49,103	47,027	47,027
Սարքավորումներ	7,613	7,613	12,823	12,823
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	**56,716**	**56,716**	**59,850**	**59,850**
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**56,716**	**56,716**	**59,850**	**59,850**

Վերը ներկայացված աղյուսակը բացառում են լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել նպատակահարմար է արժեզրկման գնահատման համար:

Ոչ ժամկետանց կամ ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Կազմակերպության համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ii) Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 75% վարկի գումար և գրավի արժեք հարաբերակցությամբ: Հիփոթեքային վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է համապատասխան վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման պահին և չի վերանայվել մինչև հաշվետու ամսաթիվը՝ հետագա փոփոխություններն արտացոլելու համար:

(iii) Ձեռքբերված գրավ

2015թ. ընթացքում Կազմակերպությունը ձեռք է բերել որոշ ակտիվներ՝ 4,344 հազար դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2014թ-ին՝ 52,037 հազար դրամ) հաճախորդներին տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ վերահսկողության իրավունք ստանալու միջոցով: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձեռքբերված գրավն իրենից ներկայացնում է անշարժ գույք և ներառված է այլ ակտիվների կազմում:

Կազմակերպության քաղաքականության համաձայն՝ նշված ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Շինարարություն	49,689	47,588
Այլ	7,716	12,976
Անհատներին տրված վարկեր	6,914,795	6,338,745
	6,972,200	**6,399,309**
Արժեզրկման գծով պահուստ	(106,416)	(89,963)
	6,865,784	**6,309,346**

(ե) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի մեկ վարկառու (2014թ-ին՝ մեկ), որին տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 151,510 հազար դրամ (2014թ-ին՝ 106,992 հազար դրամ):

(զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 14-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

11 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Համակարգչ. սարքավորումն.	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	371,298	11,634	38,451	24,076	4,666	450,125
Ավելացումներ	-	2,591	1,714	-	-	4,305
Օտարումներ/դուրսգրումներ	-	(761)	(232)	-	-	(993)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**371,298**	**13,464**	**39,933**	**24,076**	**4,666**	**453,437**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	48,411	10,078	31,089	1,807	4,500	95,885
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	12,411	1,267	6,748	2,430	53	22,909
Օտարումներ/դուրսգրումներ	-	(761)	(232)	-	-	(993)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**60,822**	**10,584**	**37,605**	**4,237**	**4,553**	**117,801**
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	**310,476**	**2,880**	**2,328**	**19,839**	**113**	**335,636**

հազ. դրամ	Շենքեր	Համակարգչ. սարքավորումն.	Տնտեսական գույք	Փոխադրա-միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	371,298	11,392	38,251	22,475	4,666	448,082
Ավելացումներ	-	1,447	200	24,986	-	26,633
Օտարումներ/դուրսգրումներ		(1,205)	-	(23,385)	-	(24,590)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**371,298**	**11,634**	**38,451**	**24,076**	**4,666**	**450,125**
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	36,067	10,235	24,173	22,475	4,261	97,211
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	12,344	1,048	6,916	2,717	239	23,264
Օտարումներ/դուրսգրումներ	-	(1,205)	-	(23,385)	-	(24,590)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**48,411**	**10,078**	**31,089**	**1,807**	**4,500**	**95,885**
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	**322,887**	**1,556**	**7,362**	**22,269**	**166**	**354,240**

12 Վարկեր և փոխառություններ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Վարկեր պետական ֆինանսական կազմակերպություններից	3,142,859	2,447,747
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	2,324,234	2,534,448
Վարկեր կապակցված կողմերից	405,316	340,484
Վարկեր ոչ առևտրային կազմակերպություններից	270,675	282,385
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	209,350	343,689
Փոխառություններ բաժնետիրոջից	60,956	36,883
	6,413,390	**5,985,636**

2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Կազմակերությունն ունի վեց կազմակերպությունից ստացված վարկեր և փոխառություններ (2014թ-ին՝ վեց կազմակերպությունից), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 6,333,214 հազար դրամ (2014թ-ին՝ 5,912,597 հազար դրամ):

2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ 5,775,031 հազար դրամ գումարով վարկերը և փոխառությունները (31 դեկտեմբերի 2014թ.՝ 4,364,533 հազար դրամ) ապահովված են 5,803,756 հազար դրամ գումարով հաճախորդներին տրված վարկերով (31 դեկտեմբերի 2014թ.՝ 3,956,204 հազար դրամ) և Կազմակերպության 730,000 հազար դրամ գումարով բաժնետիրական կապիտալով (ծանոթագրություն 13):

13 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 20,000 սովորական բաժնետոմսից (2014թ-ին՝ 20,000): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 36,500 դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2015թ. դեկտեբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բաժնետիրական կապիտալը գրավաղրված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի դիմաց (ծանոթագրություն 12):

(բ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2015թ. ընթացքում Կազմակերպության կողմից շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել (2014թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել):

14 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպություն, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար: Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Տնօրենների խորհրդի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Կազմակերպությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցման ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2015թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	271,732	-	-	-	-	54,423	326,155
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		44,422	-	-	-	-	44,422
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	147,433	208,005	283,855	2,800,984	3,425,507	-	6,865,784
	419,165	**252,427**	**283,855**	**2,800,984**	**3,425,507**	**58,103**	**7,240,041**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	261,780	553,810	425,421	3,027,575	2,144,804	-	6,413,390
	261,780	**553,810**	**425,421**	**3,027,575**	**2,144,804**	**-**	**6,413,390**
	157,385	**(301,383)**	**(141,566)**	**(226,591)**	**1,280,703**	**58,103**	**826,651**
31 դեկտեմբերի 2014թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	143,079	-	-	-	-	175,786	318,865
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	151,601	120,646	257,150	2,475,811	3,304,138	-	6,309,346
	294,680	**120,646**	**257,150**	**2,475,811**	**3,304,138**	**179,466**	**6,631,891**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	542,091	134,585	295,214	2,763,401	2,250,345	-	5,985,636
	542,091	**134,585**	**295,214**	**2,763,401**	**2,250,345**	**-**	**5,985,636**
	(247,411)	**(13,939)**	**(38,064)**	**(287,590)**	**1,053,793**	**179,466**	**646,255**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2015թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2014թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3.2%	2.2%	-	3.5%
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	2.5%	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	12.6%	12.5%	12.6%	12.6%
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	8.6%	6.6%	8.2%	6.5%

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերաձայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի (վերագնորոշման ռիսկ) փոփոխության նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2015թ. ու 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	2,373	1,495
100 բկ զուգահեռ աճ	(2,373)	(1,495)

(ii) Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ԱՄՆ դոլար	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	184,759	297,868
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	44,422	-
Հաճախորդներին տրված վարկեր	3,117,386	3,179,750
Ընդամենը ակտիվներ	**3,346,567**	**3,477,618**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	(2,956,815)	(3,082,695)
Ընդամենը պարտավորություններ	**(2,956,815)**	**(3,082,695)**
Զուտ դիրքը	**389,752**	**394,923**

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն իրականացվել է զուտ հիմունքով՝ առանց հարկերը հաշվի առնելու և հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	38,975	39,492

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի՝ նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար: Կազմակերպության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են իրավաբանական հարցերով խորհրդատուին: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի ուսումնասիրության վրա: Տնօրենների խորհուրդն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Կազմակերպությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Կազմակերպության պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	325,701	317,857
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	44,422	-
Հաճախորդներին տրված վարկեր	6,865,784	6,309,346
Պարտքային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	**7,235,907**	**6,627,203**

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով պարտքային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 10-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի պարտապաններ կամ կապակցված պարտապանների խմբեր (2014թ-ին՝ բացակայում էին), որոնց հետ կապված պարտքային ռիսկը գերազանցում է ընդհանուր պարտքային ռիսկի 10%-ը:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՝ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետգնման հիմնական պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման հիմնական պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Կազմակերպության կամ պայմանագրային կողմերի կողմից պարտակարությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Կազմակերպությունը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման հիմնական պայմանագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆինանսական պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Վարկեր և փոխառություններ	(6,413,390)	-	(6,413,390)	5,803,756	-	(609,634)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(6,413,390)**	**-**	**(6,413,390)**	**5,803,756**	**-**	**(609,634)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման հիմնական պայմանագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆինանսական պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		Զուտ գումար
				Ֆին. գործիքներ	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	
Վարկեր և փոխառություններ	(5,985,636)	-	(5,985,636)	3,956,204	-	(2,029,432)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(5,985,636)**	**-**	**(5,985,636)**	**3,956,204**	**-**	**(2,029,432)**

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկավորման պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չզեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չզեղչված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ վարկավորման պարտավորվածությունների գծով:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	170,154	203,043	656,028	637,004	6,589,691	8,255,920	6,413,390
Այլ ֆինանսական պարտավորություններ	6,256		-	-	-	6,256	6,256
Ընդամենը պարտավորություններ	**176,410**	**203,043**	**656,028**	**637,004**	**6,589,691**	**8,262,176**	**6,419,646**
Վարկավորման պարտավորվածություններ	**8,466**	-	-	-	-	**8,466**	**8,466**

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	121,818	490,494	227,654	488,970	6,424,819	7,753,755	5,985,636
Այլ ֆինանսական պարտավորություններ	5,781		-	-	-	5,781	5,781
Ընդամենը պարտավորություններ	**127,599**	**490,494**	**227,654**	**488,970**	**6,424,819**	**7,759,536**	**5,991,417**
Վարկավորման պարտավորվածություններ	**42,652**	-	-	-	-	**42,652**	**42,652**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	182,242	143,913	-	-	-	-	-	326,155
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	-	-	44,422	-	-	-	-	44,422
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	-	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	57,479	89,954	491,860	2,763,807	3,425,507	-	37,177	6,865,784
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	335,636	-	335,636
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	-	-	-	8,650	-	8,650
Այլ ակտիվներ	16,270	-	-	-	-	4,344	-	20,614
Ընդամենը ակտիվներ	**255,991**	**233,867**	**536,282**	**2,763,807**	**3,425,507**	**352,310**	**37,177**	**7,604,941**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	127,607	134,173	979,231	3,027,575	2,144,804	-	-	6,413,390
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	10,398	-	10,398
Այլ պարտավորություններ	13,063	-	12,443	-	-	-	-	25,506
Ընդամենը պարտավորություններ	**140,670**	**134,173**	**991,674**	**3,027,575**	**2,144,804**	**10,398**	**-**	**6,449,294**
Զուտ դիրքը	**115,321**	**99,694**	**(455,392)**	**(263,768)**	**1,280,703**	**341,912**	**37,177**	**1,155,647**

Վերը նշված աղյուսակում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ժամկետանց մասերը, մինչդեռ ծանոթագրություն 10-ի (ա) կետում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ընդհանուր մնացորդները:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	175,786	143,079	-	-	-	-	-	318,865
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	3,680	-	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	44,907	80,151	377,796	2,475,811	3,304,138	-	26,543	6,309,346
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	354,240	-	354,240
Այլ ակտիվներ	10,111	-	-	-	-	52,037	-	62,148
Ընդամենը ակտիվներ	**230,804**	**223,230**	**377,796**	**2,475,811**	**3,304,138**	**409,957**	**26,543**	**7,048,279**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Վարկեր և փոխառություններ	116,496	425,595	429,799	2,763,401	2,250,345	-	-	5,985,636
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	12,604	-	-	-	-	12,604
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	2,334	-	2,334
Այլ պարտավորություններ	6,406	-	9,588	-	-	-	-	15,994
Ընդամենը պարտավորություններ	**122,902**	**425,595**	**451,991**	**2,763,401**	**2,250,345**	**2,334**	**-**	**6,016,568**
Զուտ դիրքը	**107,902**	**(202,365)**	**(74,195)**	**(287,590)**	**1,053,793**	**407,623**	**26,543**	**1,031,711**

Վերը նշված աղյուսակում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ժամկետանց մասերը, մինչդեռ ծանոթագրություն 10-ի (ա) կետում ներկայացված ժամկետանց վարկերն իրենցից ներկայացնում են վարկերի ընդհանուր մնացորդները:

15 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են կանխիկ արտարժութային գործառնություններ՝ բացառությամբ այն գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն 600,000 հազար դրամ գումարի չափով նվազագույն ընդհանուր կապիտալ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 600,000 հազար դրամ): 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ապահովում է նվազագույն ընդհանուր կապիտալի պահանջները:

ՀՀ ԿԲ-ի կանոնակարգող պահանջների համաձայն, որոնք ուժի մեջ են մտել 2011թ-ին, վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են կանխիկ արտարժույթի գործառնություններ՝ բացառությամբ այն գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության («կապիտալի համարժեքության ցուցանիշը») նվազագույն մեծությունը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հարաբերկացության սահմանված նվազագույն մեծությունը կազմում է 10% (2014թ-ին՝ 10%):

Կազմակերպությունն ապահովել է կապիտալի համարժեքության ցուցանիշը 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված է կապիտալի համարժեքության ցուցանիշի հաշվարկը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջների հիման վրա 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
	Աուդիտ չանցած	Աուդիտ չանցած
Բաժնետիրական կապիտալ	730,000	730,000
Չբաշխված շահույթ	425,647	301,711
ՀՀ ԿԲ-ի հաշվապահական հաշվառման սկզբունքների ճշգրտումներ	(119,557)	(163,394)
Ընդամենը կապիտալ	**1,036,090**	**868,317**
Ռիսկով կշռված ակտիվներ	**6,808,599**	**6,391,228**
Կապիտալի համարժեքության ցուցանիշ	**15.2%**	**13.6%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը չի փոփոխվել:

16 Պարտավորվածություններ

Կազմակերպությունն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկավորման պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված վարկավորման պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	**8,466**	**42,652**

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային վարկավորման պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս վարկավորման պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

17 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպությունն ամբողջությամբ ապահովագրված չէ իր գրասենյակի և սարքավորումների վնասներից, գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությունը վերաբերող պատահարներից: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

(գ) Վարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական վիճակի վրա, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

18 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպությունը չունի վերջնական վերահսկող կողմ:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	74,650	62,531

Ստորև ներկայացված են ղեկավարության հետ (որոնց անդամներին միասին պատկանում է բաժնետիրական կապիտալի 10%) գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2014թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված փոխառություններ (համախառն)	105,590	6.0%	134,618	6.4%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(1,162)		(1,516)	
Ստացված փոխառություններ	60,956	10.0%	36,883	10.5%

Վարկերը տրամադրվել են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, ենթակա են մարման 2020-2029թթ. և ապահովված են անշարժ գույքով: Փոխառությունները տրամադրվել են ԱՄՆ դոլարով, ենթակա են մարման մինչև 2021թ. և գրավով ապահովված չեն:

Ստորև ներկայացված են ղեկավարության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ	8,827	5,541
Տոկոսային ծախս	(4,616)	(6,841)

(գ) Գործարքներ սեփականատերերի հետ

Սեփականատերեր են հանդիսանում այն բաժնետերերը, որոնց պատկանում է Կազմակերպության բաժնետիրական կապիտալի ավելի քան 20%-ը:

Ստորև ներկայացված են 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. և 2014թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2014թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված փոխառություններ (համախառն)	36,956	6.0%		
Արժեզրկման գծով պահուստ	(443)		-	
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	1,956		608	
Տոկոսային ծախս	-		(1,678)	

Բաժնետերերի հետ իրականացվող գործարքները գրավով ապահովված չեն:

(դ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են ղեկավարության բաժնետերերի և ղեկավարության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. և 2014թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	2014թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Հաճախորդներին տրված վարկեր				
- ԱՄՆ դոլարով				
Մայր գումարի մնացորդ	49,689	7.5%	47,497	7.2%
Արժեզրկման գծով պահուստ	(497)		(570)	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Վարկեր և փոխառություններ				
- ԱՄՆ դոլարով				
Մայր գումարի մնացորդ	405,316	8.0%	340,484	8.3%
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ	3,533		4,031	
Տոկոսային ծախս	(28,224)		(4,081)	

19 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշվող պարտքային արժեթղթերի, մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքին: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,680 հազար դրամ (2014թ-ին՝ 3,680 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով վաճառքի համար մատչելի չգնանշվող բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Իրական արժեքի գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ ենթադրություններով.

- 5%-19% զեղչերը կիրառվում են հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար: Հաճախորդներին տրված վարկերի զեղչման դրույքները գնահատելիս՝ Կազմակերպությունը համարել է, որ հաճախորդներին տրված վարկերի իր շուկան առանձնանում է Հայաստանում գործող այլ առևտրային վարկային կազմակերպությունների շուկայից՝ պայմանավորված նշված վարկերի համար գործող այլ պայմաններով, նպատակներով և ռիսկերին ենթարկվածությամբ:

- 2%-10% զեղչերը կիրառվում են վարկերի և փոխառությունների գծով ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ընկերության հիմնադրի
16/02/2004թ. որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

13/04/2004թ թիվ 7 որոշմամբ

Փոփոխված է
Ընկերության միակ մասնակցի 22.09.2004թ. թիվ 9 որոշմամբ
Ընկերության միակ մասնակցի 03.02.2005թ. թիվ 1 որոշմամբ
Ընկերության միակ մասնակցի 18.03.2005թ. թիվ 2 որոշմամբ
Ընկերության միակ մասնակցի 12.02.2007թ. թիվ 2 որոշմամբ
Ընկերության միակ մասնակցի 12.09.2007թ. թիվ 8 որոշմամբ
Ընկերության միակ մասնակցի 09.07.2007թ. թիվ 5 որոշմամբ
Ընկերության Ընդհանուր ժողովի 02.06.2008թ. թիվ 4 որոշմամբ
Ընկերության Ընդհանուր ժողովի 04.02.2011թ. թիվ 2 որոշմամբ
Ընկերության Ընդհանուր ժողովի 15.09.2011թ. թիվ 8 որոշմամբ
Ընկերության Ընդհանուր ժողովի 27.03.2012թ. թիվ 1 որոշմամբ
Ընկերության Ընդհանուր ժողովի 03.11.2014թ. թիվ 6 որոշմամբ
Ընկերության Արտահերթ Ընդհանուր ժողովի 11.05.2015թ. թիվ 2 որոշմամբ
Ընկերության Արտահերթ Ընդհանուր ժողովի 09.03.2016թ. թիվ 1 որոշմամբ
Ընկերության Արտահերթ Ընդհանուր ժողովի 10.10.2016թ. թիվ 5 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
Արթուր Ջավադյան

Գլխավոր տնօրեն՝
Դավիթ Աթանեսյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/փոփոխություններով/

«ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /հետագայում Ընկերություն/, հիմնադիրների կողմից ստեղծված, լիցենզիա ստացած, իրավաբանական անձ հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

1.2 Ընկերությունը ստեղծվել և գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/, Վարկային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենքի, այլ նորմատիվ ակտերի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

1.3 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

կրճատ՝ «ԱՀԸ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ.

անգլերեն լրիվ՝ “First Mortgage Company” Universal Credit Organization Limited Liability Company

կրճատ՝ “FMC” Universal Credit Organization LLC.

ռուսերեն լրիվ՝ Общество с Ограниченной Ответственностью Универсальная Кредитная Организация “Первая ипотечная компания”,

կրճատ՝ ООО Универсальная Кредитная Организация “ПИК”

1.4 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական /փոստային / հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան10, թիվ 122:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու միջոցով փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը, կամ այնպիսի գործարքների կնքումը, որոնք դրամական (փողային) պարտավորություններ են առաջացնում Ընկերության համար, սակայն կապված չէն Ընկերության կողմից պարտատիրոջն ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու կամ աշխատանքներ կատարելու հետ և (կամ) վարկեր տրամադրելու կամ Օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելու ճանապարհով շահույթ ստանալն է:

2.2 Պետական գրանցման և լիցենզիա ստանալու պահից Ընկերությունն կարող է ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ, որոնք նրան անհրաժեշտ են օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեություն իրականացնելու համար:

2.3 Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիա /թույլտվություն/ ձեռք բերելու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայով նախատեսվել է, որ Ընկերությունը, բացի լիցենզավորվող գործունեությունից, չի կարող զբաղվել այլ գործունեությամբ, կամ լիցենզիայով նախատեսված են գործունեության առանձին տեսակներով զբաղվելու սահմանափակումներ ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների, և այնպիսի գործունեությամբ, որն արգելված է լիցենզիայով:

2.4 Ընկերությունը ֆինանսական բոլոր գործառնությունները՝ ներառյալ արտարժույթի առուվաճառքն, իրականացնում է կանխիկ և անկանխիկ եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1 Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

3.2 Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկերում կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ: Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք /հայերեն, ռուսերեն և անգլերեն գրարումներով/, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, սպասարկման և այլ նշաններ:

3.3 Ընկերությունն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությանը, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.4 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.5 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

3.6 Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

3.7 Ընկերության մասնակիցները պատասխանատու չէն Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնեմասերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

3.8 Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող անձն Ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում ՝ իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար:

3.9 Եթե Ընկերության սնանկության պատճառ են հանդիսացել մասնակիցների կամ այլ անձանց գործողությունները, որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք, կամ այլ կերպ՝ Ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքի արժեքի անբավարարության դեպքում, նշված

մասնակիցների կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ /սուբսիդիար/ պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորություններով:

3.10 Կատարման համար Ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք, կամ այլ կերպ՝ Ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ ունեցող մասնակիցների կամ այլ անձանց գործողությունները համարվում են Ընկերության սնանկության պատճառ միայն այն դեպքում, եթե տվյալ անձինք օգտագործել են իրենց հնարավորությունը Ընկերությանը որոշակի գործողություններ կատարելու պարտադրելու նպատակով, նախապես իմանալով, որ դրա հետևանքով Ընկերությունը կհայտնվի սնանկության վիճակում:

3.11 Ընկերությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

3.12 Մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Ընկերության մասնակիցներ կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք:

4.2 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող լինել Ընկերության մասնակիցներ:

4.3 Ընկերությունը չի կարող որպես միակ մասնակից ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

4.4 Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

4.4.1 օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը.

4.4.2 տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման և տնտեսական գործունեության այլ փաստաթղթերին.

4.4.3 մասնակցել Ընկերության գործունեությունից առաջացած շահույթի բաշխմանը.

4.4.4 օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը /դրա մասը/ օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

4.4.5 ցանկացած ժամանակ դուրս գալ Ընկերությունից՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից.

4.4.6 Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքը իրենց բաժնեմասին համամասնորեն.

4.4.7 օգտվել կանոնադրությամբ նախատեսված կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից վերապահված այլ իրավունքներից:

4.5 Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

4.5.1 պահպանել սույն կանոնադրության պահանջները, կատարել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումները.

4.5.2 օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով կատարել ներդրումներ.

4.5.3 չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ.

4.5.4 կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները.

4.5.5 ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարողեն վնաս պատճառել Ընկերությանը.

4.5.6 կատարել կանոնադրությամբ նախատեսված կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից դրված այլ պարտականությունները:

4.6 Ընկերության կանոնադրությամբ կամ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված կարգով և սահմանված ժամկետում ներդրում չկատարող մասնակիցը պարտավոր է ուշացման

համար վճարել չվճարված գումարի 10%-ի չափով տուգանք: Սահմանված ժամկետից 3/երեք/ ամսվա ընթացքում ներդրումը չկատարելու դեպքում համապատասխան չափով փոքրացվում է մասնակցի բաժնեմասը /ներառյալ տուգանքը/ և պակասեցվում է կանոնադրական կապիտալը, կամ Ընկերության մյուս մասնակիցները իրավունք են ստանում համամասնորեն ձեռք բերել տվյալ ներդրման իրավունքը և կատարելով համապատասխան վճարում ստանալ դրանից բխող իրավունքները և կրել պարտականությունները:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

5.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է Ընկերության մասնակիցների ավանդների արժեքից: Այն սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

5.2 Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել օրենսդրությամբ սահմանված չափից:

5.3 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 000 000 000 /մեկ միլիարդ/ ՀՀ դրամ, որը բաժանված է 20 000 /քսան հազար/ բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ: Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, ամբողջությամբ վճարված:

5.4 Ընկերության մասնակցի բաժնեմասի իրական արժեքը նրա բաժնեմասին համամասնական Ընկերության զուտ ակտիվների արժեքի համապատասխան մասն է:

5.5 Ընկերության մասնակցի ներդրումը կանոնադրական կապիտալում կարող է լինել բացառապես փողով՝ հայկական դրամով և արտարժույթով:

5.6 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել բացառապես փողով Ընկերության գույքի, կամ մասնակիցների լրացուցիչ ավանդների, կամ երրորդ անձանց ավանդների հաշվին.

5.6.1 Ընկերության գույքի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացումը կատարվում է Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ միաձայն՝ Ընկերության նախորդ տարվա հաշվապահական հաշվետվության տվյալների հիման վրա: Այս դեպքում Ընկերությունը համապատասխանորեն մեծացնում է նաև մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը՝ անփոփոխ թողնելով դրա չափը:

5.6.2 Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն կարող է որոշում ընդունել Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների ներդրումների հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին: Այդ որոշումը պետք է ընդունվի միաձայն և դրանում պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը և վճարման ժամկետը: Սահմանված ժամկետը լրանարուց հետո, ոչ ուշ քան մեկ ամիս հետո, Ընդհանուր ժողովը որոշում է ընդունում լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների և Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ կապված Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման և Ընկերության լրացուցիչ ավանդներ ներդրած մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքի ավելացման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև մասնակիցների բաժնեմասերի չափի փոփոխման հետ: Լրացուցիչ ավանդ ներդրած յուրաքանչյուր մասնակցի բաժնեմասի անվանական արժեքն ավելանում է սույն կետի առաջին պարբերության մեջ նշված հարաբերությանը համապատասխան:

Ընկերության կանոնադրության մեջ սույն կետով նախատեսված փոփոխությունները կատարելու վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաեւ լրացուցիչ ավանդների ներդրումը հաստատող փաստաթղթերը պետք է լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների հաստատման եւ ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ

կատարելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ներկայացվեն գրանցում իրականացնող մարմին:

5.6.3 Ընկերության մասնակցի դիմումի հիման վրա ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ՝ այդ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով: Այդ հարցով որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն: Ընկերության մասնակցի դիմումում պետք է նշվեն ներդրվող ավանդի չափը եւ կազմը, ներդրման կարգն ու ժամկետները, ինչպես նաեւ բաժնեմասի չափը, որը նա կունենա ընկերության կանոնադրական կապիտալում: Դիմումում կարող են նախատեսվել ավանդների ներդրման այլ պայմաններ:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման որոշման ընդունման հետ միաժամանակ, որն ընդունվել է ընկերության մասնակցի՝ լրացուցիչ ավանդ ներդնելու դիմումի հիման վրա, պետք է որոշում ընդունվի ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին, որը կապված է ընկերության կանոնադրական կապիտալի չափի, լրացուցիչ ավանդ ներդրած ընկերության մասնակցի (մասնակիցների) բաժնեմասի անվանական արժեքի ավելացման հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ փոփոխություններ՝ կապված ընկերության մասնակիցների բաժնեմասերի չափի փոփոխման հետ: Լրացուցիչ ավանդ ներդնելու դիմում ներկայացրած ընկերության մասնակցի բաժնեմասի անվանական արժեքն ավելանում է նրա լրացուցիչ ավանդի գումարի չափին հավասար կամ պակաս գումարով:

Ընդհանուր ժողովը կարող է երրորդ անձի դիմումի հիման վրա, սույն կետով սահմանված կարգով, որոշում ընդունել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, նրան ընկերություն ընդունելու միջոցով:

5.7 Ընկերությունն իրավունք ունի, իսկ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:

5.8 Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և /կամ/ Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումն մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու միջոցով կատարելիս պետք է պահպանվեն բոլոր մասնակիցների բաժնեմասերի չափերը:

5.9 Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել իր կանոնադրական կապիտալը, եթե նվազեցման պատճառով կանոնադրական կապիտալի չափը պակաս կլինի օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից:

5.10 Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազեցման մասին և սահմանված կարգով գրանցել այն: Հակառակ դեպքում եթե Ընկերությունը մեկ ամսվա ընթացքում որոշում չի ընդունի իր կանոնադրական կապիտալը նվազեցնելու կամ Ընկերության լուծարման վերաբերյալ, ապա նրա պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ վաղաժամկետ կատարում եւ իրենց պատճառված վնասների հատուցում:

5.11 Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին որոշում կայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում, Ընկերությունը պարտավոր է իր բոլոր պարտատերերին գրավոր տեղեկացնել կանոնադրական կապիտալի նվազեցման և նրա նոր չափի մասին: Վերջիններս այդ դեպքում իրավունք ունեն գրավոր տեղեկացումն ստանալու պահից՝ 30 օրվա ընթացքում, պահանջել վաղաժամկետ կատարելու կամ դադարեցնելու իրենց նկատմամբ Ընկերության համապատասխան պարտավորությունները և հատուցելու վնասները:

5.12 Եթե Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի՝ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից, Ընկերությունը ենթակա է լուծարման:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Ընկերության մասնակիցն իրավունք ունի վաճառել կամ օրենքով չարգելված այլ ձևով օտարել կանոնադրական կապիտալում իրեն պատկանող բաժնեմասը կամ դրա մասը ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների:

6.2 Ընկերության մասնակիցը կարող է օտարել իր բաժնեմասը/դրա մասը/ երրորդ անձին միայն Ընկերության մյուս մասնակիցների համաձայնությամբ: Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է օտարել իր բաժնեմասը/դրա մասը/ երրորդ անձին, պարտավոր է դրա մասին գրավոր տեղյակ պահել Ընկերությանը: Ընկերությունը, ստանալով այդ գրությունը պարտավոր է 7 /յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել այլ մասնակիցներին բաժնեմասի/դրա մասի/ օտարման մասին, կցելով բաժնեմասը/դրա մասը/ օտարող մասնակցի գրության պատճենը: Այն դեպքում, երբ Ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնում են իրենց համաձայնությունը բաժնեմասի օտարմանը, մասնակիցը իր բաժնեմասը կարող է օտարել երրորդ անձի: Եթե Ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում բաժնեմասը/դրա մասը/ երրորդ անձին օտարելու վերաբերյալ իրենց գրավոր համաձայնությունը չեն հայտնում կամ գրավոր մերժում են բաժնեմասի օտարումն երրորդ անձին, ապա մասնակցի բաժնեմասի/դրա մասի/ օտարումն երրորդ անձին տեղի չի ունենում և այս դեպքում Ընկերության մասնակիցը կարող օգտվել Ընկերությունից դուրս գալու իր իրավունքից:

6.3 Ընկերության մասնակցի բաժնեմասը անցնում է Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն ընկերության մյուս մասնակիցների համաձայնությամբ: Ընկերության մասնակիցների համաձայնությունը համարվում է ստացված, եթե Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգների և իրավաբանական անձանց իրավահաջորդների կողմից ընկերության մասնակիցներին դիմելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում ստացվել է մասնակիցների գրավոր համաձայնությունը, կամ ոչ մի մասնակցից չի ստացվել գրավոր մերժում: Բաժնեմասն անցնելու համար ընկերության մասնակիցների կողմից համաձայնություն չտալը հանգեցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով դա վճարելու կամ դրա արժեքը հատուցելու՝ ընկերության պարտականությանը:

6.4 Ընկերությունից մասնակցի դուրս գալու դեպքում նրա բաժնեմասը անցնում է Ընկերությանը՝ դուրս գալու մասին գրավոր հայտարարություն տալու պահից: Այդ դեպքում Ընկերությունը պարտավոր է դուրս գալու դիմումը ներկայացնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում դուրս եկող մասնակցին վճարել նրա բաժնեմասի արժեքը, որը որոշվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Դուրս եկող մասնակցի և ընկերության համաձայնությամբ բաժնեմասի արժեքը կարող է հատուցվել այլ գույքով:

6.5 Բաժնեմասի արժեքը վճարվում է Ընկերության զուտ ակտիվների և կանոնադրական կապիտալի տարբերության հաշվին: Եթե այդ տարբերությունը չի բավարարում դուրս եկող մասնակցի բաժնեմասի արժեքը վճարելուհամար, Ընկերությունը վճարում է ամբողջ արժեքը և համապատասխան չափով նվազեցնումիր կանոնադրական կապիտալը:

6.6 Ընկերությունից մասնակցի դուրս գալը չի ազատում նրան մինչև դուրս գալու մասին հայտարարությունը տալու պահին Ընկերության հանդեպ ունեցած պարտավորություններից:

6.7 Ընկերությունը բաժնեմասեր է ձեռք բերում օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում: Այդ բաժնեմասերը ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկության ժամանակ, ինչպես նաև Ընկերության լուծարման ժամանակ շահույթը և գույքը բաշխելիս՝ հաշվի չեն առնվում:

6.8 Ընկերությանը պատկանող բաժնեմասն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ այն ձեռք բերելու պահից մեկ տարվա ընթացքում, պետք է բաշխվի Ընկերության մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր մասնակցի բաժնեմասին համամասնորեն: Չբաշխված բաժնեմասն ենթակա է մարման՝ Ընկերության կանոնադրական կապիտալում նվազեցում կատարելու միջոցով:

6.9 Բաժնեմասն Ընկերության մասնակիցներին վաճառելու որոշումը, որի արդյունքում փոփոխվում են մասնակիցների չափերը, ինչպես նաև բաժնեմասը երրորդ անձանց վաճառելու մասին որոշումը և դրա հետ կապված կանոնադրական փոփոխությունները Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պետք է ընդունի միաձայն:

6.10 Ընկերության գույքում մասնակցի բաժնեմասի վրա նրա անձնական պարտքերի համար բռնագանձում տարածել թույլատրվում է միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում: Նման մասնակցի պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել վճարելու կանոնադրական կապիտալում պարտապանի բաժնեմասին համապատասխան Ընկերության գույքի մասի արժեքը կամ առանձնացնելու գույքի այդ բաժնեմասը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար: Ընկերության գույքի առանձնացման ենթակա մասը կամ դրա արժեքը որոշվում է պարտատերերի պահանջները ներկայացնելու պահին կազմված հաշվեկշռով:

6.11 Ընկերության գույքում մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը դադարեցնում է նրա մասնակցությունն Ընկերությունում:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է /այսուհետ Ընդհանուր ժողով/, որը իրավասու է լուծել Ընկերության կառավարման հետ կապված ցանկացած հարց:

7.2 Ընկերության մասնակիցները Ընդհանուր ժողովի նիստերին մասնակցում են անձամբ, կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:

7.3 Ընկերության յուրաքանչյուր մասնակից Ընդհանուր ժողովում ունի կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

7.4 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

7.4.1 Ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը.

7.4.2 Ընկերության տնօրենների խորհուրդի նախագահի և նրա տեղակալի նշանակումը և ազատումը.

7.4.3 Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը /կառավարչին/ տալու հարցերը.

7.4.4 Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/ ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը.
7.4.5 Ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռի հաստատումը,
7.4.6 Ընկերության շահույթն մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.
7.4.7 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը.
7.4.8 Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի /նեքին փաստաթղթեր/ ընդունումը /հաստատումը/.
7.4.9 Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.
7.4.10 Ընկերության աուդիտի իրականացման մասին որոշում ընդունելը.
7.4.11 Ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշումն ընդունելը, լուծարային հանձնաժողովի նշանակումը և լուծարային հաշվեկշռի ընդունումը.
7.4.12 օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.5 Ընկերության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը օրենքով վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմինների իրավասությանը:

7.6 Ընկերության Ընդհանուր ժողովը գումարվում է Ընկերության գործադիր /գլխավոր/ տնօրենի կողմից տարեկան մեկ անգամ՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ շուտ քան 2 ամիս և ոչ ուշ քան 6 ամիս անց:

7.7 Ընդհանուր ժողով հրավիրելու մասին գործադիր /գլխավոր/ տնօրենը պարտավոր է գումարման օրվանից 20 /քսան/ օր առաջ գրավոր ծանուցել Ընկերության յուրաքանչյուր մասնակցի, պատվիրված նամակը ուղարկելով մասնակիցների ցանկում նշված հասցեյով կամ հանձնելով այն առձեռն: Ծանուցագրում պետք է նշվեն՝ Ընդհանուր ժողով անցկացնելու օրը, ժամը, տեղը, օրակարգը:

7.8 Ընկերության մասնակիցները իրավունք ունեն ժողովի գումարումից առնվազն 10 օր առաջ առաջարկել օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկել: Եթե օրակարգի նախնական տարբերակում կատարվում են փոփոխություններ Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են դրա անցկացումից առնվազն հինգ օր առաջ ծանուցել Ընկերության մասնակիցներին 7.7 կետում նշված կարգով:

7.9 Ընդհանուր ժողով անցկացնելուց առաջ 20 օրվա ընթացքում Ընկերության մասնակիցներին Ընկերության գործադիր մարմնի շենքում ծանոթանալու նպատակով պետք է տրամադրվեն նաև հետևյալ նյութերը և տեղեկատվությունը՝ Ընկերության տարեկան հաշվետվությունը, վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/ և /կամ/ աուդիտի եզրակացությունը Ընկերության տարեկան հաշվետվությունների և ամենամյա հաշվապահական հաշվեկշիռների ստուգումների արդյունքների վերաբերյալ, տեղեկություններ Ընկերության գործադիր մարմնում, խորհրդում և վերստուգիչ հանձնաժողովում /վերստուգող/ ընդգրկման դեպքում տվյալներ թեկնածուի /թեկնածուների/ մասին, առաջարկվող որոշումների նախագծերը, կանոնադրական փոփոխությունների դեպքում դրանց նախագիծը, Ընկերության ներքին փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև Ընհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ այլ տվյալներ: Ընկերությունը պարտավոր է մասնակցի պահանջով նրան տրամադրել նշված փաստաթղթերի պատճենները:

7.10 Ընդհանուր ժողովում մասնակիցներն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համապատասխան ձայներ:

7.11 Ընդհանուր ժողովի բացումից առաջ կատարվում է ժամանած մասնակիցների գրանցում: Ընկերության մասնակիցները կարող են մասնակցել ժողովին անձամբ կամ լիազոր ներկայացուցիչների միջոցով: Ներկայացուցչի լիազորագիրը պետք է պարունակի օրենսդրությամբ նախատեսված տվյալները և վավերացվի Ընկերության գործադիր մարմնի կնիքով կամ նոտարի կողմից: Չգրանցված մասնակիցը /նրա ներկայացուցիչը/ իրավասու չէ մասնակցել քվեարկությանը:

7.12 Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե նիստին ներկա են ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները /նրանց ներկայացուցիչները/:

7.13 Սույն կանոնադրության 7.4.1 և 7.4.3 ենթակետերով նախատեսված հարցերով, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների 2/3-ով, իսկ 7.4.11 ենթակետերով նախատեսված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում որոշումներն ընդունվում են միաձայն: Մյուս բոլոր դեպքերում որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ:

7.14 Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է Ընդհանուր ժողովի արձանագրության վարումը, որը ստորագրվում է ժողովին ներկա մասնակիցների /ներկայացուցիչների/ կողմից, կարվում է արձանագրությունների գրքում և պահվում է Ընկերության գրասենյակում: Արձանագրությունների գիրքը ծանոթանալու նպատակով ցանկացած ժամանակ տրամադրվում է Ընկերության ցանկացած մասնակցի, իսկ վերջինիս պահանջով նրան տրվում է քաղվածք վավերացված Ընկերության գործադիր մարնի կողմից:

7.15 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված որոշումները օրենսդրությամբ և Ընկերության ներքին փաստաթղթերով սահմանված կարգով կարող են ընդունվել նաև հարցման միջոցով: Այդ դեպքում որոշումն ընդունված է համարվում համապատասխան ձայներ ունեցող մասնակիցների կողմից այն ստորագրելու դեպքում: Այդ գրությունները պահվում են Ընկերության գրասենյակում:

7.16 Արտահերթ Ընդհանուր ժողովները հրավիրվում են Ընկերության գործադիր մարմնի կողմից՝ վերստուգող հանձնաժողովի /վերստուգողի/, աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև Ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասի սեփականատեր հանդիսացող մասնակցի /մասնակիցների/ նախաձեռնությամբ: Այն գումարվում է նույն կարգով ինչ հերթական Ընդհանուր ժողովը՝ նախաձեռնողի օրակարգով:

7.17 Ընկերությունում մեկ մասնակից ունենալու դեպքում Ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են միակ մասնակցի կողմից միանձնյա գրավոր ձևակերպմամբ: Այդ դեպքում չեն կիրառվում սույն կանոնադրության 7.6 - 7.15 կետերի դրույթները, բացառությամբ տարեկան Ընդհանուր ժողովների անցկացման ժամկետների վերաբերյալ դրույթներից:

7.18 Ընկերության տնօրենների խորհուրդը /հետագայում Խորհուրդ/ իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը և կարող է լուծել ցանկացած հարց, բացառությամբ Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

7.19 Ընկերության Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝

7.19.1 վարկավորման և այլ ֆինանսական գործառնությունների մասին որոշումների ընդունումը.

7.19.2 տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

7.19.3 Ընկերության պահուստային և այլ ֆոնդերի ստեղծումը և օգտագործումը.

7.19.4 Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

7.19.5 Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

7.19.6 ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

7.19.7 Ընկերության կողմից գույքի օտարման կամ ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների /որի արժեքը կատարման պահին կազմում է կանոնադրական կապիտալի 25-50%-ը / կնքման մասին որոշում ընդունելը.

7.19.8 Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վճարման չափի սահմանումը.

7.19.9 սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.20 Ընկերության Խորհուրդը կազմված է՝ նախագահից, նրա տեղակալից, գործադիր (գլխավոր) տնօրենից, գլխավոր հաշվապահից (ֆինանսական տնօրենից), ինչպես նաև Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ այլ անձանցից:

Եթե գործադիր (գլխավոր) տնօրենը կամ գլխավոր հաշվապահը (ֆինանսական տնօրենը) միաժամանակ հանդիսանում են Խորհրդի նախագահ կամ նրա տեղակալ, նրանք Խորհրդի նիստերին մասնակցում են մեկ ձայնի իրավունքով:

7.21 Ընդհանուր ժողովի որոշմամբ Խորհուրդի անդամներին իրենց պարտականությունների կատարման ժամանակաընթացքում կարող են տրվել պարգևատրումներ և /կամ/ հատուցվել այդ պարտականությունների իրականացման հետ կապված ծախսերը: Պարգևվատրումների և հատուցումների չափերը սահմանվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

7.22 Ընկերության Խորհուրդի նիստերը հրավիրում և անց է կացնում /նախագահում է/ Խորհուրդի նախագահն իր կամ Խորհրդի անդամների նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության:

7.23 Ընկերության Խորհուրդի նիստերը իրավասու են եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին: Ընկերության Խորհուրդի որոշումները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, ձայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը որոշիչ է:

7.24 Խորհուրդի որոշումները ձևակերպվում են գրավոր, դրանք ստորագրում է նախագահը:

7.25 Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները իրականացնում է Խորհուրդի նախագահի տեղակալը:

7.26 Ընկերության գործադիր մարմինն է Ընկերության գործադիր /գլխավոր/ տնօրենը, որը իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը: Ընկերության գործադիր /գլխավոր/ տնօրեն կարող է ընտրվել ինչպես Ընկերության մասնակիցը, այնպես էլ՝ ցանկացած այլ անձ: Ընկերության գործադիր /գլխավոր/ տնօրենը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից:

7.27 Գործադիր /գլխավոր/ տնօրենը հաշվետու է Ընկերության Ընդհանուր ժողովին և Խորհրդին:

7.28 Ընկերության գործադիր /գլխավոր/ տնօրենը.

7.28.1 առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից, այդ թվում ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

7.28.2 տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

7.28.3 տալիս է հրամաններ՝ Ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.

7.28.4 բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ .

7.28.5 Ընկերության անունից կնքում է քաղաքացիահիրավական պայմանագրեր.

7.28.6 իրականացնում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.29 Իր լիազորությունների սահմաններում գործադիր /գլխավոր/ տնօրենը արձակում է հրամաններ և կարգադրություններ:

7.30 Ընկերությունն կարող է իր գործադիր մարմնի իրավասությունները պայմանագրով փոխանցել կառավարչին:

7.30.1 Ընկերության կառավարման մարմինները կարող են ստեղծել այլ մարմիններ, որոնց կարող են փոխանցել իրենց իրավասությունների իրականացման լիազորությունների մի մասը, բացառությամբ կառավարման մարմինների բացառիկ իրավասություններին վերապահված լիազորությունների:

7.31 Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է ընկերության խորհրդի անդամի, ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, եւ որոնք ունեն ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի քսան եւ ավելի տոկոսը, չեն կարող կատարվել առանց ընդհանուր ժողովի համաձայնության:

7.32 Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը իրականացնում է գլխավոր հաշվապահը /ֆինանսական տնօրենը/: Այդ նպատակով գլխավոր հաշվապահը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում՝ ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

7.33 Ընկերության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունների ներկայացումը կատարվում է անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման, սահմանազատման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման ստանդարտներով նախատեսված այլ սկզբունքների հիման վրա:

7.34 Ընկերության արդյունավետության ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր տարի աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից:

7.35 Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը Ընկերության կողմից Կենտրոնական բանկ է ներկայացվում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

7.36 Ընկերության հաշվապահական հաշվառման և աուդիտի հետ կապված այլ հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8.1 Ընկերության աշխատակիցների և Ընկերության միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.2 Ընկերությունն ապահովում է օրենքով երաշխավորված աշխատանքի վարձատրության նվազագույն չափը և աշխատանքային պայմանները:

8.3 Ընկերության գրասենյակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանվում են.

8.3.1 Ընկերության կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը /որոշումը/ ու դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները.

8.3.2 Ընկերության հիմնադիր ժողովի և Ընդհանուր ժողովների արձանագրությունները /որոշումները/.

8.3.3 Ընկերության պետական գրանցումը և լիցենզավորումը հավաստող փաստաթղթերը.

8.3.4 Ընկերության հաշվեկշռում գտնվող գույքի նկատմամբ Ընկերության իրավունքը հաստատող փաստաթղթերը.

8.3.5 Ընկերության ներքին գործունեության փաստաթղթերը.

8.3.6 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների փաստաթղթերը.

8.3.7 պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին փաստաթղթերը.

8.3.8 վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/, աուդիտի, ինչպես նաև իրավասու պետական մարմինների կողմից Ընկերության ֆինանսական գործունեությունը ստուգելու մասին փաստաթղթերը.

8.3.9 օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1 Ընկերությունը օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել:

9.2 Ընկերության վերակազմակերպման մասին որոշում ընդունելու դեպքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին ծանուցել իր բոլոր պարտատերերին, որոնք իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ վաղակետ կատարել իրենց հանդեպ ունեցած պարտավորությունները և հատուցել պատճառված վնասները:

9.3 Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելը:

9.4 Ընկերությունը լուծարվում է՝

9.4.1 լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

9.4.2 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

9.4.3 «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում.

9.4.4 ինքնալուծարման դեպքում.

9.4.5 օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

9.5 Ընկերության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է համապատասխան որոշումը ընդունելու պահից առնվազն հնգօրյա ժամկետում Ընդհանուր ժողովի որոշմամբ:

9.6 Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Ընկերության կառավարման լիազորությունները:

9.7 Լուծարային միջոցների բաշխումից հետո, լուծարային հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում Կենտրոնական բանկին՝ իր գործունեության արդյունքների վերաբերյալ: Ներկայացված հաշվետվությունը հաստատվելուց հետո Ընկերությունը համարվում է լուծարված:

9.8 Ընկերության լուծարման մասին համապատասխան գրառում է կատարվում Կենտրոնական բանկում և իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ /ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ/ ԿԱՊՄ

Մասնակիցների /հիմնադիրների/ տվյալները	Բաժնեմասերի անվանական արժեքը	Բաժնեմասի չափը /տոկոսով/
Աթինիզյան Նիշան, ԱՄՆ քաղաքացի, անձնագիր 488545871, տրված է՝ 12.11.2013թ., ուժի մեջ է՝ 11.11.2023թ., վավերացված է Միացյալ Նահանգների Պետ. Դեպարտամենտի կողմից, հասցե՝ 545 Կոնկորդ ավենյու, սվիթ 400, Քեմբրիջ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ	350 000 000 /երեք հարյուր հիսուն միլիոն/	/35/
Աթինիզյան Մարգրիտ, ԱՄՆ քաղաքացի, անձնագիր 488127239, տրված է՝ 22.01.2013թ., ուժի մեջ է՝ 21.01.2023թ., վավերացված է Միացյալ Նահանգների Պետ. Դեպարտամենտի կողմից, հասցե՝ 545 Կոնկորդ ավենյու, սվիթ 400, Քեմբրիջ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ	350 000 000 /երեք հարյուր հիսուն միլիոն/	/35/
Աթանեսյան Դավիթ Վալտերի, անձնագիր AK0699482, տրված է՝ 04.02.2011թ., ուժի մեջ է՝ 04.02.2021թ.,կող 004, հասցե՝ ք. Երևան, Բաբայան 36, բն. 23	300 000 000 /երեք հարյուր միլիոն/	/30/

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ԿՆԻՔ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
13.04.2004թ. թիվ 79 Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 7

Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն վկայականը տրվում է

«Առաջին հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

ք. Երևան, Ամիրյան 1

Գրանցման համարը 7

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ 13.04.2004թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

Կ.Տ. ---------- *Տ. Սարգսյան*

ՀԱՎԵԼՎԱԾ 7

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 5 Որոշում Ընդունված է միաձայն գրավոր համաձայնությամբ առանց «ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») Ընդհանուր Ժողովի նիստ գումարելու Հոկտեմբեր 11, 2017թ. ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն	Resolution № 5 Adopted by Unanimous written consent in lieu of "FIRST MORTGAGE COMPANY" Universal Credit Organization Limited Liability Company (the "Company") Shareholder's extraordinary meeting October 11, 2017 Yerevan, Republic of Armenia
Սույն թվականի հոկտեմբերի 11-ին, ղեկավարվելով Ընկերության կանոնադրության 7.4.9 կետի դրույթներով, ներքոստորագրյալ Ընկերության մասնակիցները, կանոնադրության 7.12 հոդվածին համապատասխան ապահովելով քվորում, սույնով ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ ընդունում են ներքոհիշյալ օրակարգով սահմանված հետևյալ որոշումը	On this day, October 11th, 2017, in accordance with Article 7.4.9 of the Charter of the Company, the undersigned members of the Shareholder meeting constituting a quorum in accordance with section 7.12 of this Charter, hereby unanimously consent to the adoption of the following resolutions per the agenda set forth below:
ՕՐԱԿԱՐԳ	AGENDA:
1. ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով դրամային և 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ապահովված հիփոթեքային	1. Approval of non-convertible non-documentary coupon covered bond (hereinafter Bond) issuance of AMD 100,000,000 (one hundred million) and USD 500,000 (five hundred thousand) during one month period starting from the registration date of the Prospectus by CBA.

պարտատոմսերի (այսուհետ՝ Պարտատոմս) թողարկման հաստատում:	
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ	APPROVED DECISIONS:
Ընդհանուր Ժողովի մասնակիցները որոշեցին. 1. Հաստատել ազդագրի գրանցման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով դրամային և 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային Պարտատոմսերի թողարկումը, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ: Թողարկման և տեղաբաշխման որոշումը կսահմանվի Ընկերության գլխավոր տնօրենի որոշմամբ: 2. ՀՀ դրամով թողարկվող յուրաքանչյուր Պարտատոմսի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ դոլարով թողարկվող յուրաքանչյուր Պարտատոմսի համար՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար: 3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով: 4. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում չսահմանել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:	Now therefore, the members of the Shareholder Meeting have resolved: 1. To approve issuance of Bonds of AMD 100,000,000 (one hundred million) and USD 500,000 (five hundred thousand) during one month period starting from the registration date of the Prospectus by CBA, with quarterly coupon payment frequency. The date of issuance and placement of bonds will be assigned by a separate decision of the General Director of the Company. 2. To set AMD 10 000 (ten thousand) as nominal value of each Bond issued in AMD and USD 25 (twenty-five) as nominal value of each Bond issued in foreign currency. 3. To perform issuance and placement of bonds in nominal value via "NASDAQ OMX ARMENIA" OJSC placement system in standard closed (European) auction. 4. Except events stipulated by legislation, abstain from imposing any limits on issuance of bonds, as well as with regards to investors, volume of bond purchase, and free circulation.

5. Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին:	5. To transfer the coupon income on the accounts provided by the coupon owners who are registered in the list of coupon bond owners (registry) as of 18:00 o'clock of the working day prior to the payment day.
6. Պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին	6. To transfer the maturing bond amount on the accounts provided by the coupon owners who are registered in the list of coupon bond owners (registry) as of 18:00 o'clock of the working day prior to the maturity day.
8. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին. ա) բանակցել և կնքել պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման պայմանագիր համապատասխան մասնագիտացված ընկերության հետ, բ) բանակցել, նշանակել և կնքել համապատասխան պայմանագիր ապահովման միջոցների հսկողի հետ՝ համաձայն «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի գ) Կատարել Պարտատոմսերի գծով պարտավորությունների ապահովման միջոցների հաշվառում ապահովման միջոցների ռեգիստրի վարման միջոցով՝ համաձայն «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի: դ) կազմակերպել «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հետ «Անվանական արժեթղթերի	8. To assign General Director of the Company: a) Negotiate and sign service agreement on bond placement with specialized company, b) To negotiate, select and sign agreement with Licensed Cover Pool Controller as required by the law on "Covered Mortgage Bonds" c) Register the cover assets through keeping a cover register as required by the law on "Covered Mortgage Bonds". d) To arrange the signing of an agreement on "The provision of bond owners' registry keeping services" with

սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրի կնքումը ե) Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ապահովել ցուցակման հայտի ներկայացումը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ՝ կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով զ) Երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով համապատասխան մասնագիտացված ընկերության հետ կնքել համապատասխան պայմանագիր 9. Որոշվեց նաև, որ սույն գրավոր համաձայնությունը կարող է ունենալ կրկնօրինակներ: Նման բոլոր կրկնօրինակները միասին-իրենցից ներկայացնում են մեկ փաստաթուղթ: Սույն որոշման բնօրինակը ուժի մեջ է մտնում վերևում նշված ամսաթվից:	"Central Depository of Armenia" OJSC", e) Upon completion of bond placement to apply to "NASDAQ OMX ARMENIA" OJSC for the listing of bonds to ensure bond trading in the regulated market. f) Sign a contract with a specialized company to ensure bond liquidity and raise investment attractiveness in the secondary market. 9. Further resolved, that this written consent may be executed in counterparts and that all such counterparts together shall be deemed to constitute one instrument and an original copy of the action adopted as of the date first written above.
Նիշան Աթինիզյան Մարգրիտ Աթինիզյան Դավիթ Աթանեսյան	Nishan Atinizian Margrit Atinizian David Atanessian

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «30» հոկտեմբերի 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Թողարկող») ի դեմս Գլխավոր տնօրեն Դավիթ Աթանեսյանի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ»), ի դեմս Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հիմք ընդունելով Թողարկողի Խորհրդի՝ «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ ապահովված հիփոթեքային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին 2017 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 5 որոշումը՝ Թողարկողը նախատեսում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի թողարկման ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում (օրը կնշանակվի Թողարկողի գլխավոր տնօրենի որոշմամբ) թողարկել և տեղաբաշխել 100,000,000 ՀՀ դրամ ծավալով դրամային և 500,000 ԱՄՆ դոլար ծավալով դոլարային ապահովված հիփոթեքային պարտատոմսեր (այսուհետ՝ «Պարտատոմսեր») հետևյալ պայմաններով.

		Առաջին տրանշ	Երկրորդ տրանշ
1.1.1.	*Պարտատոմսերի տեսակը՝*	անվանական արժեկտրոնային	
1.1.2.	*Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝*	եռամսյակային	
1.1.3.	*Պարտատոմսերի ձևը՝*	ոչ փաստաթղթային	
1.1.4.	*Պարտատոմսերի փոխարկելիությունը՝*	ոչ փոխարկելի	
1.1.5.	*Պարտատոմսերի թողարկման արժույթ*	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
1.1.6.	*Պարտատոմսերի թողարկման ծավալը՝*	100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ	500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար
1.1.7.	*Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝*	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
1.1.8.	*Պարտատոմսերի քանակը՝*	10,000 (տաս հազար) հատ	20,000 (քսան հազար) հատ
1.1.9.	*Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրը՝*	ՀՀ կենտրոնական բանկի կողմից պարտատոմսերի թողարկման ազդագրի գրանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում	
1.1.10.	*Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝*	24 (քսանչորս) ամիս	
1.1.11.	*Պարտատոմսերի արժեկտրոնային*	10.5 (տաս ամբողջ հինգ	6.5 (վեց ամբողջ հինգ

	եկամտաբերությունը՝	տասնորդական)	տասնորդական)
1.1.12.	*Պարտատոմսերի շրջանառության ձևը՝*	բացառապես կարգավորվող շուկայում ազատ շրջանառության իրավունքով	
1.1.13.	*Պարտատոմսերի շրջանառելիության սահմանափակումներ՝*	Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում	
1.1.14.	*Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝*	Ստանդարտ փակ աճուրդ, ընդ որում տեղաբաշխման աճուրդին չեն կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային և/կամ լրիվ բավարարմամբ հայտ: Տեղաբաշխողն իրականացնելու է նաև տեղաբաշխված պարտատոմսերի երկրորդային շուկայում շուկա ստեղծողի գործառույթներ, որի նպատակով ձեռք է բերելու 1,500 հատ դրամային և 2,000 հատ դոլարային պարտատոմսեր անվանական արժեքով՝ բաց ստանդարտ աճուրդի անցկացման միջոցով:	
1.1.15.	*Պարտատոմսերի ապահովվածությունը՝*	Պարտատոմսերն ապահովված են հիփոթեքային վարկերով, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են թողարկման ազդագրում	
1.1.16.	*Պարտատոմսերի մարումը՝*	Պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18^{00}-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Կազմակերպությունը պարտատոմսերի մարման օրը հանձնարարական է տալիս իր սպասարկող բանկին՝ համապատասխան վճարումները փոխանցելու Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածքում գործող բանկերում բացված բանկային հաշիվներին:	
1.1.17.	*Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև՝*	Մեկ Պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $P = \frac{A \cdot C}{4} \sum_{i=1}^{N} \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{400}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{A}{\left(1 + \frac{y}{400}\right)^{N-1+\tau}} \right] \quad \tau = \frac{DSN}{DCC}$ որտեղ՝ **P** - պարտատոմսի գինն է: **A** - պարտատոմսի անվանական արժեքը: **C** - Տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է՝ Առաջին տրանշի համար՝ 0.105, իսկ Երկրորդ տրանշի համար՝ 0.065:	

Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է:

DSN - գործարքի կատարման պահից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվն է:

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի թիվն է:

N - տվյալ պահին մնացած արժեկտրոնի վճարումների քանակն է,

i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով Բանկը պարտավորվում է Թողարկողին մատուցել Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման հետ կապված սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները, իսկ Թողարկողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել մատուցված ծառայությունների համար:

2.2. Բանկը Թողարկողին մատուցում է հետևյալ ծառայությունները՝

2.2.1. Թողարկողի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա մշակում է Պարտատոմսերի Ազդագիրը (այսուհետ՝ Ազդագիր) և աշխատանքներ է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկում Ազդագրի գրանցման ուղղությամբ:

2.2.2. Սույն պայմանագրի 3-րդ մասով սահմանված կարգով, իրականացնում է Թողարկողի Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխում:

2.2.3. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները:

2.2.4. Ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ «ՀԿԴ») տեղաբաշխման համար և տեղաբաշխումից հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով:

2.2.5. Կազմակերպում է «ՆԱՍԴԱՔ ՕՄՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում (այսուհետ՝ «Բորսա») Պարտատոմսերի առևտրին թույլտվության գործընթացը, պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների, փաստաթղթերի) կազմումը և ներկայացումը Բորսա:

3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բանկը կազմակերպում է Բորսայում Պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման գործընթացը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման

րականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Պարտատոմսերի թողարկման գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր:

3.2. Պարտատոմսերը տեղաբաշխվում են Բորսայի տեղաբաշխման համակարգով ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

3.3. Պարտատոմսերի ձեռքբերման հայտերի ընդունումն ու դրա իրականացման/մերժման հետագա գործընթացը կարգավորվում է Բորսայի համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3.4. Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդին չեն կարող ներկայացվել.

3.4.1. գնման ոչ մրցակցային հայտ,

3.4.2. լրիվ բավարարմամբ հայտ:

3.5. Կողմերը հայտերի բավարարման կտրման նվազագույն գինը ԱՄՆ դոլարով տրանշի դեպքում սահմանում է 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար մեկ պարտատոմսի դիմաց, իսկ ՀՀ դրամով թողարկման դեպքում՝ 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ մեկ պարտատոմսի դիմաց, որից ցածր գնով ներկայացված հայտերը չեն բավարարվում:

3.6. Տեղաբաշխման արդյունքում չտեղաբաշխված ծավալը ձեռք է բերվում Բանկի կողմից 3.6 կետում նշված կտրման նվազագույն գնով:

3.7. 3.6 և 3.7 կետերում նշված տեղեկատվությունը հրապարակվում է տեղաբաշխման մասին հայտարարության մեջ:

3.8. Տեղաբաշխման աճուրդը կարող է հետաձգվել, ընդմիջվել կամ դադարեցվել, ինչպես նաև աճուրդի ընթացքում տեխնիկական ընդմիջում կարող է հայտարարվել Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, Բորսայի «Առևտրի ընդհանուր կանոններով» սահմանված կարգով: Տեղաբաշխումը կարող է չեղյալ կամ չկայացած համարվել Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:

4. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Բանկը կազմակերպում է Բորսայում Պարտատոմսերի առևտրին թույլտվության/ցուցակման գործընթացի իրականացումը՝ ներառյալ, պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Թողարկողի Պարտատոմսերի առևտրին թույլտվության գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր /այդ թվում՝ գրություններ, տեղեկանքներ և այլն/, ստորագրել, կատարել անհրաժեշտ վճարումներ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Թողարկողն իրավունք ունի՝

5.1.1. Բանկից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարում:

5.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Բանկի կողմից սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը:

5.1.3. Ողջամիտ և օրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին՝ ծառայության մատուցման (փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության) վերաբերյալ:

5.1.4. Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալ Բանկից:

5.2. Թողարկողը պարտավոր է՝

5.2.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները:

5.2.2. Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ Թողարկողի կողմից բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ:

5.2.3. Փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած այն վնասները, որոնք առաջացել են պետական լիազորված մարմինների կամ Պարտատոմսեր ձեռքբերող ներդրողների պահանջով:

5.2.4. Անհրաժեշտության դեպքում, սույն պայմանագրով տրված լիազորություններից բացի, Բանկին տալ լիազորագրեր սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցման համար:

5.2.5. Սույն պայմանագրի գործողության ընթացքում չփոփոխել Պարտատոմսերի տեղաբաշխման պայմանները (մասնավորապես՝ սույն Պայմանագրի 1.1.1.-1.1.17 կետերում նշվածները) և չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կսահմանափակեն տեղաբաշխման ընթացքը կամ կվատթարացնեն Պարտատոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները:

5.2.6. Բանկին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկ և Բորսա ներկայացվող տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների (ընթացիկ, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, էական փաստերի և տեղեկությունների) և դրանց բովանդակության վերաբերյալ:

5.2.7. Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների համար Բանկին վճարել սույն պայմանագրով սահմանված վճարները՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

5.2.8. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին այդ մասին:

5.2.9. Բանկի պահանջով կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

5.3. Բանկն իրավունք ունի՝

5.3.1. Թողարկողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

5.3.2. Թողարկողից ստանալ և օգտագործել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Թողարկողի վերաբերյալ անհրաժեշտ

տեղեկություններ, ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատության և լիարժեքության (ամբողջականության) վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ և փաստարկներ, այդ թվում՝ Թողարկողից պահանջել ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձի պարզաբանումները Թողարկողի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու նպատակով:

5.3.3. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում Թողարկողի հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ:

5.3.4. Հարցում կատարել Վարկային բյուրոներին Թողարկողի վարկերի և փոխկառությունների վերաբերյալ հիմնավոր և հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով:

5.3.5. Իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և չափով:

5.4. Բանկը պարտավոր է՝

5.4.1. Տեղաբաշխման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ Բորսայի անդամներին տեղեկատվություն տրամադրել Պարտատոմսերի տեղաբաշխման մասին:

5.4.2. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված՝ իր կողմից ստանձնած պարտականությունները:

5.4.3. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը սկսել ոչ ուշ, քան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու և Թողարկողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը Բանկին տրամադրելու հաջորդ օրվանից:

5.4.4. Պատշաճ որակով մատուցել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները:

5.4.5. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում:

5.4.6. ՀՀ օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

5.4.7. Պարտատոմսերի տեղաբաշխումից հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողին տրամադրել Պարտատոմսերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը տեղաբաշխման օրվա դրությամբ:

5.4.8. Թողարկողին տրամադրել տեղեկություններ տեղաբաշխման աճուրդի մասնակիցների և ներկայացված հայտերի վերաբերյալ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց Թողարկողը Բանկին վճարում է 994,000 (ինը հարյուր ինսունչորս հազար) ՀՀ դրամ սույն պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո Բանկի կողմից համապատասխան հաշիվը Թողարկողին ներկայացնելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6.2. Պարտատոմսերի՝ առևտրի թույլատրմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Թողարկողին է ներկայացնում իր կողմից ստորագրված մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտ, որը երկու օրվա ընթացքում Թողարկողի կողմից ստորագրվում է կամ այդ ժամկետի ընթացքում թերությունների հայտնաբերման դեպքում դրանք գրառվում են համապատասխան վավերաթղթում, որոնք Բանկը պարտավոր

ՀՀ իր հաշվին վերացնել փոխադարձ համաձայնեցված ժամկետում, որից հետո ստորագրվում է հանձնման-ընդունման ակտը:

6.3. Պարտատոմսերի, տեղաբաշխման և առևտրի թույլատրման հետ կապված բոլոր ծախսերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7.2. Կողմը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա ծագել է մյուս Կողմի՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:

7.3. Բորսայի կանոններով սահմանված կարգով Պարտատոմսերը առևտրին չթույլատրման համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե Բանկն իրականացրել է Պարտատոմսերի առևտրին թույլատրման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, սակայն առևտրին չթույլատրումը եղել է Բանկից անկախ պատճառներով:

7.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում Թողարկողը Բանկին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0,2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով: Տույժի վճարումը Թողարկողին չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:

7.4.1. Սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունների մատուցումից հրաժարվելու, ոչ պատշաճ կատարելու և/կամ սույն պայմանագիրը Բանկի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Բանկը Թողարկողին հետ է վերադարձնում սույն պայմանագրի 6.1.1 կետում նշված գումարը և վճարում է այդ գումարի 10 (տասը) տոկոսի չափով տուգանք, եթե սույն պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Թողարկողի կողմից սույն պայմանագրով նախատեսված՝ Թողարկողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու հետ:

7.4.2. Սույն պայմանագիրը Թողարկողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում Թողարկողի կողմից Բանկին վճարված 6.1.1 կետում նշված գումարը Բանկի կողմից հետ չի վերադարձվում, եթե սույն պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Բանկի կողմից սույն պայմանագրի 2.2. կետով սահմանված ծառայությունները ոչ պատշաճ կատարելու հետ:

7.5. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում այլ դրույթի (դրույթների) անվավերության: Կողմերը պարտավորվում են չվիճարկել պայմանագրի լրիվ կամ մասնակի անվավերությունը կամ իրավաբանական ուժը՝ պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու համար, և միաժամանակ պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ու գործողությունները պայմանագրի նպատակը և պայմանները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու ուղղությամբ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Սույն պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև առաջացած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Բանկն իրեն ծանոթացրել է ՀՀ-ում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

10.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

10.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ շաբաթ առաջ պատշաճ ծանուցելով:

10.4. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

10.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված բանկային, ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

10.6. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 19

ՀՎՀՀ՝ 02500518
թ/հ՝ 103002101519
ՀՀ կենտրոնական բանկ,
հեռ.՝ (+374 10) 59-23-23
ֆաքս.՝ (+374 10) 54-78-94

ԹՈՂԱՐԿՈՂ
«Առաջին Հիփոթեքային Ընկերություն»
ՈՒՎԿ ԱՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10

ՀՎՀՀ՝ 02572358
հ/հ՝ 1510001957100100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
հեռ.՝ (+374 10) 51 81 81, (+374 10) 51 89 89

ֆաքս.՝ (+374 10) 56 12 02

Գործադիր տնօրեն՝

Աշոտ Օսիպյան

Գլխավոր տնօրեն՝

Դավիթ Աթանեսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 9

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ «ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՎԿ ՍՊԸ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «30» հոկտեմբեր 2017թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, այսուհետ՝ Շուկա ստեղծող կամ Բանկ, ի դեմս Բանկի Կանոնադրության հիման վրա գործող Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, մի կողմից, և «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն, այսուհետ՝ Թողարկող, ի դեմս Թողարկողի Կանոնադրության հիման վրա գործող Գլխավոր տնօրեն Դավիթ Աթանեսյանի, մյուս կողմից, միասին անվանվելով կողմեր և հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն պայմանագրի իմաստով՝

- ✓ Արժեթղթեր կամ Պարտատոմսեր՝ «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի թողարկած
  - ✓ դրամային ապահովված հիփոթեքային պարտատոմսեր՝ 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տաս հազար) հատ քանակով, յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 10.5 (տաս ամբողջ հինգ տասներորդական) տոկոս արժեկտրոնային տոկոսադրույքով, արժեկտրոնների վճարման եռամսյակային պարբերականությամբ, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով,
  - ✓ դոլարային ապահովված հիփոթեքային պարտատոմսեր՝ 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 20,000 (քսան հազար) հատ քանակով, յուրաքանչյուրը 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 6.5 (վեց ամբողջ հինգ տասներորդական) տոկոս արժեկտրոնային տոկոսադրույքով, արժեկտրոնների վճարման եռամսյակային պարբերականությամբ, 24 (քսանչորս) ամիս շրջանառության ժամկետով:
- ✓ Բորսա՝ «ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն և դրա կողմից կառավարվող կազմակերպված առևտրի համակարգը՝ կարգավորվող շուկա:
- ✓ Կանոններ՝ Բորսայի դիտորդ խորհրդի կողմից հաստատված և ՀՀ ԿԲ կողմից գրանցված կանոնները, այդ թվում՝ շուկա ստեղծողի (այսուհետ տեքստում ՇՍ), կորպորատիվ արժեթղթերի առևտրի և այլ կանոններ:
- ✓ Մարքեթ-մեյքինգ՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձի/անձանց կողմից արժեթղթի/երի երկկողմանի՝ առքի և վաճառքի գնանշումը սահմանելու, արդյունավետ շուկայական գնագոյացումը կազմակերպելու, տվյալ արժեթղթի/երի շուկայի իրացվելիության որոշակի նախապես

սահմանված մակարդակ (արժեթղթով/երով գործարքների ծավալ) ապահովելու նպատակով իր անունից և իր հաշվին արժեթղթի/երի միաժամանակ և առքի և վաճառքի հայտերի ներկայացում կարգավորվող շուկայում սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում:

- ✓ ՇՍ կանոններ՝ «ՆԱՍԴԱՔ Օ ԷՄ ԷՔՍ Արմենիա» ԲԲԸ դիտորդ խորհրդի կողմից հաստատված և ՀՀ ԿԲ կողմից գրանցված «ՇՍ կանոններ»:
- ✓ Թույլատրելի գնանշման միջակայք կամ սպրեդ՝ ցանկացած պահին մարքեթ մեյքերի կողմից երկրորդային շուկայում Պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշման սահմանափակված միջակայք:

1.2. Սույն պայմանագրում կիրառվող մնացած հասկացությունները ունեն ՇՍ կանոններով սահմանված նշանակությունը, իսկ դրանով սահմանված չլինելու դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և(կամ) Կանոններով սահմանված նշանակությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Շուկա ստեղծողը, ՇՍ կանոններին համապատասխան, ունենալով Բորսայի կողմից շնորհված Արժեթղթերի շուկա ստեղծողի կարգավիճակ, սույն պայմանագրով սահմանված պայմաններով, Բորսայում իրականացնում է Թողարկողի Պարտատոմսերի շուկայի ստեղծումը (Մարքեթ-մեյքինգ), իսկ Թողակողը վճարում է դրա դիմաց Շուկա ստեղծողին՝ սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

3. ՄԱՐՔԵԹ-ՄԵՅՔԻՆԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Շուկա ստեղծողն իրականացնում է Մարքեթ-մեյքինգը ՇՍ կանոնների պարտադիր և անվերապահ պահպանմամբ:

3.2. Շուկա ստեղծողն իրականացնում է Մարքեթ-մեյքինգը հետևյալ պայմաններով՝

3.2.1. Առևտրային նստաշրջանի ընթացքում Շուկա ստեղծողի կողմից Թողարկողի Պարտատոմսերի ընթացիկ պահի սպրեդը չպետք է գերազանցի 7%-ը (յոթ տոկոսը)՝ համաձայն ՇՍ կանոնների:

3.2.2. Շուկա ստեղծողի կողմից Բորսայի յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի գնման և վաճառքի հայտում նշվող գնանշման նվազագույն ծավալը՝ դրամային պարտատոմսերի դեպքում 50 (հիսուն) հատ պարտատոմս, դոլարային պարատոմսերի դեպքում՝ 100 (հարյուր) հատ պարտատոմս:

3.3. Շուկա ստեղծողը որևէ կերպ սահմանափակված չէ Թողարկողի կողմից առաջարկվող գնանշման ցուցանիշներով և չի առաջնորդվում որևէ այլ կերպ Թողարկողի ցուցումներով մարքեթ-մեյքինգ իրականացնելիս:

3.4. Շուկա ստեղծողը կարող է դադարեցնել Պարտատոմսերի շուկայի ստեղծումը, միայն դրա մասին Թողարկողին 30 (երեսուն) օր առաջ նախօրոք գրավոր տեղեկացնելով: Սույն կետի խախտմամբ մարքեթ-

մեյքինգի ծառայությունների մատուցման միակողմանի դադարեցման դեպքում Շուկա ստեղծողը Թողարկողին վճարում է միանվագ տույժ՝ թողարկման անվանական ծավալի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով:

3.5. Պարտատոմսերի բացակայության հիմքով Շուկա ստեղծողի կողմից Մարքեթ-մեյքինգ չիրականացվելու դեպքում Շուկա ստեղծողի նկատմամբ Թողարկողի կողմից պատասխանատվության որևէ միջոց կամ տուժանք չի կարող կիրառվել:

4. ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի 2.1. կետում նշված ծառայությունների մատուցման դիմաց Թողարկողը Շուկա ստեղծողին վճարում է 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ծառայությունների մատուցման ողջ ժամանակահատվածի համար:

4.2. Սույն պայմանագրի 4.1. կետում նշված ծառայությունների վճարը Թողարկողը փոխանցում է սույն պայմանագրում նշված Շուկա ստեղծողի թղթակցային հաշվին Պարտատոմսերը Բորսայում ցուցակելու և Շուկա ստեղծողի կողմից Բորսայում Պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ ստանալու օրվանից հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում:

4.3. Բորսայում Արժեթղթերի շրջանառության վերջին օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում Կողմերի միջև ստորագրվում է Պարտատոմսերը Բորսայում ցուցակելու օրվանից մինչև Բորսայում Արժեթղթերի շրջանառության վերջին օրը ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունների ընդունման ակտը, որում նշվում է տվյալ ժամանակահատվածում Բորսայի առևտրային հարթակում Թողարկողի Պարտատոմսերով կատարված գործարքների ընդհանուր արժեքային ծավալը՝ որպես ծառայությունների մատուցումը հավաստող փաստ (գործարքների առկայության դեպքում):

4.4. Սույն պայմանագրի 4.2. կետում նշված ծառայությունների վճարը վերադարձվում է Թողարկողին, եթե Շուկա ստեղծողը չի մատուցում սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ ներառյալ՝ սույն պայմանագրի 5.4 կետում նշված հիմքերով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Շուկա ստեղծողի կողմից սույն պայմանագրով իր պարտականությունները չկատարելու կամ սույն պայմանագրի 3-րդ գլխով սահմանված պայմանները խախտելու արդյունքում Թողարկողին հասցված վնասը, ներառյալ՝ բաց թողնված օգուտը, ենթակա է փոխհատուցման:

5.2. Սույն պայմանագրի 4-րդ գլխով սահմանված իր պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը Շուկա ստեղծողին վճարում է տույժ՝ վճարման ենթակա գումարի 0.5 տոկոսի չափով՝ վճարման կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.3. Շուկա ստեղծողը պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունների չկատարման կամ սույն պայմանագրով սահմանված պայմանները խախտելու համար, եթե դրա պատճառ է հանդիսացել ՀՀ օրենսդրության կամ Կանոնների փոփոխությունը և դրանց համապատասխանելու անհրաժեշտությունը: Եթե սույն պայմանագրի որևէ դրույթի կատարումը հետագայում հանգեցնում է ՀՀ օրենսդրության կամ Կանոնների խախտմանը, ապա կողմերը բարեխղճորեն բանակցում և համագործակցում են տվյալ դրույթը այնպես խմբագրելու (փոփոխելու համար), որ այն մի կողմից, շարունակի առավելագույնս արտացոլել նախկին խմբագրությամբ այդ դրույթի իմաստը և նպատակը, մյուս կողմից չհակասի նոր ուժի մեջ մտած ՀՀ օրենսդրության կամ Կանոնների դրույթներին:

5.4. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ պայմանների խախտման պատճառ են հանդիսացել կողմերի կամքից անկախ և նրանց վերահսկողությունից դուրս, անկանխատեսելի հանգամանքները, որոնց թվին, ի թիվս այլոց, դասվում են առևտրային համակարգի անսարքություններն ու խափանումները:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի գործողության կապակցությամբ առաջացած Կողմերի միջև վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ 10 օրվա արդյունքում լուծման չգալու դեպքում՝ ՀՀ դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է սույն պայմանագրով սահմանված ընդունման-հանձնման ակտի երկկողմանի հաստատմամբ և վերջնական վճարումների կատարման հիմքով:

7.2. Սույն պայմանագիրը ենթակա է փոփոխությունների միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր փաստաթղթի ձևով, ընդ որում եթե, ելնելով 5.3 կետում նշված հանգամանքներից Շուկա ստեղծողը նախաձեռնում է սույն պայմանագրի փոփոխություն Թողարկողը պարտավոր է համաձայնել այդպիսի փոփոխությանը, եթե այդպիսի փոփոխությունը բխում է ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով սահմանված պահանջներից:

7.3. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ՝ օժտված հավասարազոր իրավաբանական ուժով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂ

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 19

ՀՎՀՀ՝ 02500518
թ/հ՝ 103002101519
ՀՀ կենտրոնական բանկ,
հեռ.՝ (+374 10) 59-23-23
ֆաքս.՝ (+374 10) 54-78-94

Գործադիր տնօրեն՝

_____ Աշոտ Օսիպյան

ԹՈՂԱՐԿՈՂ

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10

ՀՎՀՀ՝ 02572358
հ/հ՝ 1510001957100100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
հեռ.՝ (+374 10) 51 81 81, (+374 10) 51 89 89
ֆաքս.՝ (+374 10) 56 12 02

Գլխավոր տնօրեն՝

_____ Դավիթ Աթանեսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 10

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Երևան «30» հոկտեմբեր 2017թ.

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Թողարկող») ի դեմս Գլխավոր տնօրեն Դավիթ Աթանեսյանի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Էդգար Ալբերտի Էվոյանը (Նույնականացման քարտի համար՝ 0Q0003806 տրված 011-ի կողմից, 20.07.2012թ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 9 շ., բն 84,) (այսուհետ՝ «Հսկող») մյուս կողմից, միասին անվանվելով նաև «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի շրջանակներում Հսկողը Թողարկողին մատուցում է Թողարկողի Ընդհանուր Ժողովի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի «Ապահովված հիփոթեքային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու վերաբերյալ» թիվ 5 որոշման շրջանակներում 100,000,000 ՀՀ դրամ ծավալով դրամային և 500,000 ԱՄՆ դոլար ծավալով դոլարային ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների նկատմամբ հսկողություն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հսկողը պարտավոր է Նշանակել հսկող ֆիզիկական անձ աշխատակից (այսուհետ՝ Հսկող), որը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի» մասին ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական դաշտի շրջանակներում կգրանցվի ՀՀ կենտրոնական բանկում և կիրականացնի օրենքով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

Մասնավորապես, Հսկողը պարտավոր է՝

2.1.1. Գործել ելնելով հիփոթեքային պարտատոմսերի ներդրողների շահերից, իրականացնել իր իրավունքները և կատարել ներդրողների նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով,

2.1.2. Թողարկողի կողմից հիփոթեքային պարտատոմսերի թողարկման գործունեությունը կարգավորող օրենքների եւ այլ իրավական ակտերի խախտումների հայտնաբերման դեպքում դրանց մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Կենտրոնական բանկին:

2.1.3. Նախքան հիփոթեքային պարտատոմսերի թողարկումը հավաստագիր տրամադրել ակտիվների՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի» մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին համապատասխանության և հիփոթեքային պարտատոմսերի գծով ստանձնելիք պարտավորությունների համարժեքության վերաբերյալ,

2.1.4. Վերահսկել Թողարկողի մոտ Օրենքի պահանջներին համապատասխան եւ հիփոթեքային պարտատոմսերի գծով պահանջներին համարժեք չափով ապահովման միջոցների մշտական առկայությունը,

2.1.5. Օժանդակել ապահովման միջոցների ռեգիստրից ակտիվների դուրսգրմանը, եթե մնացած ակտիվները բավարար են հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունների, ինչպես նաեւ լրացուցիչ ակտիվների նվազագույն չափը պահպանելու համար.

2.2. Հսկողն իրավունք ունի՝

2.2.1. ցանկացած ժամանակ ստուգելու Թողարկողի կողմից կատարվող գրառումները, ինչպես նաեւ ցանկացած ժամանակ պահանջելու տեղեկություններ, որոնք առնչվում են հիփոթեքային պարտատոմսերին եւ ապահովման միջոց հանդիսացող ակտիվներին,

2.3. Թողարկողը պարտավոր է՝

2.3.1. ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան հաշվառել հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունների ապահովման միջոցները՝ ապահովման միջոցների ռեգիստրի վարման միջոցով:

2.3.2. Յուրաքանչյուր շաբաթ Հսկողին տրամադրել փաստացի ընդհանուր դրամական հոսքերի ժամանակացույցը, ինչպես նաև վաղաժամկետ մարումների և չվճարումների մասին տեղեկատվությունը: Սույն կետով սահմանված ժամանակացույցում նշված դրամական հոսքերի մասին տեղեկությունները պետք է հնարավորություն ընձեռեն նույնականացնել այն ակտիվները, ներառյալ՝ հիփոթեքային վարկերը, փոխարինող ակտիվները, որոնցից ստացվել են այդ դրամական հոսքերը:

2.3.3. Հսկողին տրամադրել անհրաժեշտ հաշվետվական գործիքներ՝ ըստ վարկերի տարբեր բնութագրիչների անհատական դրամական հոսքերի խմբավորման և վերլուծության համար:

2.3.4. Հսկողին տրամադրել սպասվող ընդհանուր դրամական հոսքերի ժամանակացույցը, որը պետք է հաշվի առնի վաղաժամկետ վճարումները և չվճարումները:

2.3.5. Պահպանել ապահովման միջոց հանդիսացող ակտիվների հետ կապված փաստաթղթերի բնօրինակները, պայմանով, որ Թողարկողն առանց Հսկողի համաձայնության չի փոփոխի, փոխարինի կամ անվավեր դարձնի այդ փաստաթղթերը:

2.3.6. Ապահովման միջոցների ռեգիստրում ներառել ապահովման միջոցների վերաբերյալ առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

1) հիփոթեքային վարկերի դեպքում՝ վարկային պայմանագրերի կնքման ամսաթիվը, համարը, վարկի գումարը, տոկոսադրույքը եւ դրանց արժույթը, ժամկետը, վարկի գումարի եւ տոկոսների մարման գրաֆիկը, վարկի մնացորդային արժեքը, վարկի գումարի եւ գրավի առարկայի արժեքի հարաբերակցությունը, վարկերի ապահովություն հանդիսացող գրավի առարկան, վերջինիս նկարագրությունը, այդ թվում՝ գտնվելու վայրը (հասցեն), շինության տեսակը, հարկը (հարկայնությունը), իսկ հողամասի կառուցապատման իրավունքի դեպքում՝ իրականացման վայրը, շուկայական արժեքը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ արժեքները գնահատված լինելու դեպքում նաեւ գնահատված այլ արժեքները, ինչպես նաեւ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են գրավի առարկայի նույնականացման համար.

2) փոխարինող եւ լրացուցիչ ակտիվների տեսակը, շուկայական արժեքը, անվանական արժեքը.

3) ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

2.3.7. Հսկողի պահանջով նույն աշխատանքային օրվա ընթացքում նրան տրամադրել տեղեկություններ ռեգիստրում գրանցված ակտիվների դիմաց ստացված գումարների, ինչպես նաեւ այդ ակտիվների հետ կապված ցանկացած փոփոխությունների վերաբերյալ, որոնք կարող են նշանակություն ունենալ հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերի համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները Հսկողի կողմից մատուցվում են անվճար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո Կողմերից որևէ մեկը առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության իրավունք չունի երրորդ անձանց տրամադրել կամ այլ կերպ հրապարակել այն տեղեկությունները, որոնք նրան տրամադրվել են Պայմանագրի կատարման համար, կամ նրան հայտնի է դարձել Պայմանագրով իր պարտականությունները կատարելու ընթացքում, բացառությամբ ՀՀ օրենդրությամբ նախատեսված տրամադրման դեպքերի:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, ինչպես նաև միմյանց հասցված վնասների համար Կողմերը

պատասխանատվություն են կրում Պայմանագրի պայմաններին և ՀՀ օրենսդրության նորմերին համապատասխան:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:

6.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ շաբաթ առաջ պատշաճ ծանուցելով:

6.3. Պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

6.4. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված բանկային, ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

6.5. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՍԿՈՂ **Էդգար Ալբերտի Էվոյան** Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 9 շ., բն 84 Նույնականացման քարտի համար՝ 000003806 տրված 011-ի կողմից, 20.07.2012թ. ՀԾՀ՝ 3911840500 հ/հ՝ 1510023949230200 «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ Հեռ՝ (+374 93) 46-66-30 _____Էդգար Ալբերտի Էվոյան	ԹՈՂԱՐԿՈՂ **«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ուվկ ԱՊԸ** Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 ՀՎՀՀ՝ 02572358 հ/հ՝ 1510001957100100 «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ հեռ.՝ (+374 10) 51 81 81, (+374 10) 51 89 89 ֆաքս.՝ (+374 10) 56 12 02 Գլխավոր տնօրեն՝ _____Դավիթ Աթանեսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 11

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 2

ք. Երևան **«13» նոյեմբեր 2017 թ.**

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ /այսուհետ՝ Պատվիրատու/, ի դեմս գլխավոր տնօրեն Դավիթ Աթանեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն /այսուհետ՝ Դեպոզիտարիա/ ի դեմս տնօրեն Վահան Ստեփանյանի և և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, /այսուհետ՝ Հաշվի օպերատոր/, ի դեմս Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, որը, ղեկավարվելով 18.04.2017թ. կնքված «Հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի անդամի կարգավիճակի շնորհման» թիվ ՀԱ-09/1 պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով, սույն պայմանագրի կնքման շրջանակներում գործում է նաև Դեպոզիտարիայի անունից, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Դեպոզիտարիան պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Պատվիրատուին մատուցել ՀՀ օրենսդրությամբ և Դեպոզիտարիայի կանոններով նախատեսված ռեեստրի վարման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների գինը:

1.2. Սույն պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները Պատվիրատուին են մատուցվում Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

1.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև սույն պայմանագրի առարկայի հետ կապված կողմերի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը սահմանվում և կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով (այսուհետ՝ Իրավական ակտեր), որոնց Պատվիրատուն ծանոթ է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***<u>Դեպոզիտարիան պարտավոր է</u>***.

2.1.1. Ապահովել անհրաժեշտ տեխնիկական և իրավական պայմաններ, որպեսզի Ծառայությունները մատուցվեն պատշաճ որակով, և ամբողջ ծավալով՝ ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:

2.2. <u>Հաշվի օպերատորը պարտավոր է.</u>

2.2.1. Դեպոզիտարիայի ծառայությունները միջնորդավորել և Պատվիրատուին մատուցել պատշաճ որակով և ժամանակին՝ համաձայն ՀՀ նորմատիվ իրավական ակտերի, Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոնների.

2.2.2. օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց և Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում Պատվիրատուին տեղեկացնել Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում զետեղելը:

2.3. <u>Պատվիրատուն պարտավոր է.</u>

2.3.1. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել իր կողմից տրամադրված տվյալների հետ կապված անճշտությունների, դրանց փոփոխությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.3.2. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել Պատվիրատուի վերակազմակերպման, լուծարման կամ սնանկ ճանաչման գործընթացների սկսման, ինչպես նաև այդ գործընթացների ավարտի մասին.

2.3.3. մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված կարգով և չափով:

2.4. <u>Դեպոզիտարիան իրավունք ունի.</u>

2.4.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից իրականացվող՝ արժեթղթերի ռեեստրի վարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկերը բացառելու և օտարերկրյա պետությունների նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության համադրման նպատակով) և կարգով Պատվիրատուի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Դեպոզիտարիայի կոնտրագենտներին և/կամ ՀՀ և օտարերկրյա իրավասու մարմիններին:

2.5. <u>Հաշվի օպերատորն իրավունք ունի.</u>

2.5.1. Հետևել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը.

2.5.2. հրաժարվել սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված կարգով ծառայությունները մատուցելուց, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.6. <u>Պատվիրատուն իրավունք ունի.</u>

2.6.1. Դեպոզիտարիայից և Հաշվի օպերատորից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին, պատշաճ որակով և լրիվ ծավալով մատուցում:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրով մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններին և դրանց հիման վրա ընդունված Հաշվի օպերատորի սակագներին համապատասխան՝ դրանցով սահմանված կարգով ու ժամկետներում: Դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոնները և Հաշվի օպերատորի սակագները զետեղված են Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել տույժ՝ սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում «ՀԱՅԱՍՏԱՆԻ Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններով և Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով և կարգով:

3.3. Հաշվի օպերատորը իրավունք ունի Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Պատվիրատուի՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժութային կամ դեպո հաշիվներից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Դեպոզիտարիային տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են կանոններով սահմանված հանձնարարականների հիման վրա:

4.3. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Հաշվի օպերատորի միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար:

4.4. Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում իր միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված՝ ոչ օրինաչափ գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուին պատճառած վնասների համար:

4.5. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի արժեթղթերի ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.6. Եթե Դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, ապա այն Պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Դեպոզիտարիայի մեղքով:

4.7. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի մոտ սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը:

6.2. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել նշված տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

6.3. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների համար, պատասխանատվություն են կրում նշված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ տարածման համար:

7. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ

7.1. Պայմանագրի կողմերի միջև, բացառությամբ սույն պայմանագրի 2.2.2. կետի, ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված ընկերության կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.2. Սույն պայմանագրի կողմը իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս կողմի գրավոր

համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երեք հավասարազոր օրինակից՝ մեկ օրինակ Դեպոզիտարիային, մեկը՝ Հաշվի օպերատորին, մյուսը՝ Պատվիրատուին:

8.5. Պայմանագրի կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

8.6. Պատվիրատուն հավաստում է, որ սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ԱՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10
հեռ.՝ (+374 10) 51 81 81,
ՀՎՀՀ՝ 02572358
Վեբ www.firstmortgage.am
Էլ.Փոստ info@firstmortgage.am

Գլխավոր տնօրեն՝

Դ. Աթանեսյան

ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ

Հասցե. ՀՀ, ք.Երևան 0010, Միհր Մկրտչյան 5բ
Հեռ. +374 10 543 321
Էլ. հասցե. www.nasdaqomx.am
էլ. փոստ. info@nasdaqomx.am

Հաշվի օպերատոր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ք. Երևան, Պուշկինի 19
ՀՀ ԿԲ Հ/Հ 103002101519
Հեռ.՝ 54 79 35

Գործադիր տնօրեն՝

Ա. Օսիպյան

Կ.Տ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 1

ք. Երևան **«13» նոյեմբեր 2017 թ.**

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ն /այսուհետ՝ Պատվիրատու/, ի դեմս գլխավոր տնօրեն Դավիթ Աթանեսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն /այսուհետ՝ Դեպոզիտարիա/ ի դեմս տնօրեն Վահան Ստեփանյանի և և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, /այսուհետ՝ Հաշվի օպերատոր/, ի դեմս Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի, որը, ղեկավարվելով 18.04.2017թ. կնքված «Հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի անդամի կարգավիճակի շնորհման» թիվ ՀԱ-09/1 պայմանագրով և Դեպոզիտարիայի կանոններով, սույն պայմանագրի կնքման շրջանակներում գործում է նաև Դեպոզիտարիայի անունից, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Դեպոզիտարիան պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Պատվիրատուին մատուցել ՀՀ օրենսդրությամբ և Դեպոզիտարիայի կանոններով նախատեսված ռեեստրի վարման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների գինը:

1.2. Սույն պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները Պատվիրատուին են մատուցվում Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

1.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև սույն պայմանագրի առարկայի հետ կապված կողմերի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը սահմանվում և կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով (այսուհետ՝ Իրավական ակտեր), որոնց Պատվիրատուն ծանոթ է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***<u>Դեպոզիտարիան պարտավոր է</u>***.

2.1.1. Ապահովել անհրաժեշտ տեխնիկական և իրավական պայմաններ, որպեսզի Ծառայությունները մատուցվեն պատշաճ որակով, և ամբողջ ծավալով՝ ՀՀ կենտրոնական բանկում գրանցված Դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:

2.2. <u>Հաշվի օպերատորը պարտավոր է.</u>

2.2.1. Դեպոզիտարիայի ծառայությունները միջնորդավորել և Պատվիրատուին մատուցել պատշաճ որակով և ժամանակին՝ համաձայն ՀՀ նորմատիվ իրավական ակտերի, Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոնների.

2.2.2. օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց և Դեպոզիտարիայի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում Պատվիրատուին տեղեկացնել Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում զետեղելը:

2.3. <u>Պատվիրատուն պարտավոր է.</u>

2.3.1. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել իր կողմից տրամադրված տվյալների հետ կապված անճշտությունների, դրանց փոփոխությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.3.2. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Դեպոզիտարիային տեղեկացնել Պատվիրատուի վերակազմակերպման, լուծարման կամ սնանկ ճանաչման գործընթացների սկսման, ինչպես նաև այդ գործընթացների ավարտի մասին.

2.3.3. մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված կարգով և չափով:

2.4. <u>Դեպոզիտարիան իրավունք ունի.</u>

2.4.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Դեպոզիտարիայի կողմից իրականացվող՝ արժեթղթերի ռեեստրի վարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկերը բացառելու և օտարերկրյա պետությունների նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության համադրման նպատակով) և կարգով Պատվիրատուի վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Դեպոզիտարիայի կոնտրագենտներին և/կամ ՀՀ և օտարերկրյա իրավասու մարմիններին:

2.5. <u>Հաշվի օպերատորն իրավունք ունի.</u>

2.5.1. Հետևել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը.

2.5.2. հրաժարվել սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված կարգով ծառայությունները մատուցելուց, եթե Պատվիրատուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.6. <u>Պատվիրատուն իրավունք ունի.</u>

2.6.1. Դեպոզիտարիայից և Հաշվի օպերատորից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին, պատշաճ որակով և լրիվ ծավալով մատուցում:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրով մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններին և դրանց հիման վրա ընդունված Հաշվի օպերատորի սակագներին համապատասխան՝ դրանցով սահմանված կարգով ու ժամկետներում: Դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոնները և Հաշվի օպերատորի սակագները զետեղված են Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել տույժ՝ սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում «ՀԱՅԱՍՏԱՆԻ Դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններով և Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով և կարգով:

3.3. Հաշվի օպերատորը իրավունք ունի Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Պատվիրատուի՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժութային կամ դեպո հաշիվներից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Դեպոզիտարիային տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են կանոններով սահմանված հանձնարարականների հիման վրա:

4.3. Դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Հաշվի օպերատորի միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար:

4.4. Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում իր միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված՝ ոչ օրինաչափ գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուին պատճառած վնասների համար:

4.5. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի արժեթղթերի ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.6. Եթե Դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, ապա այն Պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Դեպոզիտարիայի մեղքով:

4.7. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի մոտ սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը:

6.2. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել նշված տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

6.3. Դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների համար, պատասխանատվություն են կրում նշված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ տարածման համար:

7. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ

7.1. Պայմանագրի կողմերի միջև, բացառությամբ սույն պայմանագրի 2.2.2. կետի, ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված ընկերության կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.2. Սույն պայմանագրի կողմը իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս կողմի գրավոր

համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երեք հավասարազոր օրինակից՝ մեկ օրինակ Դեպոզիտարիային, մեկը՝ Հաշվի օպերատորին, մյուսը՝ Պատվիրատուին:

8.5. Պայմանագրի կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

8.6. Պատվիրատուն հավաստում է, որ սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ԱՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10
հեռ.՝ (+374 10) 51 81 81,
ՀՎՀՀ՝ 02572358
Վեբ www.firstmortgage.am
Էլ.Փոստ info@firstmortgage.am

Գլխավոր տնօրեն՝

Դ. Աթանեսյան

ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ

Հասցե. ՀՀ, ք.Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ
Հեռ. +374 10 543 321
Էլ. հասցե. www.nasdaqomx.am
էլ. փոստ. info@nasdaqomx.am

Հաշվի օպերատոր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ք. Երևան, Պուշկինի 19
ՀՀ ԿԲ Հ/Հ 103002101519
Հեռ.՝ 54 79 35

Գործադիր տնօրեն՝

Ա. Օսիպյան

ՀԱՎԵԼՎԱԾ 12

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

«Առաջին Հիփոթեքային Ընկերության» կողմից AMFMGCB21ER3 տարբերակիչ ծածկագրով թողարկվող պարտատոմսերի ապահովման միջոցների և պարտատոմսերի գծով ստանձնելիք պարտավորությունների համարժեքության վերաբերյալ

Սույն գրությամբ տեղեկացնում եմ, որ մանրամասն ուսումնասիրել եմ «Առաջին Հիփոթեքային Ընկերության» կողմից AMFMGCB21ER3 տարբերակիչ ծածկագրով թողարկվող պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի վարկային գործերը, գրավի վկայականների բնօրինակները և հավաստիացնում եմ, որ 06.11.2017թ. դրությամբ՝

1. Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերը և գրավադրված գույքերը բավարարում են «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին,
2. ապահովման միջոց հանդիսացող վարկերի անվանական արժեքների գումարային մեծությունը գերազանցում է հիփոթեքային պարտատոմսերի անվանական արժեքների գումարային մեծությանը,
3. ապահովման միջոցներ հանդիսացող վարկերի դիմաց ստացվելիք գումարները գերազանցում են հիփոթեքային պարտատոմսերի դիմաց վճարվելիք գումարներին,
4. ապահովման միջոց հանդիսացող վարկերի զուտ ներկա արժեքը գերազանցում է հիփոթեքային պարտատոմսերի գծով բոլոր պարտավորությունների զուտ ներկա արժեքի գումարը օրենքով սահմանված 5 տոկոսը գերազանցող մեծությամբ:

Հսկող՝ Էդգար Էվոյան

06.11.2017թ.

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

«Առաջին Հիփոթեքային Ընկերության» կողմից AMFMGCB22ER1 տարբերակիչ ծածկագրով թողարկվող պարտատոմսերի ապահովման միջոցների և պարտատոմսերի գծով ստանձնելիք պարտավորությունների համարժեքության վերաբերյալ

Սույն գրությամբ տեղեկացնում եմ, որ մանրամասն ուսումնասիրել եմ «Առաջին Հիփոթեքային Ընկերության» կողմից AMFMGCB22ER1 տարբերակիչ ծածկագրով թողարկվող պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող վարկերի վարկային գործերը, գրավի վկայականների բնօրինակները և հավաստիացնում եմ, որ 06.11.2017թ. դրությամբ՝

1. Պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքային վարկերը և գրավադրված գույքերը բավարարում են «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին,
2. ապահովման միջոց հանդիսացող վարկերի անվանական արժեքների գումարային մեծությունը գերազանցում է հիփոթեքային պարտատոմսերի անվանական արժեքների գումարային մեծությանը,
3. ապահովման միջոցներ հանդիսացող վարկերի դիմաց ստացվելիք գումարները գերազանցում են հիփոթեքային պարտատոմսերի դիմաց վճարվելիք գումարներին,
4. ապահովման միջոց հանդիսացող վարկերի զուտ ներկա արժեքը գերազանցում է հիփոթեքային պարտատոմսերի գծով բոլոր պարտավորությունների զուտ ներկա արժեքի գումարը օրենքով սահմանված 5 տոկոսը գերազանցող մեծությամբ:

Հսկող՝ Էդգար Էվոյան

06.11.2017թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 13

Գործարքի կոդ: 460-20150130-90-235739
Գործարքի ծածկագիր: WWNBPR

Լիազորագիրը տրված է 3/ երեք/ օրինակից

Լ Ի Ա Զ Ո Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ,
Ք. ԵՐԵՎԱՆ, ՀՈՒՆՎԱՐԻ ԵՐԵՍՈՒՆԻՆ 30.01. 2015թ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ

Ես՝ **ՆՇԱՆ ԱԹԻՆՉՅԱՆՍ** , անձնագիր՝ 488545871 տրված Ազգային Անձնագրային Կենտրոն-ի կողմից 12/11/2013-ին Բնակվող՝ համաձայն իր հայտարարության՝ Ամիրյան 1

Լ Ի Ա Զ Ո Ր ՈՒ Մ ԵՄ **ԴԱՎԻԹ ՎԱԼՏԵՐԻ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ** ծնված՝ 15/04/1973թ., անձնագիր՝ AK0699482 տրված 004-ի կողմից 04/02/2011-ին, ՀԾՀ՝ 2504730101, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԲԱԲԱՅԱՆ Փ., 36Շ, 23ԲՆ

իմ անունից իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կապված Հայաստանի Հանրապետությունում «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ-ում ինձ պատկանող բաժնեմասի կառավարման հետ, այդ թվում՝ ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելու և քվեարկելու լիազորություններով, ինչպես նաև քվեարկել իմ փոխարեն Ընկերության Խորհրդի նիստերին:

Իրականացնել «Արթքար քոնսթրաքշն» ՍՊԸ-ում ինձ, որպես միակ մասնակցի պատկանող իրավունքները, ներառյալ ընկերության կանոնադրությամբ ընդհանուր ժողովին վերապահված իրավունքները:
Իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կապված Հայաստանի Հանրապետությունում «Միջազգային խորհրդատվական խումբ» ՓԲԸ-ում ինձ պատկանող բաժնետոմսի կառավարման հետ, այդ թվում՝ ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելու և քվեարկելու լիազորություններով, ինչպես նաև քվեարկել իմ փոխարեն Ընկերության Խորհրդի նիստերին:
Այդ նպատակով իմ անունից կնքել գործարքներ, հանդես գալ նոտարական գրասենյակում և ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններում,Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց ռեգիստրում,Կենտրոնական դեպոզիտարիայում, այդ թվում ՀՀ Կենտրոնական բանկում, կատարել բոլոր այն գործողությունները, որոնք կապված կլինեն վերոնշյալ լիազորությունների իրականացման հետ, այդ թվում կատարել գրանցման աշխատանքներ, վճարումներ, ստանալ դրամական միջոցներ ու փաստաթղթեր, իմ անունից ստորագրել անհրաժեշտ փաստաթղթեր և տալ հայտարարություններ:
Լիազորագիրը տրված է երեք տարի ժամկետով: Լիազորագիրը տրված է վերալիազորման իրավունքով:

Լիազորող՝ ---------- NSHAN ATINJIAN

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ ԵՐԵՍՈՒՆԻՆ

սույն լիազորագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ ԱՍՏՂԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՍ կողմից:
Լիազորագիրը ստորագրված է քաղ՝ **ՆՇԱՆ ԱԹԻՆՉՅԱՆԻ** կողմից՝ իմ ներկայությամբ:
Նրա ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված:

Գրանցված է սեղանամատյանում՝ ---------- ով

Գանձված է պետական տուրք 2000 դրամ և ծառայության վճար 1500 դրամ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

Նոտար՝ Աստղինե Սարգսյան

Էջ 1/1

ՀԱՎԵԼՎԱԾ 14

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Պուշկինի 19
Հեռախոս՝
Ֆաքս՝(+37410) 574812
Էլ.փոստ՝support@armsoft.am

Տպված է՝09/11/2017 10:36 (UTC+04:00)

Բյուջետային փոխանցում N 158

Ամսաթիվ	**09/11/2017**	Նույնացուցիչ	**e9514930-66bd-4717-8e88-5f6817b67141**
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1510001957100100	**900005016119**	**AMD**	**50,000.00**
Վճարողի անվանում	**«ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՎԿ ՍՊԸ**		
Վճարողի բանկ	**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**		
ՀՎՀՀ	**02572358**		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	**23**		
Շահառուի անվանում	**Կենտրոնական բանկ**		
Գումարը բառերով	**Հիսուն հազար դրամ**		
Նպատակ	**<Առաջին հիփոթեքային ընկերություն>ՈՒՎԿ ՍՊԸ-ի հիփոթեք. պարտատոմսերի թողարկման նպատակով մշակված ազդագրի ՀՀ ԿԲ-ում գրանցման համար պետական տուրք**		

Երկրորդ ստորագրող	**Գայանե Կորեկյան**	Առաջին ստորագրող	**Դավիթ Աթանեսյան**
Ամսաթիվ	**09/11/2017 10:14:56.000**	Ամսաթիվ	**09/11/2017 10:19:44.000**
Սարքի անվանում	**DIGIPASS GO ընտանիքի սարք**	Սարքի անվանում	**DIGIPASS GO ընտանիքի սարք**
Սարքի սերիալ N	**3565600845**	Սարքի սերիալ N	**3565600852**
Ստորագրություն	**299176**	Ստորագրություն	**657332**

Կատարված է բանկի կողմից